

**«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ**

ՆԱԽԱԲԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (այսուհետ՝ ՀՊՄՀ, բուհ, ՄՈՒՀ կամ համալսարան) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության ներկայացրած դիմումի համաձայն:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959-Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, փորձագետների առջև դրված էր երկու խնդիր.

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Եվրոպական բրադրագույն կրթութական տարածք (այսուհետ՝ ԵԲԿՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Այս զեկույցը պարունակում է համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԵԲԿՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ	4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ` ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ	4
ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ` ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՀՊՄՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ	11
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	20
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ.....	20
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ.....	20
ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ.....	24
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	24
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	26
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ.....	29
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ.....	39
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ	48
V. ՊՐՈՑԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԾԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ.....	54
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ	60
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ	67
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ.....	72
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ.....	76
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ	82
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ` ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ	89
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	90
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ	90
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ.....	92
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ.....	96
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	98
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....	100

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՍՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՀՊՄՀ ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Արտաքին գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ համալսարանը երրորդ անգամ է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց: Փորձաքննության ընթացքում դիտարկվել են նախորդ գործընթացից հետո հաստատության ունեցած առաջընթացը, Թերությունների վերացման ծրագրով նախատեսված բարելավումների ազդեցությունը համալսարանի գործունեության տիրույթների վրա:

Նախորդ հավատարմագրումից հետո վերանայվել է բուհի առաքելությունը՝ առավել շեշտադրելով մանկավարժական ուղղվածությունը: Փորձագիտական խումբը գնահատման ժամանակ հաշվի է առել, որ ՀՊՄՀ-ի առաքելությունն է կրթության, սոցիալական, հումանիտար, բնական գիտությունների, մշակույթի և արվեստի ոլորտներում ՀՀ ազգային և միջազգային աշխատաշուկայում մրցունակ, մասնագիտական կայուն գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ ունեցող, սոցիալական պատասխանատվությամբ, ազգային, ժողովրդավարական, հումանիստական արժեքներով առաջնորդվող և դրանք տարածող մասնագետ-մանկավարժների պատրաստումը բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի որակավորումներով: Բուհը հստակեցրել է իր ռազմավարական նպատակները, պետք է նշել, դրանց մի մասը բավականին հավակնոտ է (օրինակ դառնալ հետազոտական համալսարան)՝ հաշվի առնելով, որ բուհում առկա է ֆինանսական ռեսուրսների սղություն: Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ բուհի համար այս կարևոր փուլում, երբ Ակադեմիական քաղաքում ստեղծվելու է առանձին մանկավարժական կլաստեր, հստակեցվեն բուհի ռազմավարական առաջնահերթությունները՝ բուհի առկա պոտենցիալի գնահատմամբ:

Բուհի կողմից կարևորվում է 21-րդ դարի հմտությունների լայն տիրապետմամբ ուսուցչի պարտարստումը: ՀՊՄՀ ղեկավար կազմը և Հոգաբարձուների խորհուրդը 21-րդ դարի ուսուցչի կերպարը սահմանում են հետևյալ կերպ. պատրաստել հետազոտող, քննադատական մտածելակերպ ունեցող մանկավարժներ, ովքեր ունակ կլինեն կիրառելու թվային տեխնոլոգիաները և պատրաստ կլինեն աշխատելու նոր սերնդի հետ: Փորձագիտական խումբը կարևոր է համարում 21-րդ դարի ուսուցչի բնութագրի արտահայտումը առաքելության մեջ և տեսլականում, դրա գաղափարի տարածման աշխատանքների իրականացումը բուհի ներքին և արտաքին շահակիցների շրջանում, ինչպես նաև կրթական ծրագրերի բովանդակության մեջ դրա արտահայտումը:

ՀՊՄՀ-ն իրականացնում է կրթություն ՈԱՇ-ի 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակներին համապատասխան: ՄՈՒՀ-ը ներկայումս ունի բակալավրի 44, մագիստրոսի 64 և հետազոտողի 5 կրթական ծրագրեր: Նախորդ հավատարմագրման արդյունքները հաշվի առնելով՝ բուհն իրականացրել է մասնագիտական կրթական ծրագրերի վերանայումներ

համաձայն ՈԱՇ-ի և որակավորումների ոլորտային շրջանակի պահանջներին, վերանայել է կրթական ծրագրերի վերջնարդյունքները: Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչները մանկավարժամեթոդական վերապատրաստման դասընթացների են մասնակցել մասնագիտական կրթական ծրագրերի, առարկայական նկարագրերի որակի բարձրացման նպատակով: Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ ՀՊՄՀ-ն իրականացնի աշխատաշուկայի համապարփակ վերլուծություն՝ հաշվի առնելով շրջանավատների կարիերայի ընթացքում առաջ եկած խնդիրները՝ նպաստելով ՄԿԾ-ների շարունակական բարելավմանը: Դրական է, որ բուհը բարելավել է դասավանդման և գնահատման մեթոդները, որոնք նպաստում են ուսանողների մոտ կարողությունների ձևավորմանը: ՀՊՄՀ-ում բարելավվել են նաև պրակտիկաները: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ ՀՊՄՀ-ն իրականացնի կիրառվող դասավանդման մեթոդների և առաջադրանքների արդյունավետության գնահատում, ինչը հնարավորություն կտա հասկանալու դասախոսների կողմից տրվող առաջադրանքների կիրառելիությունը, թե որքանով են այդ առաջադրանքները համապատասխանում աշխատավայրի համատեքստին և նպաստում դպրոցական համակարգի զարգացմանը: ՀՊՄՀ-ն ունի համապատասխան որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնասովանողական կազմ, բուհում դասավանդում են մանկավարժական ոլորտի լավագույն մասնագետները, պրոֆեսորները, և առկա է ուսանողների բարձր բավարարվածություն պրոֆեսորադասախոսական կազմից: Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ բուհը դիտարկի գործատու դասախոսների քանակի ավելացումը, ինչը հնարավորություն կտա ուսանողներին առավել պատրաստ լինել աշխատաշուկային, ինչպես նաև բուհի դասախոսների համար փորձի փոխանակման հնարավորություններ կստեղծի: Փորձագիտական խումբը կարևոր է համարում նաև, որ ՀՊՄՀ-ն բարելավի ՊԴ կազմի ընտրության քաղաքականությունը՝ մշակելով մարդկային ռեսուրսների երկարաժամկետ ռազմավարություն, որը թույլ կտա սահմանել ճանապարհային քարտեզ առաքելությամբ սահմանված 21-րդ դարի ուսուցչի պատրաստման համար անհրաժեշտ ՊԴ և ուսումնասովանողական կազմի ընտրության և կադրերի պահպանման համար: Կարևոր է, որ բուհը դիտարկի դասախոսների ծանրաբեռնվածության ժամաքանակի փոքրացումը, որը հնարավորություն կտա դասախոսներին առավել շատ ներգրավել հետազոտական աշխատանքներում: Բուհում առկա է ՄԿԾ նպատակներին համապատասխան ուսումնական միջավայր, վերջին տարիներին բարելավվել են բուհի ուսումնագիտական ռեսուրսները, մասնավորապես ԲՏ&Մ մասնագիտությունների առումով, որը նպաստատում է անհրաժեշտ միջավայրի ձևավորման համար: Ֆինանսական կայունությունը և բյուջեի դիվերսիֆիկացումը դեռևս արդիական խնդիր է ՀՊՄՀ-ի համար:

Ելնելով վերոգրյալից՝ փորձագիտական խումբը նշում է, որ բուհը քայլեր է ձեռնարկել աշխատաշուկայի կարիքներին համահունչ մասնագետների պատրաստման համար և ներկայումս ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում:

Նախորդ հավատարմագրումից հետո բարելավվել է ՀՊՄՀ կառավարման համակարգը, մասնավորապես՝ վերանայել է կազմակերպական կառուցվածքը: Վերանայված կառուցվածքը հստակեցրել է բուհում որոշումների կայացման գործընթացները, այդուհանդերձ կառուցվածքային գծապատկերում թույլ են արտահայտվում հորիզոնական կապերը: Փորձագիտական խումբը, դրական համարելով փոփոխությունները, որոնք նպաստել են կառավարման համակարգի կայունացմանը և վարչական աշխատակիցների թվաքանակի

օպտիմալացմանը, այդուհանդերձ գտնում է, որ կառավարման համակարգի բարելավումը շարունակում է մնալ արդիական: Բուհի կազմակերպական կառուցվածքում շարունակում են տեղ գտնել կառավարման համակարգի բարելավումը խոչընդոտող լուծումներ, ինչպես օրինակ պրոռեկտորների միջև հորիզոնական կապերի բացակայությունը, կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի դիրքը: Վերջինս խզում է Ռեկտոր-Որակի ապահովում ուղիղ կապը, մյուս կողմից Որակի ապահովումը կենտրոնացված է միայն կրթության որակի հասկացության հետ՝ գտնվելով «կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության» կազմում, ինչը հանգեցնում է ՄՈՒՀ-ի որակի համակարգի թերի ընկալմանը ներքին շահակիցների կողմից: Փորձագիտական խումբը նշում է, որ որակի ապահովման գործընթացների արդյունավետ կառավարման համար նպատակահարմար է որակի ապահովման և կառավարման բաժնի ենթակայությունը բուհի կառավարման ավելի բարձր օղակի: Չնայած համալսարանը ջանքեր է ներդնում որակի ապահովման համակարգի զարգացման համար, այնուամենայնիվ համակարգը դեռևս զարգացման փուլում է: Ներկայումս կենտրոնը կանգնած է մարտահրավերների առաջ՝ կապված որակի ապահովման ոլորտում փորձառություն ունեցող անձնակազմով համալրման հետ: Կարևոր է, որ կենտրոնը հստակ պլանավորի որակի ապահովման տարեկան միջոցառումները՝ ապահովելով բոլոր ոլորտներում տվյալների հավաքագրումն ու դրանց վերլուծությունը, որն էլ կառավարման բարձր օղակների համար որոշումների կայացման հիմքեր կապահովի:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ բուհի կառավարման համակարգը բարելավման փուլում է, և շարունակական քայլեր է ձեռնարկում որակավորումների արժանահավատ շնորհումը խթանելու ուղղությամբ:

Նախորդ հավատարմագրումից հետո բուհն առաջընթաց է գրանցել հետազոտական ոլորտում: Հստակցվել են ՀՊՄՀ-ի հետաքրքրությունները և հավակնություններն հետազոտական ոլորտում, շատացել են դասախոսների և ուսանողների համատեղ հողվածները, բուհը կարևորում է ուսանողների հետազոտական հմտությունների զարգացումը և քայլեր է ձեռնարկել այս ուղղությամբ: Բուհը որոշակի աջակցություն է տրամադրում դասախոսներին միջազգային ցիտվող հողվածներում տպագրվելու համար: Հետազոտական ոլորտում կարևոր նշանակություն ունի բուհում գործող «Շախմատ» գիտահետազոտական լաբորատորիան, որը նպաստավոր պայմաններ է ստեղծում մանկավարժահեգաբանական հետազոտությունների իրականացման համար:

ՀՊՄՀ-ում գործում է ներքին ու արտաքին շահակիցների առջև բազմամակարդակ հաշվետվողականության համակարգ՝ ապահովելով հաշվետվողականության ներքինից վերև մոտեցումը: Այդ հաշվետվությունները սահմանված ձևաչափ ունեն, քննարկվում են ստորաբաժանումներում և հրապարակային են, ինչպես նաև համալսարանը հասարակության տարբեր շերտերին մանկավարժահոգեբանական գիտելիքներ փոխանցելու մեծ փորձ ունի:

ՀՊՄՀ-ն վերջին հավատագրումից հետո ծավալել է արտաքին կապերի ընդլայնմանը և միջազգայնացմանն ուղղված գործընթացներ, որոնք հանդիսանում են ռազմավարական պլանավորման բաղակցուցիչ մաս: Տեսանելի է ինչպես տեղական, այնպես էլ միջազգային կազմակերպությունների հետ գործընկերային կապերի ընդլայնումը, որոնք նպաստել են գիտության, հետազոտության և կրթության միջազգայնացման, առաջավոր փորձի ուսումնասիրության և տեղայնացման գործընթացների ակտիվացմանը: Փորձագիտական կարևորում է, որ ՀՊՄՀ-ն ապագայում միջազգայնացման գործընթացներում շեշտադրի արտասահմանյան բուհերի ուսանողների և դասավանդողների շարժունության ակտիվացման

համար նախադրյալների ստեղծումը, ինչպես նաև իր ներքին շահակիցների՝ օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացումը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. բուհի ղեկավարների կողմից ռազմավարական կառավարման մոտեցումների կիրառումը,
2. մասնագիտական բարձր որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի առկայությունը,
3. պրակտիկաների շարունակական բարելավումը,
4. գործատուների ներգրավումը և նրանց նախաձեռնողական մասնակցությունը բուհի ֆակուլտետային խորհուրդներում,
5. դասախոս-ուսանող համատեղ հոդվածների տպագրության ակտիվացումը,
6. բուհի երկու հոդվածների ժողովածուների ընդգկումը Scopus և Web of Science միջազգային գիտաչափական հոդվածների ցանկում,
7. միջազգային համագործակցության և ծրագրերի դրական ազդեցությունը բուհի կրթական գործընթացների վրա և ծրագրերի աշխարհագրության ընդլայնումը,
8. հասարակությանը մանկավարժահոգեբանական գիտելիքների փոխանցման մեխանիզմների կատարելագործումը:

Հաստատության թույլ կողմերն են.

1. ՀՊՄՀ-ի կառավարման համակարգում հորիզոնական կապերի թույլ լինելը,
2. կառուցվածքի արդյունավետության գնահատման բացակայությունը,
3. ՊԴ կազմի համար մասնագիտական վերապատրաստումների սակավությունը,
4. կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի ինքնավարության պակասը,
5. տվյալների հավաքագրման ոչ համակարգված մոտեցումը,
6. պրոֆեսորադասախոսական կազմի համար խրախուսման գործուն քաղաքականության բացակայությունը,
7. համալսարանի կառավարման համակարգում ՊԻԳԲ շրջափուլի ոչ ամբողջական կիրառումը:

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Հստակեցնել բուհի ռազմավարական առաջնահերթությունները նոր մշակվող Ռազմավարական ծրագրում՝ գնահատելով բուհի մարդկային և ֆինանսական ռեսուրսները, ինչպես նաև հաշվի առնելով Ակադեմիական քաղաքում կլաստերի ղեկավարումը:
2. Սահմանել 21-րդ դարի ուսուցչի բնութագիրը և ներառել այն առաքելության մեջ՝ հստակեցնելով և թիրախավորելով առաքելությունը, ինչպես նաև մշակել դրա ճանապարհային քարտեզը:
3. Վերանայել ռազմավարական ծրագրում առաջընթացի գնահատման ցուցիչները՝ դարձնելով ավելի իրատեսական և չափելի:

Կառավարումն ու վարչարարությունը

4. Վերանայել ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքը, հստակ արտահայտել հորիզոնական կապերը, հստակեցնել Որակի ապահովման ստորաբաժանման դերակատարությունը՝ ապահովելով անհրաժեշտ ինքնավարություն և գործառնական կապեր:
5. Հստակեցնել պրոռեկտորների միջև պատասխանատվության շրջանակը, համակարգել ֆակուլտետների և ամբիոնների բաշխվածությունը՝ հաշվի առնելով միջգիտակարգային կապերը:
6. Ապահովել կարճաժամկետ և երկարաժամկետ պլանների փոխկապակցումը, կառավարման բոլոր մակարդակները փոխկապակցել ֆինանսական ռեսուրսների պլանավորման հետ:
7. Շարունակաբար բարելավել քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունը որակի կառավարման սկզբունքներին համաձայն՝ գնահատելով գործող փաստաթղթերի արդյունավետությունը և համապատասխանությունը գործընթացների տրամաբանությանը:
8. Մշակել և ներդնել ՄԿԾ-ների իրականացման և այլ գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և վերլուծության արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ:

Մասնագիտության կրթական ծրագրերը

9. Իրականացնել աշխատաշուկայի համապարփակ վերլուծություն՝ հաշվի առնելով շրջանավատների կարիերայի ընթացքում առաջ եկած խնդիրները և կիրառել արդյունքները ՄԿԾ-ների բարելավման գործընթացում:
10. Իրականացնել դասավանդման մեթոդների արդյունավետության գնահատում՝ նպաստելով ուսանողներին տրվող առաջադրանքների բազայի պարբերաբար թարմացմանը:
11. Վերանայել գնահատման կարգը, համապատասխանեցնել համալսարանում տեղ գտած նոր իրողությունների հետ՝ էլ. կրթական հարթակի կիրառությունը, հեռավար և հիբրիդային ուսուցման պայմաններում:
12. Բարելավել բենչմարքինգի գործընթացը՝ ներառելով ՄԿԾ ամբողջ բովանդակությունը և արդյունքները ներդնել ՄԿԾ-ների բարելավման հիմքում:

Ուսանողները

13. Իրականացնել դիմորդների ներգրավման գործիքների արդյունավետության գնահատում և ըստ դրա արդյունքների հիման վրա կատարելագործել դիմորդների հավաքագրման գործընթացը:
14. Բազմազանեցնել ուսանողների կրթական կարիքների գնահատման մեխանիզմները, պարբերաբար որակական քննության ենթարկել դրանք՝ դարձնելով առավել վերլուծական, հետևողական լինել ստացված արդյունքների կիրառմանը՝ համալսարանի կառավարչական որոշումների կայացման գործընթացում:
15. Բազմազանեցնել լրացուցիչ կրթական ծառայությունները՝ կապելով դրանք աշխատաշուկայում պահանջվող կարողությունների հետ:
16. Ներդնել մեխանիզմներ ուսանողների անկախ ձայնի ուսումնասիրման և ակտիվացնել ՈՒԽ աշխատանքներն այս ուղղությամբ:

17. Վերլուծել շրջանավարտների զբաղվածությունը աշխատաշուկայում և դրանց խոչընդոտող խնդիրները և ապահովել դրանց կիրառումը ՄԿԾ-ների բարելավման համար:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

18. Մշակել և ներդնել մարդկային ռեսուրսների զարգացման և կադրերի պահպանման երկարաժամկետ քաղաքականություն՝ նպաստելով բուհի ՊԴ և ուսումնաօժանդակ կազմի կայունությանը:
19. Բարելավել ՊԴ կազմի գնահատման գործընթացները՝ նպաստելով նրանց կարիքների բացահայտմանն ու բուհում առկա լավ փորձի տարածմանը:
20. Ներդնել ՊԴ կազմի համար խրախուսման գործուն քաղաքականություն, որտեղ ներառված կլինեն նորարարության, հետազոտության և միջազգայնացման ոլորտներում դասավանդողի ցուցիչները:
21. Ներդնել ՊԴ և վարչական կազմի վերապատրաստումների երկարաժամկետ պլան՝ նպաստելով ամբողջ աշխատակազմի կարողությունների զարգացմանը:

Հետազոտությունը և զարգացումը

22. Մշակել և ներդնել հետազոտական համալսարան դառնալու ճանապարհային քարտեզ՝ հստակ արդյունքներով և իրատեսական ԳԱՑ-երով՝ հետազոտության զարգացման, անհրաժեշտ հետազոտական ենթակառուցվածքների և ֆինանսավորման աղբյուրների բացահայտման համար:
23. Գնահատել իրականացվող գիտահետազոտական աշխատանքների արդյունքները և որակը՝ նպաստելով լավագույն փորձի տարածմանը:
24. Ներդնել մեխանիզմներ՝ պրոֆեսորադասախոսական կազմին միջառարկայական հետազոտություններում ներգրավելու համար:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

25. Իրականացնել յուրաքանչյուր կոնկրետ կրթական ծրագրի համար ռեսուրսների գնահատում հարցումների միջոցով և հետագա բարելավումներ ըստ վերլուծությունների:
26. Ապահովել ուսանողների և անձնակազմի հասանելիությունը միջազգային մատենագիտական տվյալների բազաներին:
27. Քայլեր ձեռնարկել ֆինանսական ռեսուրսների դիվերսիֆիկացիայի համար:
28. Հասարակական պատասխանատվությունը
29. Դիտարկել բուհի տարեկան հաշվետվության ձևաչափի փոփոխությունը՝ նպաստելով բուհի հիմնական ձեռքբերումների ամփոփ ներկայացմանը լայն հասարակությանը:
30. Ներդնել շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման ինստիտուցիոնալ մեխանիզմներ՝ նպաստելու կրթական ծրագրերի շարունակական լավարկմանը:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

31. Մշակել և ներդնել արտաքին կապերի հաստատման և միջազգայնացման հստակ քաղաքականություն:
32. Համակարգել միջազգայնացման գործընթացները՝ ըստ ոլորտների և պատասխանատուների շրջանակի՝ ընդլայնելով ներքին շահակիցների ներգրավվածությունը այդ աշխատանքներում:
33. Շարունակաբար բերավարել ներքին շահակիցների լեզվաիմացության մակարդակը՝ ներդնելով ձկուն և գործուն մեխանիզմներ:

Որակի ներքին ապահովման համակարգը

34. Հստակեցնել Որակի ապահովման բաժնի դիրքը ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքում՝ ապահովելով կառույցի ինքնավարությունը և հաշվետվողականությունը ռեկտորին:
35. Վերանայել ՈԱ քաղաքականությունը՝ ապահովելով բուհի բոլոր ոլորտների զարգացումը:
36. Մշակել և ներդնել տվյալների հավաքագրման և վերլուծման միասնական համակարգ՝ ապահովելով տարբեր ստորաբաժանումների համագործակցությանը:
37. Ապահովել ներքին և արտաքին շահակիցների արդյունավետ ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում:



Հերմինե Գրիգորյան
Փորձագիտական խմբի ղեկավար

27-ը մարտի, 2024 թ.

**ԳՈՐԾՐՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՏԱՐԱԾՔԻՆ ՀՊՄՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՄԱՆԿՑՈՒՆԻՑ**

ՀՊՄՀ-ն Հայաստանի Հանրապետության մեծ համալսարան է՝ 630 անձնակազմով, 44 բակալավրիատի, 64 մագիստրատուրայի և 5 ասպիրանտական կրթական ծրագրերում սովորող 5367 ուսանողներով: Այն արդեն 100 տարի մասնագիտացված է ուսուցիչների պատրաստման ոլորտում և գերիշխող դիրք է զբաղեցնում այս ոլորտում հայաստանյան կրթական շուկայում:

Կրթության կազմակերպումն իրականացվում է Բոլոնիան գործընթացի հիմնական սկզբունքներով: Միջազգայնացումը ՀՊՄՀ-ում եղել և շարունակում է մնալ հիմնական ռազմավարական նպատակ: Նախորդ հավատարմագրումից հետո եղած ժամանակահատվածում զգալի առաջընթաց է գրանցվել ԵԲԿՏ համալսարանների հետ համագործակցության ուղղությամբ: Այնուամենայնիվ, վերջին տարիներին դրա զարգացմանը խոչընդոտել են երկու արտաքին ցնցումներ՝ համավարակը և պատերազմը: Ավելին, ՀՊՄՀ-ի ապագա գտնվելու վայրը և կազմակերպական կառուցվածքը անորոշ են՝ կապված բարձրագույն կրթական հաստատությունները միավորելու և Ակադեմիական քաղաք ստեղծելու Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի հետ: Հարկ է նշել, որ որոշ տարբերություններ, այնուամենայնիվ, տիպիկ եվրոպական բուհերի հետ կան՝ մասամբ պայմանավորված ՀՀ բարձրագույն կրթության պետական խիստ կանոնակարգմամբ:

2019 թվականից հետո ՀՊՄՀ-ն վերանայել է իր տեսլականը և առաքելությունը, մշակել է նոր ռազմավարական ծրագիր 2020-2025 թթ.-ի համար: Հաստատության ուշադրությունը ուսուցիչների պատրաստման վրա այժմ ավելի ակնառու է: Այնուամենայնիվ, դեռ կան երկու ակնհայտ թույլ կողմեր: Զարգացման հավակնությունները, ռազմավարական նպատակները և ձևակերպված խնդիրները միշտ չէ, որ իրականանալի են սահմանափակ մարդկային և ֆինանսական ռեսուրսների պատճառով: Համալսարանը ձգտում է դառնալ հետազոտական համալսարան՝ չնայած սահմանափակ ձեռքբերումներին և հետազոտական ներուժին: Հետազոտական համալսարան դառնալու ճանապարհն ու պայմանները նախանշված չեն հաստատության որևէ փաստաթղթում:

Ռազմավարական ծրագրի նատակները, խնդիրները և թիրախներն անորոշ կերպով են սահմանված՝ դարձնելով դրանց գնահատումն առավել դժվար: Կատարողականի հստակ ցուցիչների բացակայությունը բարդացնում է այս խնդիրը: Որոշ դրույթներ չեն արտացոլում ռազմավարական խնդիրների որակները: Օրինակ, նպատակ 2-ում պարզապես ասվում է. «Տեղեկացնել ուսանողներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին»: Հետևաբար, ռազմավարական պլանավորումը կարող է հուսալի հիմք չհանդիսանալ գործողությունների պլաններ մշակելու համար, և որոշ խնդիրներ կարող են մնալ չկատարված: Փորձագիտական հանդիպումները հաստատեցին, որ համալսարանական համայնքը կարող է տարբեր կերպ մեկնաբանել ռազմավարական նպատակները և կարող է լիովին հանձնառու չլինել դրանց իրականացմանը:

Ինչպես եվրոպական համալսարանները, ՀՊՄՀ-ն ևս ունի բազմամակարդակ կառուցվածք, որն իր մեջ ներառում է ֆակուլտետներ, բաժիններ, կենտրոններ և վարչություններ: Այնուամենայնիվ, համալսարանի ներկայիս կառուցվածքը մասնատված է՝ որոշ ֆակուլտետներ բաղկացած են ընդամենը երկու ամբիոնից, մինչդեռ այլ նմանատիպ պրոֆիլներով ամբիոններ ֆակուլտետի կառուցվածքից դուրս են մնում:

Առանձին գործընթացների պատասխանատվությունը բաշխված է բազմաթիվ դերակատարների մեջ, նաև խնդրահարույց է պարտականությունների բաշխումը պրոռեկտորների և ստորաբաժանումների միջև: Եթե բարձրագույն կրթական համակարգի իրավակարգավորումները թույլատրեն, բուհերի միավորումները կարող են օգտագործվել այս խնդրի լուծման և գործընթացների կառավարումն իրականացնելու համար: Ֆակուլտետների, դասախոսական անձնակազմի միջև համագործակցությունը խթանող ինստիտուցիոնալ գործընթացների անհրաժեշտություն կա, ինչը կնպաստի լավագույն փորձի փոխանակմանը:

Հայաստանյան համալսարանների, այդ թվում՝ ՀՊՄՀ-ի, բնորոշ հատկանիշներից է կառավարման կոլեգիալ մարմնի առկայությունը (Հոգաբարձուների խորհուրդը), որը բաղկացած է 24 անդամներից՝ իշխանության բարձր մակարդակի ներկայացուցիչների զգալի խմբի մասնակցությամբ: Նախկինում հոգաբարձուների խորհրդի ղեկավարումը իրականացնում էր երկրի Վարչապետը, իսկ ներկայումս՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը: Հարցական է մնում, թե ինչ առավելություն է տալիս այս մասնակցությունը համալսարաններին և բարձրագույն կրթական համակարգին: Բացի այդ, նման մեծ խմբում կարող է դժվար լինել կոնսենսուսի հասնելը և արդյունավետ որոշումներ կայացնելը: Օտարերկրացի շահակիցները չեն կարող մասնակցություն ունենալ համալսարանի կառավարման գործընթացին օրենսդրական սահմանափակումների պատճառով: Այսպիսով, կառավարման համակարգի արդյունավետության գնահատում չի իրականացվել ՀՊՄՀ-ի կողմից, այդ թվում՝ շահակիցների ակտիվության գնահատում՝ կոլեգիալ կառավարման մարմիններում:

Մյուս տարբերությունը ակադեմիական ազնվության թերզարգացած համակարգն է: ՀՊՄՀ-ն ունի էթիկայի կանոնագիրք և հանձնաժողով: Այնուամենայնիվ, էթիկայի հանձնաժողովը զբաղվում է միայն էթիկայի կանոնների արձանագրված խախտումներով, ինչը վերջին տարիներին քիչ է եղել (1-2 դեպք): Ձեռնարկվել են որոշ միջոցներ՝ բարձրացնելու ակադեմիական հանրության իրազեկությունը կոռուպցիայի և գրագողության մասին, սակայն համապատասխան ծրագիր հաստատության կողմից ձեռք չի բերվել՝ դիպլոմային աշխատանքներում գրագողության առկայությունը ստուգելու համար: Հրատապ անհրաժեշտություն կա մշակելու էթիկական չափանիշներ համաշխարհային գիտական արդյունքը օգտագործելու համար: Համալսարանը չունի ուսանողների իրավունքների առանձին պաշտպան՝ օմբուցմեն, և ուսանողների շահերի պաշտպանությունը վստահվել է Ուսանողական խորհրդին:

Կրթական ծրագրերը համահնչեցված են եվրոպական չափանիշներին, ինչպես նաև սահմանված վերջնարդյունքները համահունչ են որակավորումների ազգային շրջանակին և ոլորտային որակավորումների շրջանակներին, նաև կիրառվում է ԿԿՓԵՀ (ECTS) համակարգը: Այդուհանդերձ, ուսումնառության ժամանակահատվածը առավել երկար է քան եվրոպական բուհերում է. բակալավրիատը տևում է 4 տարի՝ առկա համակարգի դեպքում և 5 տարի՝ հեռակա համակարգի դեպքում, իսկ մագիստրատուրան տևում է 2-2.5 տարի: Կրթական ծրագրերում առկա տարբերությունների պատճառով օտարերկրյա համալսարաններից ստացած կրեդիտները ավտոմատ կերպով չեն ճանաչվում: Սա նշանակում է, որ Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգը (ECTS) չի կատարում իր առաջնային գործառնությունը:

Ուսանողները սահմանափակ հնարավորություններ ունեն ձևավորելու իրենց ուսուցման ուղիները՝ ընտրովի և կրթական ծրագրից դուրս դասընթացների փոքր թվի և

միջառարկայական դասընթացների բացակայության պատճառով: Արագ զարգացող ժամանակաշրջանում, որտեղ հնարավորություն կա բարձրագույն կրթական համակարգից դուրս հմտություններ ձեռք բերելու (միկրոորակավորումներ) և դրանք հավաստելու համար, ՀՊՄՀ-ն չունի այդ տեսակի հմտությունների ճանաչման գործընթաց:

Ուսանողները ևս չունեն հնարավորություն մասնագիտական լրացուցիչ կարողության ձեռքբերումը հավաստող վկայականներ՝ պրոֆեսիոնալ սերտիֆիկատներ ձեռք բերելու, վերջինիս առկայությունը սակայն բարձր է գնահատվում գործատուների կողմից, որը հավաստում է, որ ուսման ընթացքում այս կամ այն հմտությունները ձեռք են բերվել: 2019 թվականից հետո ՀՊՄՀ-ում գրանցվել է ընդունելության զգալի անկում, որտեղ ուսանողների մոտավորապես 30%-ը դուրս է մնացել բուհից: Ուստի համալսարանի գրավչությունը բարձրացնելու և ուսանողներին պահելու ռազմավարություններ մշակելու խիստ անհրաժեշտություն կա:

Առավել մեծ տարբերություն կարելի է տեսնել դասավանդման և ուսումնառության մեջ: Հաստատությունը նշում է, որ իրականացնում է ուսանողակենտրոն ուսուցում: Գործնականում նորարարությունների և ուսանողներին ակտիվացնող ուսումնառության մեթոդների իրականացումը սահմանափակվում է որոշակի կրթական ծրագրերի շրջանակներում: Կան դեռևս բազմաթիվ դասախոսներ, ում դասավանդման մեթոդները բավարար չափով հարմարեցված չեն սովորողների բազմազանությանը, իսկ ուսանողների կատարողականի գնահատման համակարգերը հաճախ հիմնված են ավանդական մեթոդների վրա: Որոշ բաժինների ուսանողներ դժգոհում էին իրենց աշխատանքի գերձանրաբեռնվածությունից՝ շաբաթական 5 նախագիծ: Չնայած ուսումնառության վերջնարդյունքների վերանայմանը, դրանց գնահատման համակարգում էական փոփոխություններ չեն կատարվել:

Ուսանողները իրենց ՈԻԽ միջոցով ներկայացված են կառավարման մարմիններում, մասնակցում են կրթության որակը, գնահատման համակարգը, ուսումնական միջավայրը և այլ գործընթացներ գնահատող հարցումներին, ինչպես այլ համալսարաններում: Սյդուհանդերձ, հետադարձ կապի համակարգում ևս առկա են թույլ կողմեր: Օրինակ՝ ուսանողները, բացի հավաքագրված տվյալները, չունեն լիարժեք հասանելիություն հարցումների արդյունքներին: Լուրջ խնդիր է ուսանողների թույլ ներգրավվածությունը հետազոտական նախագծերում:

Շատ համալսարաններում հաճախ հանդիպող փորձառություն է շրջանավարտներին որպես դասախոս աշխատանքի ընդունումը: ՀՊՄՀ-ում դասավանդողների մի մասը այլ հաստատությունների շրջանավարտներ են: Սա նպաստում է դասավանդման տեխնիկայի և մեթոդների կատարելագործմանը, որոնք կարող են բերել այլ համալսարանների շրջանավարտները: Հայաստանյան բուհերի դասախոսները գերձանրաբեռնված են, իսկ աշխատավարձերը բավականին ցածր եվրոպական համալսարանների հետ համեմատ, իսկ ՀՊՄՀ-ում առավել ցածր՝ քան հայաստանյան շատ բուհերում: Դասախոսի ծանրաբեռնվածությունն ավելի բարձր է քան եվրոպական համալսարաններում, որոշ դեպքերում այն գերազանցում է տարեկան 1000 ժամը: Որոշ դասախոսներ դասավանդում են 12 առարկա՝ տարեկան, շատերը նաև դասավանդում են այլ համալսարաններում (հիմնական դասախոսական անձնակազմի 12%-ը), կամ այլ կազմակերպությունների աշխատակիցներ են: Ցածր աշխատավարձի քաղաքականության շարունակականությունը ռիսկային է ուղեղների արտահոսքի տեսակետից, ներառյալ դասախոսական անձնակազմի միջին տարիքի բարձր

լինելը (55 տարեկան) վտանգում է տարբեր հետազոտական ոլորտների կայունությունը: Այս ամենը հաստատում է անձնակազմի հոսունության վիճակագրությունը: Նախորդ տարվա ընթացքում 48 դասախոս հեռացել է աշխատանքից և 30 դասախոս ընդունվել աշխատանքի:

Ոչ արդի ուսումնական միջավայրը չի նպաստում դասավանդման և ուսումնառության գործընթացի բարելավմանը: Արդիականացման գործընթացը դանդաղ է տեղի ունենում ֆինանսական անբավարար միջոցների պատճառով: Համալսարանն ունի 750 համակարգիչներ ներկա դրությամբ, դրանց մեծ մասը ձեռք է բերվել 2006 թվականին, հաստատության գրադարանը չունի հասանելիություն միջազգային մատենագիտական շտեմարաններին: Մասնագիտացված ծրագրեր դասավանդման և հետազոտության համար ձեռք չեն բերվում սակավ ֆինանսական միջոցների պատճառով: Արդյունքում նոր գիտելիքը ամբողջությամբ չի ինտեգրվում կրթական ծրագրերում: Տեղեկատվության էլեկտրոնային հավաքագրման և մշակման գործիքների օգտագործումը դեռևս իրականացման վաղ փուլում է:

Չնայած այս բարդ պայմաններին գիտական հետազոտությունը զարգացած է և դրա արդյունքները տպագրվում են միջազգային մատենագիտական շտեմարանների ամսագրերում: Շախմատ գիտահետազոտական ինստիտուտը բավական ակտիվ է, միակ կենտրոնն է աշխարհում, որն առաջին հերթին զբաղվում է շախմատի սոցիալ-հոգեբանական ասպեկտներով, շախմատի ուսուցման և դասավանդման մեթոդաբանությամբ: Ցավոք, ՀՊՄՀ-ն չի ֆինանսավորում գիտահետազոտական ծրագրերը և չկան միջոցառումներ խոշոր հետազոտական խմբեր, որոնք կարող են ավելի մեծ հաջողությամբ դիմել ազգային կամ միջազգային դրամաշնորհների համար: Անգամ հետազոտական մեծ փորձ ունեցող դասախոսները չունեն հնարավորություն հետազոտողի կարգավիճակ ստանալու կամ կրճատելու իրենց դասավանդման ծանրաբեռնվածությունը: Հետազոտական կենտրոնի առաջնային գործառույթն է հետազոտական ծառայության մատուցումը և ոչ թե գերազանցության կենտրոնը, որը հարթակ կտրամադրեր՝ նոր նախագծեր նախաձեռնելու կամ ամբիոնների և առարկաների միջև հետազոտական համագործակցություն զարգացնելու համար: Այն նաև չի նպաստում փորձառու և նոր հետազոտողների միջև համագործակցությանը՝ վերջիններիս աջակցություն և ուսուցում տրամադրելու համար: ՊԴ կազմի ներգրավվածության մեծացումը հետազոտական գործընթացում կարևոր է գիտության վրա հիմնված կրթության տրամադրման համար:

Ընդհանուր առմամբ, ուսանողները, շրջանավարտները և գործատուները դրական կարծիք ունեն կրթական ծրագրերի իրականացման և վերջնարդյունքների ապահովման տեսանկյունից: Այդուհանդերձ, աշխատանք չգտնող շրջանավարտների աճող տոկոսը վկայում է համալսարանի իրականացրած գործընթացների և աշխատաշուկայի կարիքների միջև անհամապատասխանության մասին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն ակնկալում են պրակտիկ դասընթացներ, որոնք տալիս են կիրառական ուսումնառություն և նպաստում են ավարտելուց հետո աշխատանքի անցնելուն: Այս անհամապատասխանությունը խորությամբ չի ուսումնասիրվել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ շրջանավարտների գործազրկությունը վերագրվում է հիմնականում արտաքին գործոններին, այլ ոչ թե բուհին: Պատճառներից մեկը գործատուների սահմանափակ ազդեցությունն է ուսումնական պլանների ձևավորման վրա: Կրթության համապատասխանեցումը աշխատաշուկայի պահանջներին պահանջում է գործատուների առավել մեծ ներգրավվածություն ուսումնական պլանների մշակման՝ մշտադիտարկման,

դրանցում փոփոխությունների իրականացման գործում: Շրջանավարտների կողմից հետադարձ կապի արդյունքների օգտագործումը կրթական ծրագրերի արդիականացման գործում սահմանափակ է, իսկ հիմնական հարցումները սահմանափակվում են որոշակի տարվա շրջանավարտներով, որոնք ունեն աշխատավայրում, աշխատաշուկայում քիչ փորձառություն:

Ինքնավերլուծությունը մատնանշում է որոշ նախաձեռնություններ՝ կապված տեղական համայնքի համար տեխնոլոգիաների փոխանցման և ծառայությունների մատուցման հետ, սակայն դա հստակ որևէ քաղաքականության իրականացման արդյունք չէ, որը սահմանում է, այսպես կոչված, համալսարանի երրորդ առաքելությունը: Մասնավորապես, առկա է ցկյանս ուսուցման համակարգված գործունեության բացակայություն: Այս ոլորտի պատասխանատվությունը չի հասցեագրվել որևէ պրոռեկտորի, և այս գործընթացին աջակցելու համար համապատասխան կառույց չի ստեղծվել: Ուշադրության արժանի է այսպես կոչված Երրորդ սերնդի համալսարանի ստեղծումը՝ ավագ սերնդի համար մասնագիտական դասընթացների կազմակերպմամբ, ինչը հաջողակ փորձ է եվրոպական համալսարաններում:

Չնայած վերոնշյալ արտաքին ցնցումներին, ՀՊՄՀ միջազգայնացման գործընթացը բարեհաջող շարունակվել է: Ակնհայտ է հաստատության ղեկավար անձնակազմի կողմից վճռականությունը զարգացնելու միջազգայնացումը, ինչն իրականացվում է Միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոնի հմուտ թիմի կողմից: Աճել է հեղինակավոր գործընկեր համալսարանների թիվը 12 երկրներից, այդ թվում՝ Չինաստանից, Հունգարիայից, Նիդեռլանդներից, Լեհաստանից, Պորտուգալիայից, Ռուսաստանից, Իսպանիայից, Շվեդիայից, Շվեյցարիայից և ԱՄՆ-ից, և համատեղ նախագծերի ցանկը բավականին տպավորիչ է: Հատկապես հաջողությամբ են պսակվել 2021 թվականից «Շախմատ» Գիտահետազոտական Ինստիտուտի կազմակերպած միջազգային գիտաժողովները: ԻՎ-ի տվյալներով՝ մասնակցել է շուրջ 500 մարդ՝ 90 երկրներից: Մփյուռքի հետ հարաբերությունների պահպանման գործում կարևոր դեր է խաղում «Մփյուռք» գիտաուսումնական կենտրոնը:

Հատկանշական է, որ միջազգային համագործակցության ազդեցությունը տեսանելի է: Ուսանողները և անձնակազմը հաստատում են այս փաստը: Օրինակ՝ այն հարցին, թե ինչ փոփոխություններ կարող են տեսնել ուսանողները 2019 թվականից հետո, նրանք մատնանշեցին պրակտիկայի ավելի լավ կազմակերպումը և կրթական ծրագրերի միջազգայնացման մեծացումը: Բենչմարքինգի արդյունքում վերանայվել են կրթական ծրագրերը և ուսումնական պլանները, այլ գործընթացներին զուգահեռ: Համալսարանը մասնակցել է Հայաստանում առաջին միջդիսցիպլինար դոկտորական դպրոցի սկզբունքների և ծրագրի մշակման միջազգային նախագծին: Շարժունության ծրագրերի շրջանակներում ՀՊՄՀ ուսանողներն ու դասախոսական անձնակազմը մեկնում են արտասահմանյան բուհեր. ոմանք հնարավորություն են ունեցել մասնակցել ուսանողների փոխանակման ծրագրին, օրինակ՝ Շվեյցարիայում:

Որոշ հաջողություններ են գրանցվել նաև «միջազգայնացում տանը» ուղղությամբ: Անգլերենով դասավանդվում է 68 դասընթաց (39-ը՝ բակալավրիատում և 29-ը՝ մագիստրատուրայում), և կան հրավիրյալ դասախոսներ (12-ը՝ ընթացիկ ուսումնական տարում), որոնց փորձառությունը նույնպես օգտագործվում է դասավանդման և ուսումնական

ծրագրերի որակը բարձրացնելու համար: Մեկ մագիստրոսական ծրագիրն իրականացվում է անգլերենով (որոշ դասեր իրականացվում են նաև հայերենով):

Նոր ուսումնական տարում արտասահմանյան գործընկերների հետ համատեղ կիրականացվի երկու ծրագիր. մեկը՝ Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի հետ (վերջերս դադարեցվել էր համաճարակի պատճառով) և նորը՝ Ավեյրո համալսարանի հետ: 167 միջազգային ուսանողներ են սովորում համալսարանում, որոնց մեծամասնությունը սփյուռքից է, ինչը հնարավորություն է տալիս տեղացի ուսանողներին զարգացնել իրազեկվածությունը միջազգային, միջմշակութային արժեքների մասին և աշխատելու բազմազգ միջավայրում: Նախապատրաստական դասընթացներն իրականացվում են այլ երկրների դիմորդների համար: Միջազգային ամառային դպրոցը հաջողությամբ կազմակերպվում է երկար տարիներ շարունակ: Զարգանում է նաև գիտահետազոտական համագործակցությունը: ՀՊՄՀ-ն ունի մի շարք ծրագրեր արտասահմանյան բուհերի հետ և հրավիրված է մասնակցելու միջազգային հետազոտական կոնսորցիումներին: Միջազգային մատենագիտական շտեմարանների ամսագրերում վերջին տարիներին ավելացել է հրապարակումների թիվը:

Այնուամենայնիվ, օտարերկրյա համալսարանների հետ ուսանողների և անձնակազմի փոխանակումը և «միջազգայնացում տանը» դեռևս ավելի ցածր մակարդակի վրա են, քան եվրոպական այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում: Քիչ ուսանողներ և աշխատակիցներ են ներկայումս մասնակցում փոխանակման ծրագրերին: Այս ուսումնական տարում «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում օտարերկրյա ուսանողների ներհոսք չի եղել: Ցածր է նաև կրթական ծրագրերի հագեցվածությունը՝ միջմշակութային և միջազգային բովանդակությամբ: Օտարերկրյա բուհերի հետ համագործակցության հետագա զարգացման հիմնական խոչընդոտներից է ուսանողների և անձնակազմի օտար լեզուների, հատկապես անգլերենի իմացության ցածր մակարդակը: ԻՎ-ում նաև մատնանշվում է միջազգայնացման գործընթացներին մասնակցելու ոչ բավարար մոտիվացիայի մասին: Օգտակար կլինեք վերլուծել, թե ինչ է ձեռք բերվել մինչ այժմ, և նախաձեռնությունները դասակարգել միջազգայնացման նոր քաղաքականության տեսքով:

Որակի ապահովման քաղաքականությունը և որակի ներքին ապահովման համակարգը համահունչ են ՈԱԵԶՈ (Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ, ESG) բաժին 1-ին: Որակի քաղաքականության նպատակներն ու խնդիրները ամրագրված են ՀՊՄՀ ռազմավարության և Որակի ապահովման քաղաքականության մեջ: Որակի ապահովման ներքին համակարգի ուրվագիծը ներկայացված է որակի ձեռնարկում: Մշակվել են մի քանի ընթացակարգեր և մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս ուսանողներին, անձնակազմին և այլ շահագրգիռ կողմերին արտահայտել իրենց կարիքները և մասնակցել ՀՊՄՀ կառավարմանը: Գործընթացների որակի բարելավմանը և դրանց արդյունքների արտացոլմանը նպաստում է բուհի կառուցվածքի՝ բոլոր մակարդակներում կանոնավոր ինքնավերլուծության իրականացումը: Արդյունքները ներառված են ստորաբաժանումների հաշվետվություններում և ռեկտորի տարեկան հաշվետվությունում:

Այնուամենայնիվ, համալսարանի ներկայացուցիչները որակի ապահովման խնդրին հաճախ չեն անդրադարձել փորձագիտական այցի ժամանակ: Բարելավման վերաբերյալ ցանկացած առաջարկություն Որակի ապահովման բաժինը ուղարկում է նախ Կրթության կառավարման և բարեփոխումների վարչության պետին, այնուհետև Պրոռեկտորին և վերջում Ռեկտորին: Որակի ապահովման բաժինը ներկայումս մասնագետների կարիք ունի և չունի

հստակ ձևակերպած տեսլական ապագա գործընթացների համար և կարճաժամկետ պլաններ: Փորձագիտական խումբը տեղեկացավ, որ ՈԱԲ-ի գործունեությունը գալիք տարում սահմանափակվելու է փաստաթղթերի պատրաստմամբ և օրենսդրության փոփոխություններին հնարավոր ադապտացմամբ: Թեև ամբիոններում որակի ապահովման պատասխանատուի պաշտոն է հաստատվել, սակայն համալսարանի մակարդակով չկա հանձնաժողով, որը կգբադվի որակի ապահովման հարցերով: Նմանատիպ հանձնաժողով նախատեսվում է ունենալ Գիտական խորհրդի կազմում՝ հաջորդող տարվա ընթացքում: Որակի ապահովման պատասխանատուների աշխատանքի արդյունավետության վերլուծություն հասատությունում չի իրականացվել, այսպիսով այդ ինստիտուտի առավելությունները հստակ չեն: Այսպիսով, որակի ներքին ապահովման համակարգի համապարփակ վերլուծության բացակայությունը դժվարացնում է բարելավման վերաբերյալ առաջարկություններ անելը:

Վերոգրյալից բխում է, որ, ի հակադրություն ֆորմալ ձևակերպումների, որակի ապահովումը ՀՊՄՀ քաղաքականության իրական առաջնահերթություն չէ: ՀՊՄՀ-ի ներկայացուցիչները ինքնաքննադատ են՝ նշելով, որ ոչ բոլոր ընթացակարգերն (օրինակ՝ հետազոտության գնահատումը) են իրականացվել կամ միայն մասամբ են իրականացվել ընտրված ոլորտներում: Ինքնավերլուծության և ինքնագնահատման հայեցակարգը կարող է գրավիչ լինել, բայց այս քայլերը հաճախ չեն հանգեցնում որակի բարելավման: Վերլուծությունների որակը ԻՎ-ում կամ ռեկտորի հաշվետվությունում (ավելի քան 1000 էջ) նույնպես կարող է լուրջ կասկածներ առաջացնել: Սրա մասին փաստում է այն, որ ըստ շատ շահակիցների՝ ԻՎ-ում պարունակվող վերլուծության օգտակարությունը տեսնելը բավականին բարդ է՝ բարելավման ենթակա գործողությունների համար:

Թերություններից մեկը հավաքագրված տեղեկատվության ցածր որակն ու վավերացման բացակայությունն է: Վերլուծությունը չէր ներառում շրջանավարտների և ուսանողների շրջանում անցկացրած հարցման համակարգը, ոչ էլ ներառում էր շրջանավարտների և գործատուների հետ կապ հաստատելու մեթոդները: Դժվար է հավաստի տեղեկատվություն ստանալ աշխատաշուկայում շրջանավարտների աշխատանքի մասին: Հարցման գործընթացում ներառված չեն դասախոսներն ու վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմը: Ավելին՝ ինչպես նշվեց վերևում, ստացված տեղեկատվությունը միշտ չէ, որ ենթարկվում է հիմնավոր վերլուծության, և արդյունքները չեն վերածվում որակի առաջարկությունների: Արդյունքում, որոշումների կայացումը, ներառյալ գործընթացների որակը, կարող է թերի լինել:

Այս իսկ պատճառով պետք է նշել, որ ՊԻԳԲ շրջափուլը լիովին չի օգտագործվում բոլոր գործընթացների որակը շարունակաբար բարելավելու համար: Մա ինքնաքննադատորեն հաստատվեց թե ԻՎ մշակող թիմի, և թե այլ շահակիցների կողմից: Ներկայումս ուսումնասիրված թույլ կողմերը մեծամասամբ կառուցվածքային են, ինչպես նշվում է նաև նախորդ հավատարմագրման զեկույցում (2019թ.): Այն փաստը, որ դրանք պահպանվում են, վկայում է այն մասին, որ առկա է որակի ապահովման քաղաքականության և/կամ առաջարկվող գործընթացների անարդյունավետության մասին քննադատական վերաբերմունքի բացակայություն: Բազմաթիվ նոր մշակումներ են իրականացվել միայն վերջին երկու տարում, ենթադրաբար, համալսարանի նոր ղեկավարության նախաձեռնությամբ:

Որակի քաղաքականության իրականացման մյուս հիմնական թերությունը շահագրգիռ կողմերի ոչ բավարար ներգրավվածությունն է դրա իրականացման գործում: Փորձագիական այցի ընթացքում գործընթացների որակի բարելավման հետ կապված որոշ առաջարկություններ հնչեցին նաև հաստատության ներկայացուցիչների կողմից: Այս պասիվության պատճառներից մեկը որակի քաղաքականության և որակի ապահովման մեխանիզմների և կրթության կամ հետազոտությունների որակի համար դրանց կարևորության մասին գիտելիքների պակասն է: Մա, հավանաբար, բացատրում է, թե ինչու վերջին 5 տարիների ընթացքում որակի մշակույթի զարգացման հարցում էական առաջընթաց չի գրանցվել: Շահակիցների ներգրավվածությունը մեծացնելու և որակի ներքին ապահովման համակարգի արդյունավետությունը բարելավելու համար համալսարանների ղեկավարների համար ամենակարևոր և շարունակական խնդիրն է շահագրգիռ կողմերի իրազեկվածության բարձրացումը և ցույց տալու, որ երկարաժամկետ հեռանկարում փոփոխություններն օգուտ կբերեն բոլոր կողերին՝ ուսանողներին, դասախոսներին, շրջանավարտներին, համալսարանին, գործատուներին և, ի վերջո, երկրին: Հաստատության համար առանցքային է ձևակերպել որակի ապահովման նոր քաղաքականություն՝ որակի ձեռնարկի վերանայմամբ, վերջինս իր ներկայիս ձևով հնացած է և չի նպաստում որակի ներքին ապահովման համակարգը հասկանալու և խթանելու համար:

Խորհրդատվություններ.

1. Վերանայել 2020-2025թթ. Ռազմավարական ծրագիրը և վերաձևակերպել նպատակներն ու խնդիրները, գործողությունները: Գնահատման առանցքային ցուցիչների մեծամասնությունը պետք է վերասահմանել:
2. Ներառել ռիսկերի վերլուծություն հաջորդող երկարաժամկետ ռազմավարական ծրագրում:
3. Գործընթացների կառավարման համակարգ ներդնել՝ գործընթացների պատասխանատուների առավել հստակեցմամբ և հորիզոնական համագործակցությունը հեշտացնելու կարգավորումներով:
4. Մշակել համալսարանական քաղաքականություն ակադեմիական ազնվության վերաբերյալ և ուժեղացնել գործընթացներն այս ոլորտում:
5. Դիտարկել անկախ ուսանող/դասախոս օմբուցմենի նշանակումը:
6. Դիտարկել «Դասավանդման և ուսումնառության Որակի ապահովման շրջանակ» մշակելը, որը ամբողջացնում է համալսարանի մոտեցումը բոլոր գործընթացների վերաբերյալ, ներառյալ՝ ուսումնական պլանի, վերջնարդյունքների, դասավանդման մեթոդներ, դասախոսական անձնակազմի գնահատում:
7. Վերլուծել որակի ապահովման քաղաքականության ազդեցությունը դասավանդման և ուսումնառության որակի վրա՝ ուսումնառության գործընթացներում նորարարությունը խթանելու և հետադարձ կապի մշակույթ ստեղծելու տեսանկյունից:
8. Մշակել վերապատրաստումներ դասախոսների համար բարելավելու իրենց՝ դասավանդման և ուսուցման ժամանակակից, նորարարական տեխնիկայի օգտագործման հմտությունները:
9. Դիտարկել նմանատիպ կրթական ծրագրերի՝ յուրաքանչյուր խմբի համար ուսանողների և գործատուների մասնակցությամբ հանձնաժողով ստեղծելու

- հնարավորությունը, որը պատասխանատու կլինի դրանց մշակման, մշտադիտարկման և գնահատման համար:
10. Ներդնել միկրոորոկավորումների կամ նախորդ ուսուցման (prior learning) ուսուցման ճանաչման ընթացակարգ:
 11. Ստեղծել խորհրդատվական հանձնաժողով գիտական հետազոտությունների համար՝ գործատուների, և էթե հնարավոր է, արտասահմանյան գործընկերների մասնակցությամբ:
 12. Մշակել քաղաքականություն Համալսարանի երրորդ առաքելության իրականացման համար և նշանակել դրա իրականացման համար պատասխանատու անձանց:
 13. Մշակել ցկյանս ուսուցման դասընթացների շրջանակը, ներառյալ տարեցների համար նախատեսված դասընթացները:
 14. Վերանայել մինչ օրս միջազգային համագործակցության ազդեցությունը և մշակել միջազգայնացման երկարաժամկետ քաղաքականություն:
 15. Գնահատել անգլերենի ուսուցման արդյունավետությունը որպես կրթական ծրագրի մաս և ներդնել միջոցներ դրա արդյունավետությունը բարելավելու համար (առնվազն՝ B2 մակարդակի հասնելու համար):
 16. Ներդնել օտար լեզուների հմտությունների կատարելագործման և միջազգային նախագծերին մասնակցելու խրախուսական համակարգ: Նոր և կրտսեր դասախոսական անձնակազմի հանդեպ ներկայացնել անգլերենին (առնվազն՝ B2 մակարդակ) տիրապետելու պահանջ:
 17. Վերանայել Որակի ապահովման քաղաքականությունը և որակի ներքին ապահովումը ՈԱԵՉՈԻ (ESG) 2015-ին առավել համապատասխանեցման տեսակետից:
 18. Վերանայել և բարելավել որակի ապահովման ընթացակարգերը:
 19. Իրականացնել որակի ապահովման քաղաքականության իրականացման գործում շահակիցների ներգրավվածության խորը վերլուծություն:
 20. Տեղակայել որակի ապահովման բաժինը անմիջապես Ռեկտորի ենթակայության տակ և ապահովել համապատասխան անձնակազմով:

Միսչիսլավ Սոխա, միջազգային փորձագետ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի¹ կողմից.

1. **Հերմինե Գրիգորյան**՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի Բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, «Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, փորձագիտական խմբի դեկավար:
2. **Ասյա Միմոնյան**՝ ՇՊՀ-ի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, գեղարվեստական մարմնամարզության մարզիչ, փորձագիտական խմբի անդամ:
3. **Ամալյա Գրիգորյան**՝ «Գրիգոր Նարեկացի» համալսարանի Որակի ապահովման կենտրոնի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, փորձագիտական խմբի անդամ:
4. **Միսչեսլավ Սոխա**՝ Վարշավայի համալսարանի և Պետական կառավարման դպրոցի նախկին պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր, բարձրագույն կրթության հավատարմագրման Եվրոպական կոնսորցիումի (ECA) ֆինանսական կոմիտեի անդամ, փորձագիտական խմբի միջազգային անդամ, Լեհաստան
5. **Շուշան Դավեյան**՝ Երևանի պետական համալսարանի Հանրային կառավարում բաժնի 4-րդ կուրսի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ, և նշանակվել ՈԱԱԿ տնօրենի որոշմամբ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի դեկավար **Վարդուհի Գյուլազյանը**:

Թարգմանությունը կատարել է **Վարդանուշ Բաղդասարյանը**:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, թարգմանիչներն ու համակարգողը ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը:

¹ Հավելված 1. Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականներ

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ՄՈւՀ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ինքնավերլուծություն

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանված ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը՝ հայերեն և անգլերեն լեզուներով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Ինքնավերլուծությունը հետ է վերադարձվել հաստատություն՝ տեխնիկական խնդիրների պատճառով: Խնդիրների շտկումից հետո հաստատությունը երկու շաբաթվա ընթացքում ներկայացրել է վերանայված ինքնավերլուծությունը, որը համապատասխանել է սահմանված միասնական ձևաչափին, առկա են եղել համապատասխան հիմքերը և ձևաչափով պահանջվող հավելվածները: Այնուհետև ինքնավերլուծությունն ու կից փաստաթղթերի փաթեթը, համալսարանի կողմից լրացված էլեկտրոնային հարցաշարը տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է համալսարանի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խմբի աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել են փորձագետների վերապատրաստումներ:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈւՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում՝ ըստ ձևաչափի պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախնական գնահատման ընթացքում փորձագիտական խմբի անդամները իրականացրել են նաև դասալսումներ, մասնակցել քննություններին: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց²:

Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն և այլն:

Նախնական այց

2023 թվականի դեկտեմբերի 6-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում տեղի է ունեցել հանդիպում համալսարանի ղեկավար կազմի հետ: Հանդիպման ժամանակ քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի ժամանակացույցը, ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի

² Հավելված 2. Փորձագիտական այցի ժամանակացույց

կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Քննարկվել են ֆոկլուս խմբային հանդիպումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված պայմանները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2023թ. դեկտեմբերի 11-ից 14-ը ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՄՈւՀ-ի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկլուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Այցին ներկա է գտնվել փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը:

Փորձագիտական այցը սկսվել է համալսարանի ռեկտորի հետ հանդիպմամբ և ավարտվել հաստատության ղեկավար կազմի հետ հանդիպմամբ: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկլուս խմբային հանդիպումների դասախոս և ուսանող մասնակիցները, ամբիոնի վարիչները, գործատուներն ու շրջանավարտներն ընտրվել են բուհի կողմից նախապես տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր պարտադիր հանդիպումները: Փորձագիտական խումբը նախատեսված այցի ընթացքում իրականացրել է նաև փաստաթղթերի ուսումնասիրություն³ և ռեսուրսների դիտարկում⁴:

Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքներ, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների ու ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում՝ նախատեսելով գնահատման երկաստիճան սանդղակ՝ բավարար և անբավարար:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է համալսարանի լրացրած էլեկտրոնային հարցաշարի, ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության, իրականացված դասալսումների, փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա փորձագիտական խումբը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը:


Միջազգային փորձագետը պատրաստել է նաև գործընկերային գնահատման վերաբերյալ առանձին կարծիք: Փաստաթղթերը թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբին: Գործընկերային գնահատման կարծիքն ամբողջությամբ ներառվել է

³ Հավելված 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ

⁴ Հավելված 4. Ուսումնասիրված ռեսուրսներ

զեկույցի տեքստում: Փորձագիտական խմբի անդամների հաստատումից հետո նախնական զեկույցը տրամադրվել է համալսարանին փետրվարի 12-ին:

Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ ՀՊՄՀ-ն իր արձագանքն ուղարկել է ՈԱԱԿ 26.02.2024թ.-ին: ՈԱԱԿ-ը հաստատության դիտարկումները տրամադրել է փորձագետներին: Փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը և տրամադրել բուհին 27.03.2024 թ.-ին:



Վարդուհի Գյուլազյան
Փորձագիտական խմբի համակարգող
27-ը մարտի, 2024 թ.

**ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Պատմություն. Հայկական պետական մանկավարժական համալսարանը հիմնադրվել է 1922 թվականին և 1948 թվականից կրում է մեծ լուսավորիչ ու մանկավարժ Խաչատուր Աբովյանի անունը: 2004-2005 ուսումնական տարվանից իրականացնում է եռաստիճան (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա) կրթություն՝ շուրջ յոթ տասնյակ կրթական ծրագրերով, ուսուցման առկա, հեռակա և հիբրիդային ձևերով: Համալսարանում սովորում է շուրջ 5500 ուսանող:

Կրթություն. ՄՈՒՀ-ը կրթական ծրագրեր է իրականացնում կրթություն (բնական, հումանիտար գիտություններ), սոցիալական գիտություններ և արվեստ՝ երեք հիմնական մասնագիտությունների ոլորտներում, ՈԱՇ-ի 3՝ բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի մակարդակներում՝ պատրաստելով աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կարողություններով և անհրաժեշտ գիտելիքներով օժտված մասնագետներ: ՄՈՒՀ-ի 10 ֆակուլտետներում առկա է 60 մասնագիտության 108 կրթական ծրագիր, որոնցից 44-ը՝ բակալավրի, 64-ը՝ մագիստրոսի կրթական աստիճաններում, հետազոտողի 4 գիտական ուղղություններով՝ 5 հետազոտական ԿԾ-եր:

Հետազոտություն. Համալսարանը, կրթական գործունեությանն զուգահեռ, խրախուսում և աջակցում է գիտահետազոտական գործունեությանը՝ ստեղծելով կենտրոններ և լաբորատորիաներ դասավանդման ժամանակակից մեթոդների ուսումնասիրման և գործնականում դրանց իրականացման համար: Մանկավարժական կրթության նոր ռազմավարությունների մշակման հիմքում ՀՊՄՀ-ն դնում է իր ուսումնառողներին շարունակաբար զարգացող մասնագետ տեսնելու փաստը, որը ամրագրված է գիտելիքի մատչելի հասանելիություն ուսանողակենտրոնություն-կրթական առաջընթաց-շարունակական կրթություն արժեքային շղթայով:

Միջազգայնացում. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոնը համակարգում և իրականացնում է համալսարանի միջազգային համագործակցությունը ՄՈՒՀ-ի միջազգայնացման ռազմավարությանը համապատասխան: Կենտրոնը համակարգում է Համալսարանի ռազմավարական խնդիրների իրագործումը, նախաձեռնում համագործակցություններ օտարերկրյա բուհերի հետ՝ նպաստելով համալսարանի ներգրավվածությանը համաշխարհային կրթական գործընթացներում, մշակում համագործակցային ծրագրեր համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների հետ և հետևում դրանց իրականացմանը:

Որակի ապահովում. ՄՈՒՀ-ը կարևորում է որակի ապահովման ամբողջական շրջափուլի կիրառումը բոլոր գործընթացներում, որի հիման վրա առանձնացնում է վերանայել որակի ապահովման քաղաքականությունը, հայեցակարգը՝ կատարելագործելով որակի ապահովման ներբուհական և ստորաբաժանումների շարունակական բարելավման գործուն համակարգերը՝ ապահովելով ՊԻԳԲ շրջափուլի գործարկումը և իրականացումը, ինչպես նաև մշակել ՄՈՒՀ-ի որակի ապահովման ներքին համակարգում որակի ապահովման պատասխանատուների աշխատանքային նկարագրերը և հստակեցնել գործառույթները:

Աղբյուր. վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (այսուհետ՝ ՀՊՄՀ) 2020-2025թթ. զարգացման ռազմավարական ծրագրում (այսուհետ՝ ՁՌԾ) սահմանված է հաստատության առաքելությունը, ըստ որի՝ «ՀՊՄՀ-ն բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի առաքելությունը կրթության, սոցիալական, հումանիտար, բնական գիտությունների, մշակույթի և արվեստի ոլորտներում ՀՀ ազգային և միջազգային աշխատաշուկայում մրցունակ, մասնագիտական կայուն գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ ունեցող, սոցիալական պատասխանատվությամբ, ազգային, ժողովրդավարական, հումանիստական արժեքներով առաջնորդվող և դրանք տարածող մասնագետ-մանկավարժների պատրաստումն է՝ բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի որակավորումներով»: Նախորդ հավատարմագրման արդյունքներից ելնելով՝ 2019 թվականին, ՀՊՄՀ-ն վերանայել է իր առաքելությունն ու հստակեցրել տեսլականը՝ առավել շեշտադրելով մանկավարժահոգեբանական տեսանկյունը: Սահմանվել են բուհի առաջնահերթությունները, որոնք բավականին հավակնոտ են և պահանջում են մարդկային և նյութական ռեսուրսների ներդրումներ, իսկ որոշ նպատակներ հնարավոր չէ իրականացնել կարճաժամկետ կտրվածքով (օրինակ՝ դառնալ հետազոտական համալսարան):

Հաստատության իր տեսլականն է համարում. համընդհանուր ներառականության սկզբունքների և մանկավարժական կրթության նոր ռազմավարությունների մշակմամբ և արդյունավետորեն ներդրման օգնությամբ 21-րդ դարի հմտությունների լայն տիրապետմամբ ուսուցչի պատրաստումը: Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ ՀՊՄՀ ղեկավար կազմը և Հոգաբարձուների խորհուրդը 21-րդ դարի ուսուցչի կերպարը սահմանում է հետևյալ կերպ. պատրաստել հետազոտող, քննադատական մտածելակերպ ունեցող մանկավարժներ, ովքեր ունակ կլինեն կիրառելու թվային տեխնոլոգիաները և պատրաստ կլինեն աշխատելու նոր սերնդի հետ: Բուհի ղեկավար կազմը կարևորում է նաև ուսանողներին փոխանցել «սովորեցնել սովորել» կարողությունը: Մինևույն ժամանակ, փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ոչ բոլոր շահակիցների մոտ են առկա մինևույն պատկերացումները կապված 21-րդ դարի ուսուցչի կերպարի հետ, ինչպես նաև բուհի առաքելությունը հպանցիկ է անդրադառնում նշված մոտեցումներին: Այն լիարժեք արտահայտված չէ բուհում իրականացվող բոլոր կրթական ծրագրերում:

Համալսարանն իր կրթական գործունեությունը ծավալում է Որակավորումների ազգային շրջանակի 6-8-րդ մակարդակներում:

Բուհը մինչ 2022 թվականը որպես ՁՌԾ իրականացման պլան ժամանակացույց դիտարկել է ՀՊՄՀ թերությունների վերացման ծրագիրը, այնուհետև 2022 թվականին բուհի կողմից կազմվել և հաստատվել են զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանը, որպես հակաճգնաժամային պլան և համապատասխան բյուջե՝

բաշխված ըստ տարիների: 2022 թվականին հաստատված պլան-ժամանակացույցով բուհը փորձել է համակարգել բացթողումները:

Փորձագիտական խմբի վերլուծությունների արդյունքում պարզ դարձավ, որ պլան ժամանակացույցում ոչ բոլոր ՁՌԾ գործողություններն են ներառված, օրինակ ՁՌԾ ուղղություն առաջինում նշված է «Վերհանել պրակտիկայի բազաների մասնագիտական խնդիրները և կարիքները՝ ապահովելով գործընթացի բարեփոխումը», սակայն համարժեք խնդիր ՌԾ-ում առկա չէ:

Վերջին մեկ տարվա ընթացքում ՀՊՄՀ-ում վերանայվել են կրթական ծրագրերն՝ ըստ որակավորումների ոլորտային շրջանակի, կատարվել է ընդունելություն կրկնակի մասնագիտացումների գծով, ապահովելով երկրում ԲՏՀՄ (բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական և մաթեմատիկական) ուղղվածությամբ մանկավարժների պահանջարկը, քայլեր են կատարվել կրթության և հետազոտության կապի ամրապնդման համար: Հարկ է նշել, որ, «Ակադեմիական քաղաք» հիմնադրամում կրթությանը հատկացված է առանձին կլաստեր, իսկ ՀՊՄՀ-ն ՀՀ-ում միակ մանկավարժական բուհն է, որը հավակնում է պատրաստել մանկավարժ-մասնագետներ: Հաստատությունը, գտնվելով անցումային ժամանակահատվածում, որոշ գործընթացների (կառուցվածքի փոփոխություն, ենթակառուցվածքների բարելավում) իրականացման համար սպասում է վերոնշյալ փոփոխություններին:

1.2 ՄՌԻ-Հ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Համալսարանը 2022 թվականին ընդունել է «ՀՊՄՀ-ում արտաքին և ներքին շահակիցների ներգրավման և կարիքների գնահատման կարգ»-ը, որը կարգավորում է ներքին շահակիցների՝ ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի կարիքների գնահատումը: Բուհի կողմից որպես գնահատման հիմնական մեխանիզմ է դիտարկվում հարցումը, իսկ գործիք՝ հարցաշարերը: Հաստատության արտաքին շահակիցները՝ շրջանավարտները, գործատուները, ևս մասնակցում են հարցումներին, ինչպես նաև գործատուներն ընդգրկված են համալսարանի և նրա ստորաբաժանումների կառավարման կոլեգիալ մարմիններում:

Փորձագիտական վերլուծությունները ցույց տվեցին, որ ռազմավարական որոշ խնդիրներ արտահայտում են շահակիցների կարիքները, օրինակ ուսանողների կողմից խնդիր է բարձրացվել պրակտիկաների տևողության և կազմակերպությունների բազմազանեցման առումով, և այս խնդիրն արտահայտված է ռազմավարական ծրագրի առաջին ուղղության 4.1.6 գործողությամբ, որը վերաբերվում է պրակտիկաների բարելավմանը:

Սակայն պետք է նշել, որ «ՀՊՄՀ-ում արտաքին և ներքին շահակիցների ներգրավման և կարիքների գնահատման կարգ»-ում գնահատման միակ մեխանիզմը հարցումներն են: Կարգը չի սահմանում պատասխանատու ստորաբաժանումներին, ինչպես նաև յուրաքանչյուր թիրախային խմբի համար հարցումների պարբերականությունը, շահակիցների կարիքների գնահատման փուլերի կապը հաստատության առաքելության և նոր խնդիրների ձևակերպման հետ:

1.3 ՄՌԻ-Հ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

ՀՊՄՀ-ում առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման հիմնական մեխանիզմը հաշվետվություններն են, որոնք յուրաքանչյուր տարվա վերջին

դառնում են ռեկտորի հաշվետվության հիմքը: Ռեկտորի հաշվետվությունը մեծածավալ փաստաթուղթ է, որը տեղադրվում է համալսարանի կայքէջում, իսկ սեղմ տարբերակով ներկայացվում է գիտական խորհրդին և հոգաբարձուների խորհրդին: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ բուհը դիտարկում է ռեկտորի հաշվետվության ձևաչափի փոփոխությունը, քանի որ առկա են տեղեկատվության կրկնություններ, և հստակ չի արտահայտվում կապը ռազմավարական առաջնահերթությունների հետ:

Ըստ ինքնավերլուծության և փորձագիտական այցի արդյունքների՝ ստորաբաժանումների հաշվետվությունները կատարվում են 2017 թվականից ներդրված հաշվետվողական նոր ձևաչափով, սակայն հարկ է նշել, որ այդ հաշվետվությունները ոչ միշտ են արտահայտում ՌԾ կատարման արդյունքները:

Փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ, որ առկա չէ համապարփակ վերլուծություն նախորդ 2016-2020 թվականների Ռազմավարական ծրագրի իրականացման մասով: Այս տեսակետից հստակ չէ, թե որքանով են դրված նպատակներն իրագործվել և ինչ գործընթացներ են ներառվել նոր 2020-2025 ՌԾ-ում՝ պայմանավորված բուհի համար առկա մարտահրավերներով:

Փորձագիտական ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ ՌԾ գործողությունների կատարման պլանում սահմանված գնահատման ոչ բոլոր ցուցիչներն են չափելի և որոշ դեպքերում կապված չեն ՌԾ նպատակների և առաջնահերթությունների հետ: Կարելի է նշել, օրինակ՝ համալսարանի կառավարման գործընթացներում ուսանողների ներգրավվածության և մասնակցության զգալի աճը:

ՄՌԻՀ-ի ֆինանսական պլանավորումը ոչ միշտ է համարժեք ՀՊՄՀ ռազմավարական նպատակներին ու խնդիրներին, քանի որ տարեկան ֆինանսական մուտքերի ծավալները, որոնք հիմնականում ձևավորվում են ուսման վարձերից, ամբողջությամբ կանխատեսելի չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրման փորձագիտական խմբի կողմից տրված խորհրդատվության հիման վրա ՀՊՄՀ-ն վերանայել է իր առաքելությունը՝ հստակեցնելով իր դերը մանկավարժների պատրաստման գործընթացում, ինչպես նաև տեսլականում շեշտադրել է 21-րդ դարի հմտություններին տերապետոդ ուսուցչի մասնագիտության հեղինակության բարձրացումը: Մինևույն ժամանակ, փորձագիտական խումբը կարևոր է համարում 21-րդ դարի ուսուցչի բնութագրի արտահայտումը առաքելության մեջ և տեսլականում, դրա գաղափարի տարածման աշխատանքների իրականացումը բուհի ներքին և արտաքին շահակիցների շրջանում, ինչպես նաև կրթական ծրագրերի բովանդակության մեջ դրա արտահայտումը, ինչը կնպաստի բուհի դերակատարության հստակեցմանը բոլոր շահակիցների և լայն հանրության շրջանում: Մյուս կողմից, փորձագիտական խումբը շեշտադրում է, որ բուհը դիտարկի 21-րդ դարի հմտությունների լայն տիրապետմամբ ուսուցչի մասնագիտության տրանսֆորմացիան ռազմավարական ծրագրում հստակ գործողությամբ արտահայտելը, որի արդյունքը չափելի և ըմբռնելի կլինի շահակիցների կողմից:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ վերջին երկու տարվա ընթացքում, ՀՊՄՀ-ն մշակել և իրագործել է հակաճգնաժամային պլան (2022-2023) հիմնված ՌԾ-ի վրա, որը թույլ է տվել բուհին կարճ ժամկետում հաջողություններ գրանցել մի շարք ուղղություններով: Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ բուհի համար այս կարևոր փուլում, երբ Ակադեմիական քաղաքում ստեղծվելու է առանձին մանկավարժական կլաստեր, հստակեցվեն բուհի ռազմավարական առաջնահերթությունները՝ բուհի առկա պոտենցիալի գնահատմամբ:

Սա բուհին հնարավորություն կտա նախապես հստակեցնել իր դիրքը և զարգացման ուղղություններն ու առաքելությունը, ինչպես նաև կարևոր է, որ բուհը առաքելությունում ներառի ՀՊՄՀ հիմնական կարգախոսը, այն է «սովորեցնել սովորել»:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ բուհի ներքին շահակիցների կարիքները արտացոլված են համալսարանի ռազմավարական ուղղություններում, դրական է, որ արտաքին շահակիցները ներկայացված են ֆակուլտետի խորհուրդներում, ինչը հնարավորություն է տալիս նրանց մասնակից դառնալ բուհի առաջնահերթությունների հստակեցմանը և իրագործմանը: Փորձագիտական խումբն այս տեսակետից կարևոր է համարում ֆակուլտետների խորհուրդներում դուրս բերված դիտարկումների արտահայտումը առաջիկայում մշակվող ռազմավարական ծրագրում: Ինչպես նաև կարիքների վերհանման մեխանիզմների բազմազանեցումը հնարավորություն կընձեռի առավել ընդգրկուն և թիրախային տվյալների դուրբերմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրման արդյունքում բուհը ՌԾ-ում սահմանել է գործողությունների գնահատման ցուցիչներ: Փորձագիտական խումբը կարևոր է համարում Ռազմավարական ծրագրի գնահատման մեխանիզմների հստակեցումը և տարեկան հաշվետվություններում ռազմավարական նպատակների իրականացման արդյունքների արտացոլումը: Այս գործընթացի համար անհրաժեշտ է, որ բուհը հստակեցնի առաջընթացի գնահատման ցուցիչները, որոնք ցույց կտան՝ որ դեպքում կարող է նպատակը իրագործված համարվել: Ներկայումս գնահատման ցուցիչները չափելի չեն, ինչը դժվարացնում է գնահատելու առաջընթացը, քանի որ սահմանված չեն, թե որքան է բուհը նախատեսում տարբեր գործոնների աճի ցուցանիշները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՀՊՄՀ-ն նախորդ հավատարմագրումից հետո բարելավվել է ռազմավարական կառավարման գործընթացները, նախորդ հավատարմագրումից հետո հստակեցրել է իր առաքելությունն ու տեսլականը, որոնք արտացոլում են հաստատության կարևորությունը և դերը ՀՀ մանկավարժների պատրաստման ուղղությամբ, բուհի շահակիցները միասնական են տեսլականին հասնելու գործընթացներում, առկա են որոշակի մեխանիզմներ ՌԾ գնահատելու համար՝ փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանը բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՊՄՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է բավարար:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈւՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառնումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է, սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՄՈՒՀ-ի կառավարումը հիմնված է ինքնավարության վրա՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ: ՄՈՒՀ-ի կառավարման բարձրագույն մարմինը Հոգաբարձուների խորհուրդն է (ձևավորվում է 5 տարի ժամկետով), որը հաստատում է ռազմավարական և տարեկան ծրագրերը, կազմակերպական կառուցվածքը, եկամուտների ու ծախսերի տարեկան նախահաշիվը, տարեկան ֆինանսական հաշվետվությունները, լսում և գնահատում է ռեկտորի տարեկան հաշվետվությունը, ինչպես նաև իրականացնում է ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ ամրագրված այլ լիազորություններ: Փորձագիտական խմբի հանդիպումները ցույց տվեցին, որ Հոգաբարձուների խորհուրդը կիսում է ՄՈՒՀ-ի առաքելությունը և տեսլականը, մասնավորապես՝ արժևորվում է 21-րդ դարի մանկավարժի կերպարի կերտման գործում համալսարանի դերակատարությունը: Հոգաբարձուների խորհուրդն ակտիվորեն քննարկում է ՄՈՒՀ-ի ընթացիկ խնդիրների հաղթահարման ուղիները, հանդես գալիս առաջարկություններով, կրթության որակի բարձրացման, աշխատաշուկայի պահանջների համապատասխան մանկավարժներ պատրաստելու, համալսարանի միջազգայնացման և հետազոտական գործունեությունը խթանելու համար:

ՄՈՒՀ-ի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է ռեկտորը: ՄՈՒՀ-ի կոլեգիալ կառավարման մարմինը՝ Գիտական խորհուրդը (այսուհետ՝ ԳԽ) պլանավորում և համակարգում է ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կառավարման ու կազմակերպման հիմնահարցերը, ռեկտորատի, մշտական հանձնաժողովների (ԳԽ-ին կից), ֆակուլտետների ներկայացմամբ ընդունում է որոշումներ, կազմակերպում ընտրություններ և այլ գործառնություններ՝ ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ և ԳԽ-ի կանոնակարգով սահմանված իր լիազորությունների շրջանակներում:

ՄՈՒՀ-ի ռեկտորատը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, քննարկում է ՄՈՒՀ-ի գործունեությանն առնչվող հարցեր, ձևավորում է գիտական խորհրդի օրակարգը և նախապես քննարկում որոշումների նախագծերը և այլն:

Ֆակուլտետը՝ որպես կառուցվածքային միավոր, իր ստորաբաժանումներով՝ ամբիոններ, լաբորատորիաներ, ապահովում է ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործընթացների կազմակերպումն ու իրականացումը, ղեկավարվում է դեկանի և ֆակուլտետային խորհրդի միջոցով: Ամբիոնը ֆակուլտետի ուսումնագիտական միավորն է:

Նախորդ հավատարմագրման գործընթացից հետո ՄՈՒՀ-ը, հիմք ընդունելով խորհրդատվությունները միտված կառավարման համակարգի բարելավմանը, վերանայել է ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքը և պաշտոնների անձնագրերը՝ հստակեցնելով գործառնությունները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ փոփոխությունների հիմքում եղել է վարչական աշխատակիցների թվի օպտիմալացումը, որի արդյունքում բազմաթիվ առանձին գործող բաժիններ միավորվել են կենտրոնների ներքո՝ ըստ իրենց գործունեության բնույթի, օրինակ՝ ֆինանսատնտեսական վարչության կազմում միավորվել են ֆինանսական գնումների համակարգման և մատակարարման բաժինները՝ որպես «Ֆինանսատնտեսական գնումների համակարգման և մատակարարման կենտրոն»:

ՄՈՒՀ-ը կարևորում է կառավարման ապակենտրոնացումը և հորիզոնական կապերի ամրապնդումը: ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքի դիտարկումը ցույց է տալիս, որ ձևավորված ուղղահայաց կապերը ոչ միշտ են նպաստում արդյունավետ կառավարմանը, օրինակ՝ ուսումնական գործընթացների հարցերի գծով պրոռեկտորը համակարգում է՝ «Կրթական գործընթացների կառավարման և

բարեփոխումների վարչություն»-ը, որի կազմում է գտնվում «Կրթության որակի ապահովման կառավարման» բաժինը. ապահովված չէ որակի ապահովում-ռեկտոր ուղիղ կապը:

ՄՈՒՀ-ի գործառնական կապերի դիտարկումը ցույց է տալիս, որ կառուցվածքային զծապատկերում բացակայում է պրոռեկտորների միջև հորիզոնական կապը, տեսանելի է նաև գործառնականների և պատասխանատվության շրջանակի ոչ համաչափ բաշխում, կամ մի քանի ոլորտային ուղղությունների համադրում: Այսպես, օրինակ՝ «Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով» պրոռեկտորը համակարգում է 13 ստորաբաժանում՝ իրենց ենթաբաժիններով, որտեղ փորձագիտական խմբի դիտարկմամբ ներառված է իրարից տարբեր կառավարման հետևյալ ուղղությունները՝ ֆինանսատնտեսական, արտաքին համագործակցություն և ծրագրեր, աշխատակազմի հաշվառում, հանրության հետ կապեր, ՏՏ տեխնոլոգիաներ:

Ուսումնական գործընթացների հարցերի գծով պրոռեկտորը համակարգում է 5 ստորաբաժանում, 10 ֆակուլտետում գործող 40 ամբիոններ, կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության հետ համատեղ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կան 2-3 ամբիոններով գործող ֆակուլտետներ, օրինակ՝ «Հատուկ և ներառական կրթության» ֆակուլտետում գործում են «Հատուկ մանկավարժության և հոգեբանության» և «Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի» ամբիոնները: Հարկ է ընդգծել, որ ՄՈՒՀ-ի 10 ֆակուլտետներում առկա է 60 մասնագիտության 108 կրթական ծրագիր, որոնցից 44-ը՝ բակալավրի, 64-ը՝ մագիստրոսի կրթական աստիճաններում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ միջամբիոնային և միջֆակուլտետային համագործակցությունը թույլ է արտահայտվում: Այդուհանդերձ պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը առաջիկայում դիտարկում է ֆակուլտետների և ամբիոնների վերակազմավորում՝ ընդգծելով չորս ուղղություններ՝ ԲՏՃՄ, հոգեբանություն, մանկավարժություն և արվեստ, որի իրականացման համար նախատեսվում է իրականացնել համապարփակ վերլուծություն՝ նախ և առաջ որոշելու, թե որը կլինի փոփոխության համար շահակիցների կողմից ընդունելի մոդելը:

ՄՈՒՀ-ն ունի բարեվարքության քաղաքականություն, որով առաջնորդվում է տարբեր մակարդակներում որոշումների կայացման գործընթացն իրականացնելիս՝ հիմնվելով հետևյալ սկզբունքների վրա՝ որոշումների լեգիտիմությունը, որոշումների արդարություն, որոշումների արդյունավետություն, որոնք պետք է ապահովվեն ներքին և արտաքին շահակիցների ներգրավմամբ և մասնակցությամբ, որոշումներ հրապարակայնությամբ և թափանցիկությամբ, ՄՈՒՀ-ի նորմատիվ ակտերից բխող լիազորությունների շրջանակներում:

Բարեվարքության քաղաքականությամբ հստակեցված են նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգը, էթիկայի հանձնաժողովի իրավասությունները, կոռուպցիայի դեմ պայքարի և անօրինական գործողությունների կանխարգելման քաղաքականությունը:

ՄՈՒՀ-ի ֆինանսատնտեսական գործունեությունը հանդիսանում է ռազմավարական պլանավորման մաս՝ որպես առանձին ռազմավարական ուղղություն, հիմնվում է «ՀՊՄՀ հաշվապահական հաշվառման քաղաքականության» (2018թ.), «Ֆինանսների ծրագրավորման և վիճակագրության վարչության կանոնադրության» (2023թ.): Համալսարանը մշակել է նաև ՄՈՒՀ-ի 2020-2025թթ. ռազմավարական ծրագրի բյուջեի պլանը, որը ներկայացնում է բյուջեի հնգամյա բաշխումը՝ ըստ ռազմավարական ուղղությունների: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ փաստաթղթում առկա են մի շարք

անհամապատասխանություններ ՁՌԾ-ի հետ (5.1.2, 2.2.5 գործողությունները ՁՌԾ-ի հետ նույնական չեն, ՌԾ-ում չկա 2.2.6, 2.2.7, 2.3.6, 2.3.5 կետերը և այլն), կան ուղղություններ, որոնց համար ֆինանսական հատկացումներ կատարված չեն, ինչպես օրինակ՝ որակյալ կրթական գործունեություն, նշված են գործողություններ, որոնք առկա չեն ՁՌԾ-ում: Հարկ է նշել, որ փաստաթուղթը դեռևս գործածության մեջ չի դրվել: Համալսարանը ֆինանսական պլանավորումը շարունակում է կատարել տարեկան կտրվածքով:

Ֆինանսական փաստաթղթերի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՄՈՒՀ-ի արտաբյուջեն ձևավորվում է վճարովի ուսուցման ծառայությունների մատուցումից, ենթակառուցվածքների վարձակալությունից ստացված եկամուտներից, քննությունների կազմակերպումից, դրամաշնորհային ծրագրերից և այլն: Հիմնական բյուջեն ձևավորվում է պետական բյուջեի ֆինանսավորումից, այդ թվում՝ բարձրագույն և հետբուհական կրթության ծառայությունից, գիտության ֆինանսավորում, ենթակառուցվածքներ: ՄՈՒՀ-ը մշտապես ունի եկամուտների մնացորդ, որը վերջին տարիներին որոշակիորեն նվազել է: 2022-ի ավարտին արտաբյուջեն կազմել է ընդհանուր եկամուտների 70,74%-ը, եկամուտների մնացորդը կազմել է ընդհանուր եկամուտների 15,59%, այն պարագայում, երբ 2022-ի ծախսերը գերազանցել են եկամուտները՝ 105%-ով:

Այսպիսով, ՄՈՒՀ-ի ֆինանսական ելքերի հողվածներն են՝ աշխատավարձ (72%), կրթաթոշակ (1.17%), ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ծախսեր (ընդհանուր 7.56%), որտեղ զգալի մասնաբաժին ունի աշխատակիցների բժշկական ապահովագրությունը (3.3%), ուսումնական (1.1%) և կոմունալ ծախսերը (1.5%), առկա են նաև գործուղման և ներկայացուցչական ծախսեր, դրամաշնորհային՝ նաև միջազգային, հողվածների ամսագրերի տպագրություն, նորոգման և հիմնանորոգման ծախսեր, գովազդային և այլ ծախսերի հողվածներ, որտեղ նաև ներառված է ՌԻԽ-ն (*ներկայացված են 2022թ. տվյալները*):

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

ՄՈՒՀ-ն ապահովում է կառավարման կոլեգիալ մարմիններում՝ հոգաբարձուների խորհուրդ, գիտական խորհուրդ, ֆակուլտետների խորհուրդներ և ռեկտորատ, դասախոսների և ուսանողների ընդգրկվածությունը: ԳԽ-ում յուրաքանչյուրը 25% հարաբերակցությամբ ընդգրկված են դասախոսներ և ուսանողներ, ուսանողներն ընտրվում են ՌԻԽ-ի կողմից, ֆակուլտետների խորհուրդներում նույնպես 25%-ն ուսանողներ են՝ ընտրվում են ֆակուլտետային ՌԻԽ-ի կողմից: ՄՈՒՀ-ի ռեկտորատում ներկայացված է արհմիության նախագահը և Ուսանողական խորհրդի նախագահը: ՊԴ կազմի ներկայացուցիչները առաջադրվում են ֆակուլտետների կողմից, ընտրությունը կատարվում է ԳԽ-ի կողմից:

Ներքին շահակիցների ներգրավումը որոշումների կայացմանը պայմանավորված է նաև դասախոսների և ուսանողների ընդգրկվածությամբ ՄՈՒՀ-ի տարբեր գործընթացների գնահատման հարցումներում, որոնց արդյունքները հիմք են ծառայում որոշումների կայացման համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մի շարք փոփոխությունների հիմքում եղել են ներքին շահակիցների առաջարկությունները, օրինակ էլեկտրոնային տեղեկատվական համակարգի՝ Ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգի (ՌԻԳԱԿՀ) հասանելիությունը ուսանողներին, ֆակուլտետային խորհրդում հարց է բարձրացվել պրակտիկայի ընթացքը ավելացնելու վերաբերյալ և այլն:

2.3 ՄՈւՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

ՄՈւՀ-ի երկարաժամկետ պլանավորումն իրականացվում է 2020-2025թ. ԶՌԾ-ի միջոցով: Նախորդ հավատարմագրման գործընթացից հետո ճգնաժամային իրավիճակով պայմանավորված (համավարակ, պատերազմ, ռեկտորի փոփոխություն, ֆինանսական մուտքերի նվազում) ՄՈւՀ-ին չի հաջողվել հստակ իրականացնել բարելավման պլանով նախատեսված գործողությունները 2020-2022 ժամանակահատվածում: 2022թ. ՄՈւՀ-ը իրականացրել է պլան ժամանակացույցի վերանայում, հաշվի առնելով առկա իրողությունը կազմել է 2022-2025թթ. ԶՌԾ-ի գործողությունների կատարման պլանը: Վերոնշյալ պլանում արտահայտված են ՌԾ գործողությունները, պատասխանատու ստորաբաժանումները, ռեսուրսները, վերջնարդյունքը և ռիսկային գործոնները, յուրաքանչյուր նպատակի և խնդիրներից բխող գործողությունների առաջընթացի գնահատման ցուցիչները: Հարկ է նշել, որ երբեմն սահմանվում են շարունակական բնույթի գործողություններ, որոնց առաջընթացը դժվար է գնահատել, օրինակ՝ խնդիր 1.4 «Շարունակաբար զինել գիտական լաբորատորիաները ժամանակակից սարքավորումներով» (2022-2025 ԶՌԾ պլան էջ 13), սակայն տեսանելի չէ պլանավորումը կոնկրետ լաբորատորիայի զինման համար, ինչ ժամկետում (նշվում է պարբերաբար) և ինչ ֆինանսական միջոցներ են հատկացվելու (բացակայում է ֆինանսական հաշվարկը), սակայն նշվում է ֆինանսական միջոցների անբավարարությունը որպես ռիսկային գործոն: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ տվյալ գործողության առաջընթացի գնահատման ցուցիչն է «Հաշվետու ժամանակաշրջանում, ժամանակակից չափորոշիչներին համապատասխան, առնվազն մեկ գիտական նոր լաբորատորիայի ստեղծում և գործարկում»:

ՄՈւՀ-ի միջնաժամկետ պլանավորումը համալսարանում իրականացվում է հաշվի առնելով ԶՌԾ-ի 2-3 տարի ժամկետ պահանջող գործողությունների իրականացումը, այսուհանդերձ ստորաբաժանումների պլանավորումը իրականացվում է կարճաժամկետ ցիկլով՝ տարեկան պլանավորմամբ: ՄՈւՀ-ը բարեփոխումների շրջանակում ուշադրություն է հատկացրել կարճաժամկետ պլանների և ԶՌԾ-ի փոխկապակցմանը և սահմանված առաջընթացի գնահատման ցուցիչների ապահովմանը: Կարճաժամկետ գործառնական պլանավորում են իրականացնում նաև համալսարանի գիտական խորհուրդը և ռեկտորատը: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ֆակուլտետային և ամբիոնային աշխատանքային պլաններում ներառված են կրթական և գիտական աշխատանքների պլանավորումը, սակայն դրանց փոխկապակցումը ԶՌԾ-ի գործողությունների պլանի հետ տեսանելի չէ: Աշխատանքային պլանների կատարողականը գնահատվում է հաշվետվությունների միջոցով: Հաշվետվությունների կատարման համար մշակված է միասնական ձևաչափ, որով առաջնորդվում են ստորաբաժանումները, հաշվետվություններում չի ներկայացվում համեմատականներ նախորդ տարիների աշխատանքների հետ, որտեղ չի երևում ստորաբաժանման աշխատանքների դինամիկան, օրինակ ամբիոնների հաշվետվություններում սակավաթիվ են նաև վերլուծական տվյալները, դրանք հիմնականում նկարագրական են:

2.4 ՄՈւՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Համաձայն ինքնավերլուծության՝ համալսարանն իր գործունեության վրա ազդող արտաքին գործոններ է համարում՝ ընդունելությունը, ֆինանսավորման համակարգը, աշխատաշուկայի և հասարակական պահանջները, օրենսդրական փոփոխությունները: Ներքին գործոններն են՝ պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնահետազոտական գործունեությունը, հոսունությունը, լաբորատոր գործիքակազմի ապահովվածությունը, ենթակառուցվածքների աշխատանքի կազմակերպման արդյունավետությունը և այլն, որոնց վերաբերյալ համալսարանի համապատասխան ստորաբաժանումների կողմից տարեկան հաշվետվություններում ներկայացվում է SWOT վերլուծություն: Ներքին գործոնների ուսումնասիրությունը իրականացվում է նաև հիմնականում կրթության որակին առնչվող հարցումների միջոցով:

ՄՈՒՀ-ը իրականացրել է իր գործունեության վրա ազդող մակրո և միկրո գործոնների, ինչպես նաև արտաքին շահակիցների կարծիքի վերլուծություն (գործատուների հետ հարցումներ): Արտաքին գործոններն ուսումնասիրելիս ՄՈՒՀ-ը հաշվի է առել «ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագիրը», ինչպես նաև «Վերախմաստավորելով համատեղ ապագայի հեռանկարները. հանրային նոր համաձայնագիր ի նպաստ կրթության» ՅՈՒՆԵՍԿՕ զեկույցը, ըստ այդմ կատարել է համալսարանի գործունեության խնդիրների ու քայլերի կանխատեսում, որոնք արտացոլվել են համալսարանի կողմից մշակված Նոր մանկավարժության տեսլականում: ՄՈՒՀ-ն առանձնացրել է նաև բուհական համակարգում հրատապ լուծում պահանջող մարտահրավերները, օրինակ՝ մանկավարժների մասնագիտական առաջխաղացման արդյունավետ համակարգի բացակայությունը, բարձրագույն կրթության որակի շարունակական բարելավման մեխանիզմների անհրաժեշտությունը և այլն, սակայն ՄՈՒՀ-ը չի ներկայացնում իր ներքին մարտահրավերները. թե դրանցից, որոնք են արդիական հենց ՀՊՄՀ-ի համար: Փորձագիտական խմբի հանդիպումները ցույց են տալիս, որ բուհի ներքին շահակիցները համալսարանի գործունեության վրա առավելապես կանխատեսում են արտաքին գործոնների ազդեցությունը, որոնք հիմնականում մակրո բնույթի են՝ կրթության հարացույցի փոփոխություն, նոր մանկավարժի տեսլական և այլն, ընդգծելով, որ մանկավարժների պատրաստության գործընթացում անհրաժեշտ են համարում այդ գործոնների հաշվառումը, որը նախ և առաջ արտահայտվում է հոգեբանամանկավարժական մոտեցումների ներդրման անհրաժեշտությամբ

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

ՄՈՒՀ-ն իր ՌԾ-ի մշակումը և վերանայումն իրականացրել է որակի ապահովման սկզբունքով՝ հաշվի առնելով նախորդ հավատարմագրման գործընթացի արդյունքում տրված խորհրդատվությունները: Վերջին ժամանակահատվածում իրականացվել են նաև մի շարք փաստաթղթերի վերանայման գործընթացներ («Որակի քաղաքականություն և հայեցակարգային ուղենիշները», «ՀՊՄՀ-ում Արտաքին և ներքին շահակիցների ներգրավում և կարիքների գնահատում» կանոնակարգը 2022թ., «Ուսանողի ուղեցույց» «Կրթական ծրագրերի մշակման և արտոնման կարգը» 2022թ., և այլն), սակայն փաստաթղթային վարչարարության ՊԻԳԲ շրջափուլը ոչ միշտ է գործել: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թեև համալսարանը անցում է կատարել նոր ռազմավարական շրջափուլ, փոխվել է կազմակերպական կառուցվածքը, վերամիավորվել են տարբեր ստորաբաժանումներ, այդուհանդերձ բազմաթիվ կանոնակարգեր շարունակում են

գործել դեռևս 2013, 2014, 2015 թվականից և չեն վերանայվել («ՀՊՄՀ-ի ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման» կարգ, 2014, «ՊԴ անձնակազմի ինքնագնահատման և փորձագիտական գնահատման» և «Փաստաթղթաշրջանառության կարգ» 2015, «Կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի կանոնադրություն», 2018 և այլն): Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նոր փաստաթղթերի մշակումը իրականացվում է նախագծային տարբերակով, որը շրջանառվում է շահակիցների շրջանում և դիտարկումներից հետո քննարկվում է ԳԽ-ում, օրինակ՝ «Մասնագիտության կրթական ծրագրերի ղեկավարման» կարգը, 2023թ.:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ում կրթական ծրագրերի իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը և վերլուծությունն իրականացվում է գրեթե ավտոմատացված ձևով՝ «Ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգ» (ՈւԳԱԿՀ) էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով: 2020-2023թթ. իրականացվել են արդեն կիրառվող՝ Ուսումնական մաս, Ամբիոն, Դեկանատ, Դասախոս, Վարչական մաս և Ադմին մոդուլների սպասարկում: Ընթացիկ պահանջներից ելնելով՝ մոդուլները փոխվում, և բաելավվում են, մասնավորապես 2023թ. ավելացվել է Ուսանող մոդուլը, որը թույլ է տալիս ուսանողական համակազմին հետևել իրենց ակադեմիական առաջընթացին, ուժեղացվել է նաև վերահսկողությունը ամփոփագրերի լրացման նկատմամբ և այլն: Համակարգը ուսումնասովանողակ կազմին հնարավորություն է տալիս ավտոմատ ստանալ ավարտական դիպլոմի հավելվածը՝ տվյալների լրացման փուլում հայտնաբերելով և շտկելով հնարավոր վրիպակները:

2022 թվականից գործում է «ՀՊՄՀ-ում Արտաքին և ներքին շահակիցների ներգրավում և կարիքների գնահատում» կանոնակարգը, որի համաձայն իրականացվում են ուսումնասիրություններ: ՄՈՒՀ-ում իրականացվում են հարցումներ կրթական ծրագրերի իրականացման որակի գնահատման նպատակով, դասախոսը ուսանողի աչքերով, ռեսուրսներից բավարարվածության հարցումներ, գործատուների շրջանում հարցումներ և այլն: ՄԿԾ-ների իրականացման վերաբերյալ տեղեկատվություն է հավաքագրվում նաև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների միջոցով, որտեղ ներկայացվում է ամփոփիչ ատեստավորման գործընթացի SWOT վերլուծություն, դիտարկումներ և առաջարկություններ:

Ֆինանսների ծրագրավորման և վիճակագրության վարչությունը իրականացնում է ՄՈՒՀ-ի ֆինանսատեսական գործունեության ընթացիկ վերլուծությունը, եռամսյակային և տարեկան կտրվածքով ներկայացնում հաշվետվություն: Ընդհանուր առմամբ տարբեր գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը և վերլուծությունը ներկայացվում է հաշվետվությունների միջոցով, որտեղ ներդրված է ինքնավերլուծության գործիքակազմը, այդուհանդերձ նախորդ տարիների հետ համեմատական վերլուծություններ գրեթե չեն կատարվում, որը թույլ չի տալիս տեսնել ստորաբաժանման աշխատանքների առաջընթացը, օրինակ ամբիոնների գիտական աշխատանքների վերաբերյալ և այլն:

Ինչ վերաբերվում է վերոնշյալ մեխանիզմների արդյունավետության գնահատմանը, ապա ՄՈՒՀ-ում դեռևս ինստիտուցիոնալ մակարդակում առկա չէ դրանց արդյունավետության գնահատման գործիքակազմ:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ն ունի բազմաֆունկցիոնալ հարթակներ, որոնք կիրառում է իր գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման համար, ներկայացվում են հաղորդաշարեր, որոնք էթեր են հեռարձակվում հեռուստատեսությամբ, յութուբյան ալիքով, իսկ ռադիո էթերով՝ ուսանողների մասնակցությամբ ներկայացվում են կրթական բնույթի հաղորդումներ, անդրադառնում են կրթական համակարգի արդի խնդիրներին, նաև լուսաբանվում է ՀՊՄՀ գործունեությունը:

Կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի վերաբերյալ քանակական ու որակական տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան հաշվետվությունների (ռեկտորի հաշվետվություն, որտեղ համատեղված է բոլոր ստորաբաժանումների հաշվետվությունները) և ինքնավերլուծական գեկույցների ձևով, պատրաստվում է տարին ամփոփող հաշվետու տեսաֆիլմ, որը տեղադրվում է բաց հարթակներում:

Կայքէջի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարբեր բաժիններում հրապարակումների իրականացման աստիճանը տարբեր է. ոչ բոլոր ֆակուլտետների և ամբիոնների աշխատանքային պլանները և հաշվետվություններն են ներբեռնված համաչափ, երբեմն տեսանելի են միայն վերջին տարվա հաշվետվությունները, աշխատանքային պլաններ չեն հրապարակվում ՄՈՒՀ-ի ստորաբաժանումների համար: Կայքէջի բաժինները համալրվում են ոչ համաչափ, օրինակ՝ 2023-2024 աշխատանքային պլանները ներբեռնված չեն, կայքի օտարալեզու էջերը մասնակի են համալրված, երբեմն անզլերեն հղումների ներքո հասանելի են միայն հայերեն փաստաթղթերը և այլն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում բուհի կառավարման համակարգի բարելավմանը միտված քայլերը, մասնավորապես՝ կազմակերպական կառուցվածքի վերանայումը: Դրական է նաև, որ վերանայված կառուցվածքը հստակեցրել է բուհում որոշումների կայացման գործընթացները, այդուհանդերձ կառուցվածքային գծապատկերում թույլ են արտահայտվում հորիզոնական կապերը: Փորձագիտական այցի ընթացքում ընդգծվեց, որ ՄՈՒՀ-ը գիտակցում է կազմակերպական կառուցվածքի թերությունները, սակայն ճգնաժամային իրավիճակում որոշումները կայացվել են համակարգը նվազագույն ցնցումների ենթարկելու տրամաբանությունից՝ խուսափելով համակարգային փոփոխություններից, որը կարող էր նոր ճգնաժամի պատճառ դառնալ: Առավելապես ուշադրություն է հատկացվել պաշտոնների անձնագրերի մշակմանը և գործառնությունների հստակեցմանը, բացառելով կրկնությունները: Փորձագիտական խումբը, դրական համարելով փոփոխությունները, որոնք նպաստել են կառավարման համակարգի կայունացմանը և վարչական աշխատակիցների թվաքանակի օպտիմալացմանը, այդուհանդերձ գտնում է, որ կառավարման համակարգի բարելավումը շարունակում է մնալ արդիական:

Հարկ է նշել, որ բուհի կազմակերպական կառուցվածքում շարունակում են տեղ գտնել կառավարման համակարգի բարելավումը խոչընդոտող լուծումներ, ինչպես օրինակ պրոռեկտորների միջև հորիզոնական կապերի բացակայությունը, կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի դիրքը: Վերջինս խզում է Ռեկտոր-Որակի ապահովում ուղիղ կապը, մյուս կողմից Որակի ապահովումը կենտրոնացված է միայն կրթության որակ հասկացության հետ գտնվելով «կրթական գործընթացների կառավարման և

բարեփոխումների վարչության» կազմում, ինչը հանգեցնում է ՄՈՒՀ-ի որակի համակարգի թեր ընկալմանը ներքին շահակիցների կողմից: Այս իմաստով կարևոր է, որ ՈԱ-ն նպաստի բոլոր գործընթացների ՊԻԳԲ շրջափուլի ապահովմանը, ունենալով բավարար ինքնավարություն՝ գնահատելու կառավարման համակարգի արդյունավետությունը: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգի հետագա լավարկումը լիովին կախված է որակի ապահովման համակարգի զարգացումից, վերջինիս ինքնավարության ապահովումը հրատապ լուծում պահանջող խնդիր է, ինչը կհանգեցնի կառավարչական որոշումների արդյունավետության բարձրացմանը:

Դրական է, որ ՄՈՒՀ-ը կառավարման համակարգում կարևորվում է ստորաբաժանումների ինքնավարությունը և հորիզոնական կապերի ամրապնդումը, որը դիտարկում է որպես կառավարման ավելի արդյունավետ մոդել, այսուհանդերձ փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հորիզոնական կապերը դեռևս բավարար արդյունավետ չեն գործում, օրինակ՝ միջաֆակուլտետայի և միջամբիոնային համագործակցությունը դեռևս թույլ է արտահայտված: Դրական է, որ ՄՈՒՀ-ը նախատեսում է գնահատել ամբիոնների և ֆակուլտետների բաշխվածության արդյունավետությունը, որը թույլ կտա բարձրացնել ՄԿԾ կառավարման արդյունավետությունը, իսկ գիտաձյուղի մասնագիտացումների և առարկաների համակարգումը, կարող է նպաստել նաև միջամբիոնային կապերի ամրապնդմանը:

Դրական է, որ ՄՈՒՀ-ը ունի ֆինանսատնտեսական գործունեությունը համակարգող ենթակառուցվածքներ, ապահովված է վերջիններիս գործունեության իրավանորմատիվային հենքը, սակայն ֆինանսական միջոցների բաշխման հստակեցված քաղաքականություն՝ ըստ ռազմավարական ուղղությունների ՄՈՒՀ-ը դեռևս չի մշակել: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՄՈՒՀ-ը փնտրում է ֆինանսների կառավարման արդյունավետ մոդելներ, ինչի մասին է փաստում նաև բյուջեի երկարաժամկետ պլանավորման փորձը: Այնուամենայնիվ, մշակված փաստաթուղթը սակավ կիրառական է, քանի որ համալսարանի եկամուտների զգալի մասը կախված է տարեկան մուտքերից և արտաբյուջեից, մասնավորապես վճարովի ուսուցման համակարգից, որն իր մեջ ռիսկեր է պարունակում՝ հաշվի առնելով ուսանողների թվակազմի հնարավոր կրճատումը, դրամաշնորհային ծրագրերի թվի կիճատումը և այլն: Այս տվյալները ենթակա են ամենամյա փոփոխության, որը և թույլ չի տալիս իրականացնել ֆինանսական երկարաժամկետ պլանավորում: Մյուս կողմից, ՄՈՒՀ-ի հիմնական ծախսը (72%) աշխատավարձի վճարումն է, որը և ընդգծում է ֆինանսական մուտքերի շարունակական բազմազանեցման և նոր աղբյուրների որոնման կարևորությունը, ինչը կարող է նպաստել բյուջեի դրական մնացորդի աճին և ՄՈՒՀ-ի ֆինանսական կայունության ապահովմանը:

Դրական է, որ համալսարանում ապահովված է ներքին շահակիցների մասնակցությունը իրենց առնչվող որոշումների կայացմանը, որին նպաստում են ձևավորված կառուցակարգերը, տեսանելի են նաև որոշակի հիմքեր: Դրական է, որ շահակիցների ներգրավումը տարբեր գործընթացներում կրում է ինստիտուցիոնալ բնույթ, այդուհանդերձ կարևոր է նաև այդ աշխատանքներում կիրառվող գործիքակազմի լավարկումը և բազմազանեցումը, ինչը թույլ կտա բարձրացնել շահակիցների մասնակցայնությունը:

Փորձագիտական խումբը, հաշվի առնելով այն իրադրությունը, որը թույլ չի տվել համալսարանին իրականացնել նախորդ հավատարմագրման գործընթացի արդյունքում ստացած խորհրդատվությունները, դրական է համարում, որ ՄՈՒՀ-ը, գնահատելով

բացթողումները, վերանայել է թերությունների վերացման ծրագրի ժամանակացույցը՝ այն համադրելով ՋՌԾ 2022-2025 գործողությունների պլան ժամանակացույցի հետ: Փորձագիտական խումբը ընդգծում է վերոնշյալ փաստաթղթի հստակեցման անհրաժեշտությունը, մասնավորապես շարունակական առաջընթաց պահանջող գործողություններում ցանկալի է պլանավորել բարելավման առաջնահերթությունները: Օրինակ հստակեցնել թե, որ լաբորատորիայի վերազինում է նախատեսվում պլանավորվող ընթացքում, իսկ ֆինանսական ռեսուրսների հետ փոխկապակցման բացակայությունը որոշ դեպքերում թույլ չի տալիս գնահատել պլանավորման իրատեսականությունը, պատասխանատուների լայն շրջանակի սահմանումը իր հերթին կարող է նվազեցնել գործողությունների կատարողական արդյունավետությունը: Վերոնշյալը թույլ կտա ՄՈՒՀ-ին կարճաժամկետ պլանավորումը փոխկապակցելով ՋՌԾ-ի հետ բարձրացնել՝ վերջինիս արդյունավետությունը, հասնելով ՌԾ-ով սահմանված ակնկալվող արդյունքներին, սահուն անցում կատարելով միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ համալսարանն իր նոր ՋՌԾ-ի մշակմանն ընդառաջ իրականացրել է մի շարք արտաքին գործոնների ուսումնասիրություն, որը նաև հիմք է հանդիսացել առաքելության, նպատակների և տեսլականի ձևավորման համար, որոշակիորեն ուսումնասիրվել են նաև ներքին գործոնները, այս համատեքստում հարկ է նշել, որ ուսումնասիրությունները ընդգրկում են բոլոր ստորաբաժանումների աշխատանքները, որոնք արտահայտվում են իրենց հաշվետվություններում, նաև դրական է, որ ներքին գործոնների ուսումնասիրությունը դրվել է ստորաբաժանումների աշխատանքների իրականացման հիմքում: Փորձագիտական խմբի հանդիպումները շահակիցների հետ, ցույց են տալիս, որ վերջիններս համալսարանի զարգացման վրա տեսնում են առավելապես արտաքին գործոնների ազդեցությունը, իրենց գործողությունները փորձում են փոխկապակցել արտաքին ազդեցություններին դիմակայելու կամ արտաքին միջավայրի (աշխատաշուկայի) պահանջներին համապատասխան կրթություն մատուցելու կարիքների հետ, այդուհանդերձ ավելի քիչ է շեշտադրվում ներքին գործոնների դերակատարությունը: Մասնավորապես՝ որն է լինելու նոր մանկավարժի կերպարը, որն է համալսարանի դերակատարությունը որպես մանկավարժներ թողարկող հաստատություն: Փորձագիտական խումբը գտնում է, որ այդ աշխատանքներում ներքին գործոնների ազդեցության հաշվառումը կարող է նպաստել առաքելության և նպատակների հաջող իրագործմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ տարբեր գրոծընթացներում ՄՈՒՀ-ը առաջնորդվում է ՊԻԳԲ սկզբունքով, ինչպես նաև այս մշակույթը տարածել ստորաբաժանումների աշխատանքներում, այդուհանդերձ որակի ապահովման սկզբունքով գործելառճը դեռևս կայացման փուլում է: Մասնավորապես ոչ միշտ են որոշումները կայացվում օբյեկտիվ վերլուծական տվյալների հիման վրա, որոշ դեպքերում տեսանելի է գործընթացների բարելավում, սակայն փաստաթղթային հենքը չի ապահովում ընթացակարգային կարգավորումները. ներդրված են նոր փաստաթղթեր, որոնց ազդեցությունը դեռևս գնահատված չէ, իսկ գնահատման գործիքակազմը դեռևս չի ընդգրկում կիրառվող մեխանիզմների արդյունավետության գնահատումը: Վերոնշյալը անդրադառնում է որակի ապահովում-արդյունավետ կառավարում փոխգործակցության վրա: Փորձագիտական խումբը անհրաժեշտ է համարում ՊԻԳԲ շրջափուլի կիրառության շրջանակների ընդլայնումը, որը հնարավոր է միայն որակի ապահովման գործիքակազմի հետագա բարելավմամբ:

Փորձագիտական խումբը դրական է համարում նաև ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերի, շնորհվող որակավորումների վերաբերյալ բազմաբովանդակ տեղեկատվության հրապարակումը և հասանելիությունը ներքին և արտաքին շահակիցներին, որի համար ակտիվորեն կիրառվում են կայքէջը, սոցիալական էջերը, մեդիա դաշտը, հեռուստատեսությունը և տպագիր մամուլը: Այս համատեքստում կարևոր է կիրառվող գործիքակազմի հնարավորությունների լիարժեք օգտագործումը, մասնավորապես կայքէջի բաժինների համալրումը՝ ապահովելով բոլոր մասնագիտությունների կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը, ուշադրություն հատկացնելով ամբիոնային և ֆակուլտետային էջերի լիարժեք ներկայացմանը, էջերի եռալեզու սպասարկմանը: Մյուս կողմից դրական համարելով հաշվետվողականության ձևավորված մշակույթը՝ հարկ է ընդգծել, որ առանձին ստորաբաժանումների վերլուծությունները չեն ամփոփվում և ընդհանրացվում, տեսանելի չէ ՄՈՒՀ-ի համապարփակ նկարագիրը, այն դեռևս մասնատված է առանձին ստորաբաժանումների հաշվետվություններում զետեղված տեղեկատվության մեջ, որի առկայությունը կնպաստեր բուհի գործունեության թափանցիկության ավելավացմանը և հաշվետվողականության գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրման գործընթացից հետո ՄՈՒՀ-ին հաջողվել է իրականացնել հակաճգնաժամային քաղաքականություն, որոշակիորեն բարելավվել են կազմակերպական կառուցվածքը, որոշումների կայացումը համակարգված է ընթացակարգերով, ընդլայնվել է ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում, որոշակիորեն բարելավվել են վարչարարությունը, ինչպես նաև ՄԿԾ-ների և այլ գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և վերլուծության մեխանիզմները, որոշակիորեն իրականացվում է ՄՈՒՀ-ի գործունեության վրա ազդող (արտաքին և ներքին) գործոնների ուսումնասիրություն, ապահովված է որոշումների հրապարակայնությունը և թափանցիկությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՀՊՄՀ-ն բավարարում է չափանիշ 2-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՊՄՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է բավարար:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Ներկայումս ՀՊՄՀ-ն իրականացնում է կրթություն ՈԱՇ-ի 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակներում՝ ընդհանուր 108 կրթական ծրագիր, որից 44-ը՝ բակալավրի, 64-ը՝ մագիստրոսի կրթական աստիճաններում: Ընդհանուր առմամբ բակալավրի և

մագիստրոսական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, դրանց կառուցվածքը հստակ է և վերջնարդյունքահենք:

Նախորդ հավատարմագրումից հետո փորձագիտական խմբի կողմից դիտարկված ծրագրերից օրինակ՝ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» ՄԿԾ-ում վերջին մի քանի տարվա փոփոխությունների արդյունքում ներդրվել են «Մաթեմատիկական սխալների կանխարգելման և հաղթահարման ուղիներ», «Մեդիագրագիտություն» առարկաները, իսկ «Հոգեբանություն» մասնագիտական կրթական ծրագրում ներդրվել են «Զինվորական գործունեության և կոլեկտիվի հոգեբանություն» պարտադիր, և «Ճգնաժամային հոգեբանություն» կամընտրական առարկաները:

«Կերպարվեստ» ՄԿԾ-ում վերաբաշխումներ են կատարվել առարկաներին հատկացվող կրեդիտների քանակներում, մասնավորապես հաշվի առնելով ուսանողների կարիքները՝ փոփոխվել են «Գունանկար» և «Կոմպոզիցիա» առարկաները 6 կրեդիտից՝ դառնալով 8: Ներկայումս «Կերպարվեստ» ՄԿԾ-ում շեշտադրվել է մանկավարժական ուղղվածությունը, որպեսզի ուսանողները կարողանան սովորցնել աշակերտներին նկարել. նախկինում ՄԿԾ-ն առավել շատ շեշտադրել է ակադեմիական կերպարվեստը:

Նախորդ հավատարմագրումից հետո մշակվել և համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատվել են «ՄՈՒՀ-ի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը», «ՄՈՒՀ-ի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը», «ՄՈՒՀ-ի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը», «ՄՈՒՀ-ի բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգը», «ՄՈՒՀ-ի մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգը», «ՄՈՒՀ-ի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգը»:

2022 թվականին պրոֆեսորադասախոսական կազմի համար համալսարանը կազմակերպել է մասնագիտական կրթական ծրագրերի, առարկայական նկարագրերի որակի բարձրացմանն ուղղված մանկավարժամեթոդական վերապատրաստման դասընթացներ, որոնց արդյունքում ներկայումս բակալավրի և մագիստրոսի բոլոր կրթական ծրագրերն ունեն սահմանված ձևաչափի մասնագրեր՝ տեղադրված համալսարանի պաշտոնական կայքում: 2023թ. Մանկավարժության Որակավորումների ոլորտային շրջանակների (ՈՈՇ) հաստատումից հետո ՄՈՒՀ-ը իրականացրել է Կրթական ծարգերի վերջնարդյունքների վերանայում՝ դրանք համահնչեցնելով ՈՈՇ-ին, իրականացվել է նաև առարկաների քարտեզագրում կրթական ծրագրի վերջնարդյունքների և դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների հետ: Վերանայվել են նաև առարկայական նկարագրերը, որտեղ հստակեցվել են տվյալ դասընթացով ձևավորվող ելքային արդյունքները: Առարկայական նկարագրերում մանրակրկիտ ներկայացվում է առարկայի դասավանդման ընթացքը, անհրաժեշտ գրականությունը, գնահատման բաղադրյալները և մեխանիզմները, ստուգումների ձևը և ուսանողին ներկայացվող պահանջները, թեմատիկ տրոհումը, գնահատման ռուբրիկները յուրաքանչյուր ստուգման համար (միջանկյալ ստուգում, ամփոփիչ ստուգում, գնահատվող հանձնարարական և այլն):

Մասնագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ՀՄՊՀ դասախոսները, հանդիսանալով հանրակրթական չափորոշիչների հեղինակներ և աշխատանքային խմբի անդամներ՝ ոլորտում կատարվող փոփոխություններն ամբիոնային քննարկումներից հետո ներառվում են ՄԿԾ-ներում:

Նախորդ հավատարմագրման գործընթացից ստացված խորհրդատվությունների հիման վրա ՄՈՒՀ-ը հստակեցրել է Google Classroom հարթակի կիրառությունը. այն ամրագրված է ինչպես առարկայական նկարագրերում, այնպես էլ ուսումնական պլաններում (դասախոսի ծանրաբեռնվածության մաս է կազմում), որի համար հատկացված է որոշակի ժամաքանակ: Ուսումնական պլաններում ուշադրություն է հատկացվել յուրաքանչյուր կրթաբլոկում կամընտրական առարկաների ներառմանը: Փորձագիտական հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ կամընտրական առարկաների ընտրությունը կատարվում է՝ հաշվի առնելով ուսանողների կրթական կարիքները, որոնք կարող են բարձրաձայնվել ինչպես ուսանողների, այնպես էլ դասավանդողների կողմից: Օրինակ՝ մագիստրատուրայում մեծ պահանջարկ կա մանկավարժական և հոգեբանական ուղղվածությամբ կրթական ծրագրերի, որոնց հաճախ դիմում են ոչ մանկավարժական բազային կրթությամբ ուսանողներ (ընդունելությունը կատարվում է մանկավարժություն և հոգեբանություն առարկաներից՝ հարցազրույցի միջոցով): Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այսպիսի ուսանողների քանակը բավականին շատ է, ովքեր խնդիրներ են ունենում մասնագիտական մանկավարժական առարկաների ուսումնասիրության ժամանակ, ուստի կարիք է առաջանում իրականացնել հավելյալ դասընթացներ: Այս խնդիրը լուծելու նպատակով կամընտրական առարկաներում ներառված են մանկավարժություն և հոգեբանություն առարկաները: Հարկ է նշել, որ ներկայացրած երեք մասնագիտական ծրագրերի ուսումնական պլաններում թեև ներկայացված էին կամընտրական դասընթացներ, ինչը կարևոր նախադրյալ է ուսանողակենտրոն ուսուցման համար, սակայն դրանց ընտրության կարգը համալսարանում առկա չէ, և փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ այս գործընթացը կանոնակարգված չէ:

ՀՊՄՀ-ի կրթական ծրագրերի ուսումնական պլանների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք ունեն նմանատիպ կառուցվածք, սակայն մասնագիտական կրթամասերում դասախոսությունների ժամաքանակը հիմնականում գերակշիռ է գործնականի նկատմամբ:

ՀՊՄՀ-ում կարևորում են աշխատաշուկայի առաջադրած նոր պայմանները, և արդյունքում 2023-2024 ուստարվանից սկսված ներդրվել են կրկնակի մասնագիտացումներով բակալավրի կրթական ծրագրեր՝ ապահովելու բնական և ճշգրիտ գիտությունների մանկավարժների պակասը Հանրապետությունում:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ համալսարանը նախատեսում է 2024 թվականին ամբողջովին վերանայել կրթական ծրագրերը բովանդակային առումով՝ մանկավարժական ուղղվածության մեջ ավելացնելով հոգեբանական բաղադրիչը, և հակառակը: ՄՈՒՀ-ը նաև ՄԿԾ դեկավարման կարգ է մշակել (նախագիծ), որը ՄՈՒՀ-ի դիտարկմամբ թույլ կտա առավել համակարգված իրականացնել կրթական ծրագրերի բարելավմանը միտված փոփոխությունները:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Համալսարանի կողմից ներկայացված երեք ՄԿԾ-ներում կրթական վերջնարդյունքների նկարագրմանը զուգահեռ ներկայացված են նաև դասավանդման, ուսումնառության և գնահատման ձևերն ու մեթոդները՝ ըստ մասնագիտական գիտելիքի և իմացության, գործնական մասնագիտական կարողությունների և ընդհանրական կարողությունների: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՄԿԾ-

ների բոլոր վերջնարդյունքների խմբերի՝ մասնագիտական գիտելիք և իմացության, գործնական մասնագիտական կարողությունների և ընդհանրական փոխանցելի կարողությունների համար ներկայացված են նույնական մեթոդներ և գնահատման ձևեր:

Մասնագիտական հանդիպումներից և առաջադրանքների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողներին տրվող առաջադրանքները միտված են լսարանի արդյունավետ կառավարման, դասի պլանների կազմման կարողությունների զարգացմանը: Դասախոսները կարևորում են ուսանողների հաղորդակցական հմտությունների զարգացումը՝ հաշվի առնելով, որ ապագա ուսուցիչները համագործակցելու են աշակերտների ծնողների հետ: Վերջինիս նպատակով՝ Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ-ում ուսանողներին հանձնարարվում են իրավիճակային դեպքեր (case), որոնք միտված են ուսանողների հաղորդակցական հմտությունների զարգացմանը:

Դասալսումներից պարզ դարձավ, որ Կերպարվեստ ՄԿԾ-ում դասավանդման ընթացքում շեշտադրվում է ուսանողի մանկավարժահոգեբանական կարողությունների զարգացումը՝ հնարավորություն ընձեռելով աշակերտին արտահայտելու իր մտքերն ու գաղափարները: Դասախոսների մեծ մասը խմբային աշխատանքն է համարում արդյունավետ, որը որպես դասավանդման մեթոդ նաև ուսուցանվում է ուսանողներին (օրինակ՝ մանկավարժական պրակտիկայի շրջանակներում դպրոցում տարվա եղանակների ուսուցանման ժամանակ ուսանողներն աշակերտներին սովորեցնում են աշխատել/ստեղծագործել մեկ նկարի վրա՝ ձևավորելով թիմային աշխատանքի կարողություններ):

Այցից պարզ դարձավ նաև, որ որոշ ՄԿԾ-ներում տեսանելի են նաև միջառարկայական կապեր: Օրինակ՝ Աշխարհագրության ՄԿԾ-ի մասնագիտական ՏՀՏ առարկայի շրջանակներում ուսանողներին հանձնարարվում է կիրառել ՏՏ գործիքներ քատեզագրության համար: Հարկ է նշել, որ նման օրինակները դեռևս շատ չեն: Թույլ է համագործակցությունը տարբեր ամբիոնների միջև:

2022թ. մշակվել է «Կրթական ելքային արդյունքների, դասավանդման և ուսումնառության մեթոդների և գնահատման միջև կապը» ուղեցույցը, առարկայական նկարագրերում դասավանդման և ուսումնառության մեթոդները և գնահատման մեթոդները վերջնարդյունքների հետ փոխկապակցման համար:

Դասավանդման և ուսումնառության մեթոդները ներկայացվում են տվյալ առարկայի թեմատիկ տրոհման փաթեթում, որտեղ յուրաքանչյուր թեմայի համար ներկայացվում է նպատակը, դասավանդման մեթոդները, տեղեկատվական նյութեր (օգտակար գրականության ցանկը) ուսումնառության առաջադրանքները, հակիրճ տեղեկատվություն գնահատման վերաբերյալ, այդուհանդերձ առարկայական նկարագրերում չեն արտահայտվել առարկայի դասավանդման և ուսումնառության մեթոդները:

ՄՈՒՀ-ը կիրառում է Google Classroom էլեկտրոնային հարթակը՝ որպես կրթական գործընթացների կառավարման և կազմակերպման գործիք: Այսպիսով, յուրաքանչյուր առարկայի թեմատիկ տրոհումը, գնահատման չափանիշները և ուսումնառության համար օգտակար նյութերը, հարցաշարերը, հարցատոմսերի օրինակները, ինչպես նաև որոշ առարկաներից տրվող հանձնարարականները ներկայացվում և գնահատվում են (անհատական և հետազոտական աշխատանքներ, ռեֆերատներ, պրեզենտացիաներ, թեստային առաջադրանքներ): Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ Google Classroom հարթակի կիրառությունը հստակ կանոնակարգվում է Կրթության

Էլեկտրոնային կառավարման բաժնի կողմից: Հարթակն առավել ակտիվ կիրառվում է մագիստրատուրայի առկա ուսուցման ժամանակ, որը կազմակերպվում է հիբրիդային ձևով՝ 3-ից 2 օր՝ հեռավար, մեկ օր առկա ուսուցմամբ:

Այդուհանդերձ, ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հարթակում տեղադրվող աշխատանքների համար (հետազոտական աշխատանք, ռեֆերատներ, ներկայացումներ) ոչ միշտ է տեսանելի գնահատականի հիմնավորումը (ռուբրիկները):

Դասավանդման և ուսումնառության մեթոդների դիտարկումը ցույց է տալիս, որ ՄՈՒՀ-ը ձգտում է կիրառել ակտիվ ուսուցման մեթոդներ, հարկ է նշել, որ լսարանները հագեցած են անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, ինչը հնարավորություն է տալիս դասախոսներին կիրառել SS միջոցները դասավանդման ընթացքում:

Փորձագիտական խումբը, այնուամենայնիվ, նշում է, որ կիրառվող մեթոդների արդյունավետության գնահատում բուհը չի կատարել:

3.3 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

ՀՊՄՀ-ն ունի 2014 թվականին հաստատված «ՀՊՄՀ-ի ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման» կարգ: Ըստ այդ կարգի՝ գնահատման համակարգը բազմաբաղադրիչ և կուտակային է և իր մեջ ներառում է ուսանողների հաճախումները, գործնական կամ լաբորատոր, սեմինար պարապմունքներին ակտիվության աստիճանը, միջանկյալ և եզրափակիչ քննությունների միավորները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գնահատման գործընթացը փոփոխություններ է կրել 2014թ. -ից հետո, սակայն նոր կանոնակարգ ՄՈՒՀ-ը դեռևս չի մշակել. փոփոխությունները հիմնականում միտված են գնահատման գործընթացի արժանահավատության և թափանցիկության բարձրացմանը: Համավարակից հետո (COVID-19) ՄՈՒՀ-ն իրականացնում է ինչպես հիբրիդային, այնպես էլ հեռավար ուսուցում. բազմաթիվ հանձնարարականեր գնահատվում են առցանց հարթակում, սակայն գնահատման կանոնակարգը չի անդրադարձնում այս հարցերին: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները փաստում են, որ ՄՈՒՀ-ը դեռևս չի ներդրել հեռավար ձևաչափով գնահատման օբյեկտիվության ապահովման հստակ գործիքակազմ:

Ուսանողների գիտելիքների գնահատումն իրականացվում է գնահատման 4 ձևի՝ 2 միջանկյալ և ամփոփիչ ստուգմամբ, 2 միջանկյալ՝ առանց ամփոփիչ ստուգման, մեկ միջանկյալ և ամփոփիչ ստուգմամբ և ստուգարքային ամփոփմամբ՝ առանց միջանկյալների: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի կրթության էլեկտրոնային կառավարման բաժնին ամբողջապես անցում է կատարել էլեկտրոնային ամփոփաթերթերի կիրառությանը, որը դասախոսը լրացնում է ինքնուրույն: Կենտրոնի կողմից ամփոփաթերթը ձևավորվում է քննությունից 24 ժամ առաջ, իսկ ցանկացած վրիպակ արդեն լրացված տեղեկագրում ենթակա է փոփոխության միայն զեկուցագրի և հիմնավորման արդյունքում, որը նույնպես կատարվում է էլ. ձևաչափով:

Համալսարանը կազմակերպել է հարցումներ ուսանողների և դասախոսների շրջանում գնահատման նոր համակարգի արդյունավետությունը գնահատելու և խնդիրները վերհանելու նպատակով: Հարցման արդյունքում պարզվել է, որ դասախոսները և ուսանողները հիմնականում ընդունելի են համարում ուսանողների գիտելիքների և կարողությունների գնահատման գործող համակարգը և 100 միավորանոց սանդղակը:

Գնահատման մեթոդների դիտարկումը ցույց է տալիս, որ դասախոսները հաշվի են առնում ուսանողների/լսարանի կարիքները՝ ընտրելով համապատասխան մեթոդներ,

մասնավորապես իրականացվում են անհատական պրեզենտացիաների և խմբային աշխատանքների գնահատում (նաև հետազոտական աշխատանքներ), հաճախ կիրառվում է ինքնագնահատման մեթոդը, օրինակ կերպարվեստ ՄԿԾ-ում աշխատանքների գնահատումը իրականացվում է ցուցադրության ժամանակ, վերլուծության քննարկման միջոցով, որտեղ ուսանողները կարող են ինքնագնահատում կատարել և դիտարկել միմյանց աշխատանքները (փոխադարձ գնահատում), որը օգնում է ձևավորել օբյեկտիվ գնահատական:

Հաշվի առնելով գնահատման գործընթացը բարելավելու վերաբերյալ խորհրդատվությունը՝ ՄՈՒՀ-ը ՄԿԾ-ների առարկայական նկարագրերում հստակ պահանջ է սահմանել ներկայացնել ստուգման ձևերին համապատասխան գնահատմանը ներկայացվող պահանջները և գնահատման ռուբրիկները: Այդուհանդերձ, փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ոչ միշտ են պահապանվում այս նորմերը, օրինակ՝ կան հարցատոմսեր, որտեղ ամրագրված չեն հարցերի կշիռները: Հարկ է նշել, որ ոչ միշտ են ներկայացվում հստակ չափանիշներ, օրինակ հետազոտական աշխատանքների գնահատումը յուրաքանչյուր դասախոս կատարում է իր հայեցողությամբ (ինստիտուցիոնալ մակարդակում համակարգված չէ), տեսանելի չէ ակադեմիական ազնվության նորմերի պահպանման/խախտելու հետևանքները աշխատանքի գնահատականում, բովանդակային պահանջները, աշխատանքներում երբեմն բացակայում են եզրակացությունը և օգտագործված աղբյուրների ցանկը:

ՄՈՒՀ-ը կիրառում է կուրսային աշխատանքների կազմակերպման, կատարման և գնահատման կարգը: ՄՈՒՀ-ում հստակեցված է նաև ամփոփիչ ատեստավորման գնահատման համակարգը բակալավրի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության համար: Բակալավրի ավարտական աշխատանքը և մագիստրոսական թեզը գնահատվում են 100 միավորանոց համակարգով ու առանձնացված բաղադրիչներով: Բակալավրի ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի գնահատման բաղադրիչներն են՝ աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը (10 միավոր), հետազոտության իրականացումը և արդյունքները (30 միավոր), աշխատանքի շարադրումը և ձևավորումը (20 միավոր), աշխատանքի հրապարակային պաշտպանությունը ու հենքային ընդհանուր գիտելիքների տիրապետումը (40 միավոր): Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դիտարկվող երեք ՄԿԾ-ներում ավարտական աշխատանքներում և մագիստրոսական թեզերում առկա է հետազոտական բաղադրիչ, ուսանողները կատարում են վերլուծական աշխատանք: Միննույն ժամանակ, որոշ դեպքերում առկա է հետազոտական արդյունքների ներկայացման ոչ հստակ մեթոդաբանություն, գրականության ոչ հստակ ցանկ և այլն:

Պետք է նշել, որ յուրաքանչյուր ՄԿԾ-ում դրսևորվում են տարբեր մոտեցումներ՝ հաշվի առնելով մասնագիտության առանձնահատկությունները, օրինակ ուսումնասիրությունների արդյունքնում պարզ դարձավ, որ 2022թ. Կերպարվեստի ամբիոնի նիստում հաստատվել են «Կերպարվեստ» ՄԿԾ-ի ամփոփիչ ատեստավորման բաղադրիչները, որտեղ կիրառվում է բազմագործոն մոտեցում՝ 20% պրակտիկա, 30% մեթոդական մաս, 50% կատարողական ստեղծագործություն:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ 2022-2023 ուստարվա ավարտին գիտխորհրդում առաջարկվել է հստակեցնել ավարտական աշխատանքների կատարման և գնահատման չափանիշները՝ հաշվի առնելով ամփոփիչ ատեստավորման

արդյունքները, մշակվել է համապատասխան նախագիծը (Բակալավրի ավարտական աշխատանքների կազմակերպման, իրականացման և գնահատման կարգ):

ՄՈՒՀ-ում իրականացվում են մանկավարժական պրակտիկաների հետևյալ տեսակները՝ ուսումնական, ուսումնաճանաչողական, կիրառական-վերլուծական, ամփոփիչ գնահատող: Համալսարանը վերանայել է նաև պրակտիկաների կազմակերպման ընթացքը՝ ներդնելով շարունակական պրակտիկաները, ուսանողների առաջարկությամբ պրակտիկայի թղթապանակը թղթայինից դարձել է էլեկտրոնային ձևաչափի: Պրակտիկայի գնահատումն իրականացվում է թղթապանակի և հաշվետվության ներկայացմամբ: 2016թ. -ից պրակտիկան գնահատվում է պաշտպանության միջոցով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ պրակտիկայի թղթապանակում ներառվում են նաև ուսանողների իրականացրած հետազոտությունները և դրանց արդյունքները, օրինակ՝ ուսումնասիրում են աշակերտների անձի հոգեբանական նկարագիրը, դասի մանկավարժական պայմանները, ծնողների հետ աշխատանքի առանձնահատկությունները և այլն:

Համալսարանում առկա է ակադեմիական ազնվությունը պաշտպանող «Ցիտման նորմերի և գրագողության մասին» (2015թ.) կանոնակարգ: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կանոնակարգի դրույթները դեռևս լիովին չեն տարածվել ուսանողների և դասախոսների շրջանում, մասնավորապես՝ հետազոտություն-ուսումնառություն համատեքստում այդ նորմերը ոչ միշտ են պահպանվում:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը, միջազգայնացմանը:

Նախորդ հավատարմագրման գործընթացից հետո ՄՈՒՀ-ը մշակել է «Բենչմարք (հենանշման) մեթոդական ուղեցույցը», որտեղ մանրամասն ներակայացվում է բենչմարքինգի իրականացման մեթոդաբանությունը: ՄՈՒՀ-ում բենչմարքինգն իրականացվել է հիմնականում տարբեր բուհերի նույն մասնագիտությունների նույնատիպ դասընթացների ժամաքանակների և կրեդիտների միջև, սակայն բացակայում է ուսումնառության և դասավանդման մեթոդների, գնահատման համակարգի, վերջնարդյունքների, հետազոտական բաղադրիչի համեմատությունները, ինչպես նաև բենչմարքինգը չի հանգեցրել ՀՊՄՀ-ի կամ այլ բուհի առաջավոր փորձի բացահայտմանը և կիրարկմանը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը դիտարկում է տարբեր երկրներում առանձին համալսարանների հետ փորձի փոխանակումը, ինչպես նաև հրնթացս ուսումնասիրում է եվրոպական բուհերի համանման կրթական ծրագրերը: Ուսումնասիրությունների արդյունքում վեր են հանվել մի շարք խնդիրներ, ի թիվս որոնց շարժունության պատուհանի ապահովումն է, ՄՈՒՀ-ը այդ հնարավորությունները տեսնում է կամընտրական առարկաների տեսակարար կշռի ավելացմամբ:

3.5 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ՀՊՄՀ-ում մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման համար գործում է 2012 թվականին հաստատված «Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգը», ըստ որի՝ կրթական ծրագրերի մշտադիտարկումն իրականացվում է յուրաքանչյուր տարի ամբիոնի կողմից հաստատած ժամանակացույցով և պատասխանատուներով: Մշտադիտարկման գործիքներից են դասալսումները, ուսանողների

և դասախոսների հարցումները, որոնց արդյունքում ուսումնական տարվա վերջում ամբիոնի նիստում քննարկվում է հավաքագրված տեղեկատվությունը և ներկայացվում ֆակուլտետի դեկանին՝ ֆակուլտետային հանձնաժողովում քննարկելու նպատակով: Կարգով սահմանված է կրթական ծրագրերի վերանայում՝ յուրաքանչյուր հինգ տարին մեկ:

Ըստ ինքնավերլուծության՝ համալսարանի արտաքին շահակիցները ևս մասնակցում են կրթական ծրագրերի մշտադիտարկմանը՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունների ներկայացմամբ, շրջանավարտները՝ ՄՈՒՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ հարցումների միջոցով, գործատուները՝ պրակտիկանտ-ուսանողների պատրաստվածությունից ստացած կարծիքների ներկայացմամբ:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի ղիտարկումները ներկայացվում են «Ամփոփիչ ատեստավորման գործընթացի SWOT վերլուծության» միջոցով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերլուծությունները անդրադառնում են ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի բովանդակությանը, թեմաների ընտրությանը, հետազոտական բաղադրիչին և այլն: Այսուհանդերձ, հանձնաժողովների նախագահների կողմից հաճախ նույն ղիտարկումներն են ներկայացվում և՛ բակալավրիատի, և՛ մագիստրատուրայի աշխատանքների վերաբերյալ (Մաթեմատիկա, Տեխնոլոգիա և ձեռնարկչություն, Կերպարվեստ, ԳԿ ֆակուլտետի այլ մասնագիտություններ, Հոգեբանություն և հարակից մասնագիտացմամբ մագիստրատուրայի ծրագրեր, Սոցիալական մանկավարժություն, Օպերատորության բաժին և այլն, Տարրական մանկ. և մեթոդիկա): Այսուհանդերձ, կիրառվող մշտադիտարկման մեխանիզմների արդյունքում վերհանվող խնդիրների լուծման ուղիները դեռևս հստակեցված չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրումից հետո ՀՊՄՀ-ն վերանայել է մասնագիտական կրթական ծրագրերը համաձայն ՈԱՇ-ի և որակավորումների ոլորտային շրջանակի պահանջներին, ինչպես նաև՝ մասնագիտական կրթական ծրագրերին վերաբերող քաղաքականությունը, կարգերն ու ընթացակարգերը: Գործընթացի կանոնակարգումը և որակավորումների ոլորտային շրջանակի համահնչությունը հնարավորություն կտա պատրաստել աշխատաշուկայի պահանջներին համահունչ մասնագետներ: Մինևույն ժամանակ, փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ ՀՊՄՀ-ն իրականացնի աշխատաշուկայի համապարփակ վերլուծություն՝ հաշվի առնելով շրջանավատների կարիերայի ընթացքում առաջ եկած խնդիրները, ինչը կնպաստի ՄԿԾ-ների շարունակական բարելավմանը:

Դրական է, որ ՀՊՄՀ-ում առկա է բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագրերի մշակված օրինակելի ձևաչափեր, և այն, որ դրանց ներդրման համար համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմն անցել է մանկավարժամեթոդական վերապատրաստման դասընթացներ: Այդուհանդերձ, ՄԿԾ-ներում կրթական վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման ուսումնառության և գնահատման մեթոդները ներկայացվում են գրեթե նույնական բոլոր վերջնարդյունքների համար, սակայն փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ մեթոդները բավականաչափ բազմազանեցված և տարբերակված են առարկաների թեմատիկ տրոհման պլաններում, սակայն չեն արտահայտվել առարկայական նկարագրիչների մակարդակում, որը հանգեցրել է ծրագրի մակարդակում նույնական մեթոդների նկարագրությանը: Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ ՀՊՄՀ-ն իրականացնի

կիրառվող դասավանդման մեթոդների արդյունավետության գնահատում, ինչը հնարավորություն կտա հասկանալու դասախոսների կողմից տրվող առաջադրանքների կիրառելիությունը և թե որքանով են այդ առաջադրանքները համապատասխանում աշխատավայրի համատեքստին և նպաստում դպրոցական համակարգի զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՀՊՄՀ-ն հաշվի է առել մանկավարժահոգեբանական և հանրակրթության ոլորտում տեղի ունեցող նորարարությունները, որի արդյունքում 2023-2024 ուսումնական տարվանից ներդրվել են կրկնակի մասնագիտացման կրթական ծրագրեր, առանձին դասընթացներ, ավելացել են դասավանդման մեթոդիկաների դասընթացները մանկավարժական կրթական ծրագրերում:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ՀՊՄՀ-ում գործում է գնահատման բազմագործոնային համակարգ, գնահատման ձևերի բազմազանություն, և գնահատման գործընթացը կատարվում է էլեկտրոնային ամփոփաթեթերով: Փորձագիտական խումբը ընդգծում է գնահատման կանոնակարգի համահնչեցման անհրաժեշտությունը ՄՈՒՀ-ում առկա գնահատման ընթացակարգերի և ձևերի հետ, ինչը թույլ կտա ամբողջությամբ վերահսկել գործընթացը՝ ապահովելով վերջնարդյունքահենք գնահատում: Կարևոր է նաև գնահատման ռուբրիկների տեղայնացումը, ուսանողների ընթացիկ հանձնարարականներում՝ ռեֆերատներ, հետազոտական աշխատանքներ՝ դրանցում հատուկ ուշադրություն հատակցելով ակադեմիական ազնվության նորմերի ներդրմանը և պահպանմանը՝ որպես գնահատման բաղադրիչներ, ինչը թույլ կտա ՄՈՒՀ-ին տարածել ակադեմիական ազնվության պահպանման մշակույթը շահակիցների շրջանակում:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև էլեկտրոնային հարթակի կիրառության մեխանիզմների շարունակական բարելավումը, մասնավորապես ստուգման ձևերի/գնահատման մեթոդների և ձևերի համար հատակ մոտեցումների մշակումը և տարածումը, անհրաժեշտության դեպքում նաև լրացուցիչ գործիքակազմի մշակումը, որը թույլ կտա ՄՈՒՀ-ին բարձրացնել հարթակի կիրառության նպատակայնությունը և արդյունավետությունը:

Համալսարանը կրթական ծրագրերի համահունչության համար կատարել է համեմատական վերլուծություն հայաստանյան և արտասահմանյան բուհերի նմանատիպ կրթական ծրագրերի հետ, սակայն դիտարկվել է միայն կրթական ծրագրերի բովանդակության՝ ուսումնական պլանների համանմանությունը, իսկ բենչմարքինգի տարբեր բաղադրիչների համար այն դեռ իրականացված չէ: Բուհի կողմից միջազգային գործընկերների համագործակցությամբ բենչմարքինգի լիարժեք իրականացումը, որը կանդրադառնա ՄԿԾ ամբողջ բովանդակությանը, կնպաստի ուսանողների և դասախոսների շարժունության մեծացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ կրթական ծրագրերի մշտադիտարկման և արդյունավետության գնահատման համար կիրառվում են մի շարք գործիքներ, օրինակ՝ դասալսումները, ներքին և արտաքին շահակիցների շրջանում հարցումները, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունները, սակայն դրանց արդյունքում լավագույն փորձի տարածման կամ հարցումների արդյունքում բարելավման քայլեր դեռ իրագործված չեն, որը կարող է խոչընդոտել ՄԿԾ-ների շարունակական բարելավմանը: Կարևոր է, որ ՀՊՄՀ-ն քայլեր ձեռնարկի հաշվետվությունների արդյունքների վերլուծությունից հետո բարելավման քայլերի

մշակման ուղղությամբ, ինչը թույլ կտա ՄՈՒՀ-ին հավաքագրել օբյեկտիվ տվյալներ և կայացնել տվյալահենք որոշումներ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՀՊՄՀ-ի մասնագիտական կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանեցվել են ՈԱՇ-ի ու ՈՈՇ-ի բնութագրիչներին, բուհը քայլեր է իրականացնում ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ, դասախոսների կողմից կիրառվում են կարողությունների ձևավորմանը միտված դասավանդման մեթոդներ, որոշակիորեն բարելավվել է գնահատման համակարգը, առկա են կրթական ծրագրերի մշտադիտարկման որոշ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանը բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՊՄՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է բավարար:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ՀՊՄՀ բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգում ընդունելության գործընթացն իրականացվում է համաձայն ՀՀ Կառավարության համապատասխան որոշմամբ հաստատված «Պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգի», իսկ բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգում՝ համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի համապատասխան հրամանով հաստատված «ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հեռակա ուսուցման ընդունելության կանոնների»: Մագիստրատուրայում ընդունելությունն իրականացվում է նաև 2022 թվականին հաստատված «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մագիստրատուրայի (առկա և հեռակա ուսուցման ձևերով) ընդունելության և ուսումնառության կազմակերպման» կարգի, ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգի»:

Համալսարանի կայքի «Դիմորդ» բաժնում յուրաքանչյուր տարի տեղադրվում են մագիստրատուրայի ընդունելության հարցաշարերը, ինչպես նաև տեղադրվում է ընդունելության քննությունների, տեղերի և վարձավճարների վերաբերյալ տեղեկություն:

ՀՊՄՀ-ում գործում է առանձնացված կառուցվածքային ստորաբաժանում՝ դիմորդների ներգրավման կենտրոն, որը զբաղվում է ուսանողների հավաքագրման գործընթացով: Որպես դիմորդների ներգրավման մեխանիզմ՝ բուհն անցկացնում է նախապատրաստական ութամսյա կամ եռամսյա դասընթացներ համալսարանի բոլոր մասնագիտությունների համար, նախատեսված ընդունելության առարկայական ծրագրերով՝ առկա և հեռակա կրթական համակարգեր դիմողների համար: 2020-2023թթ. ՄՈՒՀ-ի նախապատրաստական բաժինը կազմակերպել և իրականացրել է 378 ունկնդրի

նախապատրաստական պարապմունքներ, որոնց մասնակիցներից 172-ը եղել են Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ:

Դիմորդների ներգրավման և մասնագիտական կողմնորոշման նպատակով ՀՄՊՀ-ն կազմակերպում է այցելություններ ավագ դպրոցներ (մեծամասամբ մարզային դպրոցներ), որին մասնակցում են դասախոսական և վարչական անձնակազմի ներկայացուցիչներ, ուսանողներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նման այցելություններից հետո ավելանում են բուհով հետաքրքրվող դիմորդների հետախոսազանգերի և նամակների քանակը: Մյուս կողմից, փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ վերոնշյալ հանդիպումներին աշակերտների մասնակցությունը մեծ չէ (մինչև 20 մասնակից): Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հավաքագրման գործընթացին մասնակցում և աջակցություն են տրամադրում նաև ֆակուլտետները և ամբիոնները:

ՄՈւՀ-ը ավագ դպրոցի աշակերտների համար կազմակերպում է «Բաց դռների օրեր», որոնց շրջանակում աշակերտները շրջում են թանգարանում, արհեստանոցներում և լաբորատորիաներում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2023-2024 ուսումնական տարում 500-600 ուսանող է ընդունվել ՀՊՄՀ: Վերջին տարիներին ավելացել է իրանցի ուսանողների թիվը, մասնավորապես՝ 68-70 դիմորդ: 2023 թվականին բուհ ընդունվել է 30 միջազգային ուսանող, ցուցանիշը նախորդ տարվա համեմատ նվազել է, վերջինս մեծամասամբ պայմանավորված է ուսանողների կացության խնդրով: Ներկայումս, ՀՊՄՀ-ում կրթություն է ստանում մոտ 5367 ուսանող:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՄՈւՀ-ը հավաքագրման մեխանիզմների արդյունավետության գնահատում չի իրականացրել:

4.2 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

2022 թվականին ՀՊՄՀ գիտական խորհրդի կողմից հաստատվել է «ՀՊՄՀ-ում արտաքին և ներքին շահակիցների ներգրավում և կարիքների գնահատում» կարգը, որը 2.2.1 կետով անդրադարձ է կատարում ուսանողների ձայնը լսելի դարձնելուն և նրանց կարիքների դուրսբերման մեխանիզմներին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թե՛ ուսանողները, թե՛ դասախոսական ու վարչական կազմն ուսանողների կրթական կարիքների բացահայտման հիմնական գործիք են համարում ուսանողների շրջանում իրականացված հարցումները, մասնավորապես՝ «Դասախոսը՝ ուսանողի աչքերով» հարցումը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առանձին հարցումներ են իրականացնում նաև ամբիոնները, ՈՒԽ-ն և ՈՒԳԸ-ն: Հարցումները կազմվում են ամբիոնների և ֆակուլտետների որակի պատասխանատուների կողմից, հարցաթերթերը քննարկվում և հաստատվում են ֆակուլտետի նիստերում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների կրթական կարիքների վերհանման համահամալսարանական մեխանիզմներից զատ՝ տարբեր ֆակուլտետներ և ամբիոններ կիրառում են տարբեր գործիքներ. օրինակ՝ «Օտար լեզվի ուսուցման» ամբիոնը 2022-2023 ուս.տարում կազմակերպել է հարցախույզ՝ վերհանելու տարբեր դասընթացների բարելավման կողմերը: Հարցախույզին մասնակցել են բոլոր ֆակուլտետների ուսանողները: «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի շրջանակներում իրականացվում է մնացորդային գիտելիքների ստուգում

և կարիքների բացահայտում, որի արդյունքում ամբիոնը Ջավախքի ուսանողների համար հայերեն լեզվի առցանց դասընթացներ է կազմակերպում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որպես կրթական կարիքների վերհանման մեխանիզմ ուսանողները դիտարկում են դասախոսական կազմի և ամբիոնների վարիչների հասանելիությունը, ըստ ուսանողների՝ իրենք ազատ են տարբեր հարցերով և առաջարկներով դիմելու ամբիոններ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողների կարիքների բացահայտման արդյունքում վերջին տարիներին բարելավվել են ուսանողներին տրվող առաջադրանքները (աշխարհագրություն, կենսաբանություն և այլ ՄԿԾ-ներում):

Փորձագիտական վերլուծությունները ցույց են տալիս, որ ուսանողների կրթական կարիքների բացահայտման համար ինստիտուցիոնալ մոտեցում առկա չէ:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Ինքնավերլուծության ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ յուրաքանչյուր առարկայի շրջանակներում քննություններին նախորդող դասերի ընթացքում դասախոսների կողմից տրամադրվում է խորհրդատվություն քննություններին նախապատրաստվելու համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների կողմից խորհրդատվության և լրացուցիչ պարապմունքների համար դասախոսներին դիմելը, առարկաների շրջանակում ունեցած հետաքրքրություններով և հարցերով հանդես գալը խրախուսվում է ՀՊՄՀ-ում: Համալսարանում իրականացվում են նաև ուսումնական պլաններով չնախատեսված լրացուցիչ դասընթացներ՝ պայմանավորված այդ պահին դուրսբերված խնդիրներով, առաջարկներով. օրինակ՝ 2022-2023 ուսումնական տարում մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի, կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի երրորդ կուրսերի ուսանողների համար կազմակերպվել է «Սոցիալ-հուզական ուսումնառություն» լրացուցիչ դասընթացը, իսկ 2021-2022 ուսումնական տարում՝ «Հակակոռուպցիոն քաղաքականություն» խորագրով լրացուցիչ դասընթացը, որը նախատեսված է եղել բոլոր ֆակուլտետների ուսանողների համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները, ըստ ահրաժեշտության, լրացուցիչ պարապմունքներ են իրականացնում նաև ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների համար:

Ըստ ինքնավերլուծության՝ ուսանողների 63%-ը ընդգրկված է խորհրդատվական պարապմունքներում, 84%-ը բավարարված է այդ ծառայությունից: Հարկ է սակայն նշել, որ լրացուցիչ պարապմունքները հստակ կանոնակարգված և պլանավորված չեն՝ ըստ դուրս բերված կարիքների:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

ՄՈՒՀ-ն ունի ուսանողի ուղեցույց, որտեղ մեկնաբանվում է վարչական կազմին դիմելու ընթացակարգը: Մասնավորապես, ուսումնական գործընթացում որոշակի խնդիրներ ծագելու, համալսարանի ռեկտորի, պրոռեկտորների կամ դեկանների հետ հանդիպման կարիք ունենալու դեպքում անհրաժեշտ է մոտենալ ընդունարաններ և գրանցվել: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողներն ազատ են իրենց խնդիրներով դիմելու նաև ամբիոնների վարիչներին և դասախոսներին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ օրինակ՝ վարչական աշխատակազմին դիմել են վարձավճարների հետ կապված տարբեր հարցերով, որոնք լուծում են ստացել:

Ուսանողներն ուսումնական գործընթացին վերաբերող փաստաթղթերին, դասացուցակներին, քննական ժամանակացույցերին, հայտարարություններին տեղեկանում են համապատասխան բաժինների, դեկանատների և ամբիոնների ցուցանակներից, ինչպես նաև ՄՈՒՀ-ի կայքէջում, ֆակուլտետների տեղեկատվական հարթակներում տեղադրված հայտարարություններից:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

ՀՊՄՀ-ում ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների մատուցման համար գործում են մի քանի կառույցներ: ՀՊՄՀ-ում գործում է համալսարան-գործատու համագործակցության կենտրոնը, որի հիմնական գործառնությունը շրջանավարտների և գործատուների տվյալների հավաքագրումն ու բազաների թարմացումն է, ինչպես նաև գործատու-շրջանավարտ կապի ստեղծումը: Շրջանավարտների հետ արդյունավետ հետադարձ կապի ապահովման և համագործակցության նպատակով ստեղծվել է «Գրանցման թերթիկ» ուսանողների տվյալների հավաքագրման տեղեկատվական շտեմարանը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ շրջանավարտների բազայում ներկայումս մոտ 5000 գրանցվածներ կան (վերջին մեկ տարում ավելացել են ևս 150-ը): Բազայում տեղեկատվության թարմացման և արդիականության պահպանման համար կենտրոնը շրջանավարտների հետ կապ է պահպանում հեռախոսագանգերի միջոցով. հիմնական թիրախային խումբ են հանդիսանում վերջին 5 տարիների շրջանավարտները:

Համալսարանի կայքում՝ կենտրոնի էջում, առանձնացված է «Ձեռնարկներ» բաժինը: Հրապարակված «Կարիերայի զարգացման», «Կարիերայի առաջին քայլերը» ձեռնարկներում ամփոփվում են ուսանողների՝ կարիերայի պլանավորման գործընթացը, դրա հիմնական քայլերը, ինչպես նաև մի շարք կիրառական խորհուրդներ՝ միտված աշխատաշուկայում սեփական տեղը գտնելուն (աշխատանքային դաշտի հետազոտում, CV-ների և նամակների կազմում, հարցազրույցի նախապատրաստում): Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն ու շրջանավարտները բավարարված են կենտրոնի աշխատանքով, ստանում են տեղեկատվություն թափուր աշխատատեղերի վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ համալսարան-գործատու համագործակցության կենտրոնի կողմից չի իրականացվել համապարփակ վերլուծություն շրջանավարտների զբաղվածության վերբերյալ, ինչպես նաև չի ուսումնասիրվել, թե որ հմտությունների պակասն են ունենում շրջանավարտները աշխատաշուկայում:

Ուսանողների կարիերային նպաստող մեկ այլ կառույց է պրակտիկայի կենտրոնը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները մեծամասամբ գոհ են պրակտիկաներից, խնդիրներ ունենալու դեպքում դիմում են կառույցին և ստանում խնդրի լուծումը (օրինակ՝ պրակտիկաների կառույցների ցանկից «Հոգեբանություն» բաժնի ուսանողների առաջարկությամբ դուրս է եկել այն դպրոցը, որտեղ հոգեբանի հաստիք չի գործում): «Իսպաներեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսանողների կողմից առաջարկություն է հնչել պրակտիկաները չանցկացնել դպրոցներում, քանի որ այս կրթական ծրագրի դեպքում ուսանողները մանկավարժի որակավորում չեն ստանում: Առաջարկությունը քննարկվել է բուհում, և դպրոցների փոխարեն կրթական ծրագրի ուսանողները պրակտիկա են անցել Ուրուգվայի դեսպանատանը, ինչի արդյունքում հնարավորություն են ունեցել հաղորդակցվել լեզվակիրների հետ:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելու համար համալսարանում գործում է Ուսանողական գիտական ընկերությունը (ՈւԳԸ)՝ 2022 թվականին հաստատված ՈւԳԸ կանոնադրության համաձայն: 2018-2022 թվականներին ՈւԳԸ գործունեությունը դադարել է, այնուհետև 2022 թվականին այն վերակազմավորվել է. ներկայումս ունի 30 ակտիվ ուսանող-անդամներ: ՈւԳԸ-ն ներգրավվում է ուսանողներին իր աշխատանքներում՝ համագործակցելով ֆակուլտետային ՈւԳԸ ներկայացուցիչների հետ: Վերակազմավորումից հետո կառույցը զբաղվել է իրազեկման աշխատանքներով, (օրինակ ինչպես գրել կուրսային և ավարտական աշխատանքներ), սեմինարների, գիտաժողովների կազմակերպմամբ (օրինակ՝ «Հոգեկան առողջությունը. ձևավորման և պահպանման ուղիները», «Հայաստան. դարերի խորքից դեպի ապագա»), որոնց շրջանակներում ուսանողները հանդես են եկել իրենց հողվածներով: «Մանկավարժության արդի հիմնախնդիրներ, լուծումներ» խորագրով գիտաժողովն ամեն տարի կազմակերպվում է մանկավարժության համահամալսարանական ամբիոնի կողմից, որին մասնակցում են համալսարանի ուսանողները:

Ուսանողները նաև մասնակցում են համալսարանի կողմից կազմակերպվող հետազոտական, նախագծային միջոցառումներին և մրցույթներին. մասնավորապես՝ մանկավարժության ամբիոնի կողմից կազմակերպված «Ուսյալ ազգի վկայագրերը» դասախոս-ուսանող նախագծային աշխատանքների մրցույթին մասնակցել են մոտ 100 ուսանողներ:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

ՄՈՒՀ-ում ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմինը Ուսանողական խորհուրդն (ՈւԽ) է, որը ուսանողների ինքնակառավարվող, ընտրովի ներկայացուցչական մարմին է: Ըստ ինքնավերլուծության և ՈւԽ կանոնադրության՝ կառույցում գործում են 9 հանձնաժողովներ, որոնցից մեկն իրավական հանձնաժողովն է, որը զբաղվում է ուսանողների իրավունքների պաշտպանության հարցով:

ՄՈՒՀ-ի ուսանողների մոտ 350-400-ն ընդգրկված են ՈւԽ աշխատանքներում: ՈւԽ-ում գործում են տարբեր ակումբներ, մասնավերապես՝ բանավեճի, լրատվական, գրականասերների ակումբ և այլն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կառույցը մեծամասամբ զբաղվում է միջոցառումների և կամավորական աշխատանքների կազմակերպմամբ, կրթական կարիքների գնահատման ու վերլուծության համար աշխատանքները սակավաթիվ են: Մասնավորապես՝ ՈւԽ-ն կազմակերպում է տարբեր թեմաների վերաբերյալ քննարկումներ, խաղեր, իրականացնում հոգեբանական գրքերի քննարկումներ, որտեղ մասնակցություն են ունենում նաև դասախոսները: Յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ կազմակերպվում են բանավեճեր (օրինակ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կարևորություն և այլն): Այսուհանդերձ, հարկ է նշել, որ ՈւԽ-ի ներգրավվածությունը համալսարանի կառավարման գործընթացներին (Հոգաբարձուների խորհրդում, համալսարանի Գիտական խորհրդում), առաջարկությունների ներկայացման, խնդիրների վերհանման միջոցով, տեսանելի չէ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ ուսանողներն իրենց իրավունքների վերաբերյալ խնդիրները հղում են մեծամասամբ դասախոսական կամ վարչական կազմին:

ՈւԽ-ին դիմել են օրինակ դասախոսական կազմի ուսուցման գործընթացում ոչ արդիական մեթոդների կիրառելության խնդրով: ՈւԽ-ն դիմել է դեկանատ և խնդիրը լուծում է ստացել:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Որպես ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմ՝ ուսանողների և շրջանավարտների շրջանում անցկացվում են հարցումներ:

Հարցումներ իրականացվում են համալսարանի տարբեր կառույցների (Որակի ապահովման վարչություն, ամբիոններ, ՈՒԽ) կողմից: Փորձագիտական խմբի դիտարկմամբ դժվար նկատելի են իրականացված հարցումների միջև կապերը, դրանց միմյանց փոխլրացնող լինելու հանգամանքը, ինչպես նաև դրանց վերլուծությունները և արդյունքում իրականացված փոփոխությունները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման գործընթացում ՄՈՒՀ-ի կողմից իրականացվող քայլերը, ուսանողների ներգրավման մեխանիզմների բազմազանությունը: Փորձագիտական խումբը կարևոր է համարում կիրառվող մեխանիզմների արդյունավետության գնահատման գործընթացի պարբերաբար իրականացումը, ինչը հնարավորություն կընձեռի համալսարանին ընտրել համապատասխան գործիքները և առավել քիչ ռեսուրսների օգտագործմամբ առավել շատ դիմորդների ներգրավել:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում համալսարանի կողմից ուսանողների կարիքների գնահատման գործընթացը իրավական փաստաթղթով ամրագրելու փաստը, կարևոր է, որ կիրառվում են հարցումներ, հանդիպումներ ուսանողների հետ, որոնք նպաստում են ուսանողների կրթական կարիքների բացահայտմանը և ուսումնական գործընթացի շարունակական բարելավմանը:

Հատկանշական է, որ համալսարանի տարբեր օղակների կողմից իրականացվում են հարցումներ և քննարկումներ ուսանողների հետ, սակայն հստակ չէ դրանց կապը. որքանով են հարցումները փոխլրացնում միմյանց, որքանով են դրանց արդյունքները համատեղ վերլուծվում և համադրվում: Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ բուհը վերլուծի մեխանիզմների արդյունավետությունը և դրանք դնի ինստիտուցիոնալ հենքի վրա, ինչը կնպաստի բոլոր ֆակուլտետներում լավ փորձի դուրսբերմանն ու տարածմանը, ինչպես նաև խնդիրների արագ լուծմանը:

Դրական հանգամանք է ուսանողների համար այնպիսի մթնոլորտի ստեղծումը, որտեղ վերջիններս ազատ են իրենց հարցերով դասախոսներին դիմելու, սակայն ուսանողների անկախ ձայնի լսելի դարձնելու մեխանիզմները բարելավման կարիք ունեն, ու այդ հարցում ՈՒԽ դերի ակտիվացումը ևս կարևոր է:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում բուհում առկա լրացուցիչ պարապմունքներն և ուսանողներին տրվող խորհրդատվական միջոցառումները, որոնք նպաստում են ուսանողների առաջընթացին: Մինևույն ժամանակ, հաշվի առնելով բուհի պոտենցիալը՝ փորձագիտական խումբը կարևոր է համարում լրացուցիչ պարապմունքների բազմազանացումը, ինչը կնպաստի ուսանողների հմտությունների բարելավմանը, ինչպես նաև աշխատաշուկայում պահանջված լինելուն:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում համալսարանի ջանքերը շրջանավարտների և գործատուների բազաների ստեղծման և պահպանման գործում, ինչպես նաև այդ կենտրոնների կողմից իրականացվող գործընթացները, որոնցից ուսանողները բավարարված են: Միննույն ժամանակ, փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ տվյալ բազաներից ստացված վիճակագրական տվյալները վերլուծվեն և կիրառվեն համալսարանի որոշումների կայացման գործընթացում: Շրջանավարտների կարիերայի ուղղորդման համար կարևոր է վերլուծել նրանց զբաղվածությունը և դրան խոչընդոտող ուղղությունները, ինչը հիմքեր կստեղծի կրթական ծրագրերի բարելավման և աշխատաշուկայի կարիքներին համապատասխան մասնագետների թողարկման համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում ՈԻԳԸ ակտիվ աշխատանքը ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավման ուղղությամբ, ինչպես նաև վերջին տարիներին ուսանողների հետազոտական աշխատանքներում ներգրավվածությունը: Միննույն ժամանակ, փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ դասախոսները նույնպես կիրառեն մեխանիզմներ ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում առավել ակտիվ և մոտիվացված ներգրավման համար, ինչը կնպաստի համատեղ գիտական արդյունքի ստեղծմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողներին մատուցվող ծառայությունների արդյունավետության գնահատման մեխանիզմների պարբերաբար կիրառումը, դրանց արդյունքների վերլուծությունը և բարելավման գործընթացների հիմքում դնելը կնպաստեն մատուցվող ծառայությունների արդյունավետության բարձրացմանն ու կրթական միջավայրի բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՀՊՄՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման և ընդունելության մեխանիզմներ, կարիքների վերհանման և մատուցված ծառայությունների գնահատման որոշակի գործիքներ, ուսանողների կողմից բարձր է գնահատվում իրենց թե՛ դասախոսական, թե՛ վարչական անձնակազմից տրամադրվող օժանդակությունը և կարիերային նպաստող ծառայությունների մատուցումը, բուհում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին, համալսարանը քայլեր է իրականացնում ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու ուղղությամբ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանը բավարարում է չափանիշ 4-ի պահանջները:

Եզրակացություն: ՀՊՄՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

V. ՊՐՈՑԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕՃԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈԻՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈԻՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Համալսարանի 2022-2025թթ. զարգացման ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլանում 5-րդ ռազմավարական ուղղությունը մարդկային

ռեսուրսների կառավարումը և զարգացումն է, որի 4-րդ գործողությունը վերաբերում է համալսարանի անձնակազմի աշխատանքի ընդունելության, պաշտոնների տեղակալման իրավական ընթացակարգերի արդիականացմանը, իսկ ժամանակահատված նշված է 2022-2023 թվականներ, սակայն փորձագիտական այցի ընթացքում դասախոսների ընտրության նոր կանոնակարգ դեռ չէր մշակվել և ներդրվել:

ՀՊՄՀ-ն ներկայումս առաջնորդվում է 2012թ. ներդրված պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգով, ըստ որի համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմն ընդգրկում է հետևյալ տարակարգերը՝ դասախոս, ասիստենտ, դոցենտ, պրոֆեսոր: Ըստ կարգի՝ ՄՈՒՀ-ում հիմնական ՊԴ կազմը աշխատանքի է ընդունվում բաց մրցույթով: Համատեղությամբ և ժամավճարային հիմունքներով ՊԴ կազմի համար ՀՊՄՀ-ն հրավիրում է կրթության, սոցիալական աշխատանքի և մշակույթի ոլորտների առաջատար մասնագետների, գիտությունների դոկտորների, և թեկնածուների, որոնք, որպես կանոն ունեն մասնագիտությանը և դասընթացների ելքային արդյունքներին, և ուղղվածությանը համապատասխանող բազային կրթություն, հետևողականորեն զբաղվում են գիտամեթոդական գործունեությամբ, ունեն համապատասխան աշխատանքային փորձ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ուսանողների թվաքանակի նվազման պատճառով վերջին երեք տարվա ընթացքում պրոֆեսորադասախոսական անձնակազմի մրցույթները չեն իրականացվում:

Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՀՊՄՀ ՊԴ կազմի մոտ 30% այլ բուհերի շրջանավարտներ են: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ քիչ են գործատու դասախոսները բուհում: ՊԴ կազմի ներկայացուցիչները ներգրավված են հիմնականում դասավանդման մեջ: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունից պարզ դարձավ նաև, որ ՀՊՄՀ-ն չունի մարդկային ռեսուրսների զարգացման երկարաժամկետ քաղաքականություն, ուստի հավաքագրումը հիմնված է կրթական ծրագրի ընթացիկ կարիքների վերլուծության վրա, և ՊԴ կազմի քանակը որոշվում է մինչև ուսումնական տարվա մեկնարկը:

Ուսումնաօժանդակ անձնակազմի համար մրցույթներ ևս չեն իրականացվում, այլ ընտրվում են էլնելով ՄԿԾ առանձնահատկություններից և պահանջներից, հաստատվում են ռեկտորի հրամանով:

ՀՊՄՀ-ում 2023 թվականի դրությամբ սաշխատում է 630 պրոֆեսորադասախոսական անձնակազմի նեկայացուցիչ: Ուսանող-դասախոս հարաբերակցությունը կազմում է մոտավորապես 9:1, իսկ ուսանող-վարչական մաս՝ 50:1:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Յուրաքանչյուր մասնագիտական կրթական ծրագրի մասնագրերում սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ, օրինակ՝ «Հոգեբանության» բակալավրի կրթական ծրագրի դասավանդողների համար առանձնացված են հետևյալ որակները. «Հոգեբանություն» գիտության խորն իմացություն, մանկավարժական փորձառություն, հետազոտական հմտություններ, տեխնոլոգիաների իմացություն, հաղորդակցական հմտություններ, էթիկական և մասնագիտական վարքագիծ, ստեղծագործականություն և նորարարություն, թիմային աշխատանք, առաջնորդային հմտություններ և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ,

որ պրոֆեսորադասախոսական կազմը համալրված է փորձառու, գիտական կոչումներ ունեցող դասախոսներով, ինչպես նաև բուհը փորձում է աջակցել երիտասարդ կադրերի կայացմանը:

Ըստ ինքնավերլուծության՝ համալսարանը յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակների բարելավման համար իրականացրել է մասնագիտական կրթական ծրագրերի, առարկայական նկարագրերի որակի բարձրացմանն ուղղված մանկավարժամեթոդական վերապատրաստման դասընթացներ:

Փորձագիտական այցի հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողները և շրջանավարտները որպես ՀՊՄՀ ուժեղ կողմ են համարում փորձառու, գիտակ, ուսանողին միշտ աջակցություն ցույց տվող և համագործակցող դասախոսական կազմի առկայությունը:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Դասախոսական կազմի գնահատման հիմնական մեխանիզմներից են ուսանողների շրջանում կատարվող հարցումները, որոնք իրականացվում են «Դասախոսն ուսանողի աչքերով» հարցաթերթիկի միջոցով: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ հարցումների արդյունքները քննարկվում են ամբիոններում: Հարցումների արդյունքներից ելնելով փոփոխություններ են կատարվել դասախոսների աշխատանքային պլաններում և դասավանդման մեջ, օրինակ՝ բարելավվել է գրականության ցանկը, Բանասիրության ֆակուլտետի ՊԴ կազմում ներգրավվել են երկու երիտասարդ դասախոսներ:

Գնահատման մյուս մեխանիզմը դասախոսական կազմի դասալսումներն են, որոնք կատարվում են սահմանված ձևաչափով: Դասալսման արձանագրությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ օրինակ՝ Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնում դասալսումներն անցկացվում են ըստ ձևաթերթի, կատարվում է դասախոսի աշխատանքի գնահատում 6 չափանիշներով, որոնց վերաբերյալ նախատեսված է գնահատման սանդղակ, կատարվում են աշխատանքի մեկնաբանություններ, ներկայացվում են ուժեղ կողմերը և բարելավման առաջարկները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասալսումների պարբերականությունը տարբեր ամբիոններում տարբեր է, օրինակ՝ Հոգեբանության ամբիոնում մեկ դասախոսի մոտ ուսումնական տարվա ընթացքում կարող է լինել մեկից երեք անգամ դասալսում: Պարզ դարձավ, որ դասալսումները հիմնականում իրականացվում են փորձի փոխանակման նպատակով, որպեսզի դուրս բերվի և տարածվի դասավանդման լավ փորձը, եղել են դեպքեր, երբ փոփոխության է ենթարկվել դասավանդման մեթոդը դասալսման արդյունքում (օրինակ՝ դասավանդման ժամանակ պրեզենտացիայի ներկայացումը որպես մեթոդ չի համապատասխանել վերջնարդյունքին, և դասախոսի հետ քննարկումից հետո, այն փոխվել է): Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ տարբեր ամբիոններում դուրս բերված դասավանդման լավ օրինակների տարածման մեխանիզմները տեսանելի չեն:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ բուհը աշխատանքներ է իրականացնում դասախոսների վարկանիշավորման հետ կապված: Անհրաժեշտ է փաստել, որ դեռևս ոչ հարցումները, ոչ դասալսումները չեն հանդիսանում դասախոսների վարկանիշավորման համակարգի մաս:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Ըստ ինքնավերլուծության՝ համալսարանը, վերլուծելով դասախոսական կազմի կարիքները, վերջինիս կատարելագործման նպատակով վերջին երկու տարվա ընթացքում կազմակերպել են վերապատրաստումներ անգլերենից, որին 2021-2022 թվականներին մասնակցել են 35 դասախոսներ: 2021 թվականին կազմակերպվել են նաև հասարակագիտության, համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ վերապատրաստումներ, որին մասնակցել են 18 դասախոսներ: 2022 թվականին վերապատրաստվել է ամբողջ դասախոսական կազմը մասնագիտական կրթական ծրագրերի, առարկայական նկարագրերի որակի բարձրացմանն ուղղված մանկավարժամեթոդական ուղղությամբ: Հարկ է նշել, որ մասնագիտական վերապատրաստումների օրինակները սակավաթիվ են:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բոլոր ֆակուլտետներում առկա են դեպքեր, երբ դասախոսները մասնակցել են միջազգային վերապատրաստումների դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում:

Փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ, որ ՀՊՄՀ-ի 2024թ. եկամուտների և ծախսերի նախահաշվում դասախոսական կազմի վերապատրաստումների համար տրամադրվող ֆինանսները բացակայում են:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերապատրաստման կարիքների բացահայտման մեթոդների վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ, հետևաբար, պարզ չէ, թե որքանով է առաջարկվող վերապատրաստումները կապված դասախոսների կարիքների հետ, ինչպես նաև առկա չէ ամբիոններում հստակ պլանավորումներ կարողությունների զարգացման առումով:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

ՀՊՄՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմը 630 է, որից 112-ը պրոֆեսորներ են, 274-ը՝ դոցենտներ, 37-ը՝ ասիստենտներ, 207-ը՝ դասախոսներ: Պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքը 55 է:

Ըստ ինքնավերլուծության՝ հաստատությունը պրոֆեսորադասախոսական կազմի զարգացման և կայունության ապահովման գրավականը համարում է ամբիոնների շարքերի համալրումը լավագույն շրջանավարտներով՝ ուղղորդելով նրանց հետազոտողի/հայցորդի, ասպիրանտի կրթական ծրագրերում կրթությունը շարունակելու, քանի որ համալսարանում առկա է ասպիրանտուրայի ընդունելություն առկա/հեռակա ուսուցման ձևերով և հայցորդական համակարգով:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձերը ցածր են, և վերջին մի քանի տարում դրանք չեն բարձրացվել: Ինչպես նաև կան դեպքեր, երբ մեկ դասախոսը դասավանդում է 6-ից ավել ծավալուն դասընթացներ:

Պրոֆեսորադասախոսական կազմի ծանրաբեռնվածությունը նախորդ հավատարմագրումից հետո մնացել է նույնը, դասախոսի մեկ դրույքի ուսումնական

բեռնվածությունը 1080 ժամ է, միայն այժմ Google Classroom էլեկտրոնային հարթակում ինքնուրույն աշխատանքների ստուգմանը հատկացված ժամերը ևս վարձատրվում են:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՀՊՄՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման համար գործում է 2021թ. ընդունած համալսարանի գիտական աշխատողների ատեստավորման ներքին կանոնակարգը, ըստ որի գիտական աշխատողները կարող են ստանալ համապատասխան գիտական պաշտոններ. ա) գլխավոր գիտական աշխատող, բ) առաջատար գիտական աշխատող, գ) ավագ գիտական աշխատող, դ) գիտական աշխատող, ե) կրտսեր գիտական աշխատող: Սակայն պետք է նշել, որ համալսարանում դեռ չի գործում պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման և գիտական հաջողությունների համար խրախուսման կարգ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թեև չկա ինստիտուցիոնալ մակարդակում ՊԴ կազմի առաջխաղացման քաղաքականություն, այնուամենայնիվ անհատական մակարդակում կան դեպքեր, երբ երիտասարդ դասախոսներին բուհը հնարավորություն է տվել մասնակցել միջազգային շարժունության ծրագրերի, որակավորման բարձրացման և վերապատրաստումների: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ ՀՊՄՀ ՊԴ կազմի ներկայացուցիչները մոտիվացված են և ձգտում են նորարարություն բերել համալսարան և ներդնել դասավանդման մեջ:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Ըստ ինքնավերլուծության մեջ բերված տվյալների՝ համալսարանի վարչական կազմը մնացել է նույնը՝ 87, կրճատվել է ուսումնաօժանդակ կազմը, 131 աշխատակցից հասնելով 113-ի, իսկ սպասարկող կազմը ավելացել է, 100-ից դառնալով 130:

Առկա են վարչական ստորաբաժանումների և ուսումնաօժանդակ կազմի աշխատողների պաշտոնի անձնագրերը, որտեղ ամրագրված են աշխատողի պարտականությունները, ներկայացվող գիտելիքների և կարողությունների պահանջները, որոնք հաստատվում են ռեկտորի կողմից:

2022թ. համալսարանի գիտխորհուրդը հաստատել է «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի աշխատողների պարզևատրման, նյութական խրախուսման, հավելավճարների և լրավճարների տրամադրման կանոնակարգը, համաձայն որի՝ տրվում են միանվագ դրամական պարգևներ, շնորհակալագրեր, հուշանվերներ, հավելավճարներ, լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում: Աշխատողների խրախուսման համար հիմք են հանդիսանում աշխատանքային պայմանագրով սահմանված պարտականությունների գերազանց կատարումը, անհետաձգելի աշխատանքներ կատարելու համար տրված լրացուցիչ հանձնարարությունը ժամանակին և պատշաճ կատարումը, ՀՊՄՀ-ում երկարամյա (առնվազն՝ 10 տարվա) բարեխիղճ աշխատանքը, կոլեկտիվ և միջանձնային հարաբերություններում օրինակելի վարքագիծ դրսևորելը, աշխատանքային կարգապահությունը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ համալսարանը համակարգային չի ուսումնասիրել վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի կարիքները, և պլանավորված չեն նրանց համար կարողությունների զարգացման վերապատրաստումներ:

Դաստորոշումներ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհն իր ռազմավարական ծրագրում կարևորում է պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության կանոնակարգերի վերանայումը և բարելավումը: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՀՊՄՀ-ում դասավանդում են մանկավարժական ոլորտի լավագույն մասնագետները, պրոֆեսորները, որոնք իրենց փորձը ներդնում են բուհի տարբեր ոլորտների զարգացման մեջ: Դրական է, որ բուհի ՊԴ կազմի 30%-ը այլ բուհերի շրջանավարտներ են, ինչը հնարավորություն է տալիս այլ տեսակետ և մոտեցումներ ներդնել դասավանդման մեջ: Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ բուհը դիտարկի գործատու դասախոսների քանակի ավելացումը, ինչը հնարավորություն կտա ուսանողներին առավել պատրաստ լինել աշխատաշուկային, ինչպես նաև բուհի դասախոսների համար փորձի փոխանակման հնարավորություններ կստեղծի: Փորձագիտական խումբը կարևոր է համարում նաև, որ ՀՊՄՀ-ն բարելավի ՊԴ կազմի ընտրության քաղաքականությունը՝ մշակելով մարդկային ռեսուրսների երկարաժամկետ ռազմավարություն, որը թույլ կտա սահմանել ճանապարհային քարտեզ՝ առաքելությամբ սահմանված 21-րդ դարի ուսուցչի պատրաստման համար անհրաժեշտ ՊԴ և ուսումնասօժանողակ կազմի ընտրության և կադրերի պահպանման համար: Փորձագիտական խումբը շեշտադրում է, որ ռազմավարական այս մոտեցումը ներառի ապագա անձնակազմի կարիքների կանխատեսումը, պրոֆեսորադասախոսական կազմի համար ցանկալի որակավորումների և հմտությունների սահմանումը, գրավիչ աշխատանքային միջավայրի և շարունակական մասնագիտական զարգացման հնարավորությունների ստեղծումը:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանողակ կազմում զգալի թիվ են կազմում հաստատության շրջանավարտները, որոնք իրենց մասնագիտական առաջընթացը տեսել են ՀՊՄՀ-ում: Այս փաստը դրական ազդեցություն կարող է ունենալ նաև կայունության ապահովման համար: Չնայած մյուս կողմից համալսարանն անձնակազմի հոսունությունը կանխելու համար արդեն իսկ պետք է իրականացրած լինեք հրատապ քայլեր. աշխատավարձի բարձրացում, մեթոդական և գիտական աշխատանքների խրախուսման կարգեր, ուսումնական բեռնվածության թեթևացում և այլն:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՀՊՄՀ-ում իրականացվում են պրոֆեսորադասախոսական կազմի գնահատումներ ուսանողների կողմից հարցումների և դասալսումների տեսքով: Դրական է նաև ուսանողների բարձր բավարարվածության աստիճանը պրոֆեսորադասախոսական կազմից: Սակայն հարցումների վերլուծության, տարածման և այնուհետև բարելավման համար գործընթացները հստակեցված չեն ոչ ժամկետների առումով, ոչ պատասխանատուների: Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ բուհը համակարգի ՊԴ կազմի գնահատման գործընթացները, որը հնարավորություն կտա դուրս բերելու կարողությունների զարգացման համար անհրաժեշտ ուղղությունները: Կարողությունների զարգացման հստակ պլանավորումը, դրա համար ֆինանսական միջոցների հատկեցումը կնպաստի ՀՊՄՀ բոլոր դասախոսների կարողությունների շարունակական աճին, ինչպես նաև կբարձրացնի բուհի գրավչությունը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում բուհի դասախոսական կազմի երիտասարդացման քաղաքականությունը, որը կարևոր է կայունության ապահովման համար: Մինևույն ժամանակ, փորձագիտական խումբը նշում է, որ կարևոր է, որ բուհը դիտարկի ՊԴ կազմի ծանրաբեռնվածության օպտիմալացման քաղաքականությունը, ինչը կնպաստի, որ ՊԴ կազմի ներկայացուցիչներն առավել շատ ներգրավվեն հետազոտական աշխատանքներում:

Դրական է, որ բուհն իր ռազմավարական նպատակների համար ունի անհրաժեշտ վարչական և ուսումնասովանդակ կազմ, ինչը հնարավորություն է տալիս բուհի բոլոր ուղղությունների զարգացումը: Փորձագիտական խումբը կարևոր է համարում նրանց կարիքների գնահատման մեխանիզմների ներդրումը և կարողությունների համաչափ զարգացումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՀՊՀՄ-ն ապահովված է համապատասխան մասնագիտական որակներով օժտված պրոֆեսորադասախոսական և ուսումնասովանդակ կազմով, իրականացվում է դասավանդողների գնահատում ուսանողների կողմից, ջանքեր է ներդնում ՊԴ կազմի երիտասարդացման ուղղությամբ, ապահովված է կրթական ծրագրերի իրականացման համար համապատասխան դասախոսական կազմով, բուհն ունի անհրաժեշտ վարչական կազմ ռազմավարական նպատակների իրականացման համար՝ փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանը բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է բավարար:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

ՀՊՀ-ի հետազոտական գործունեության հետաքրքրություններն ու հավակնություններն սահմանված են 2020-2025թթ. զարգացման ռազմավարական ծրագրում: Ըստ ՌԾ-ի՝ հետազոտությունը ՄՈՒՀ-ի գերակա ուղղություններից մեկն է. ՀՊՀ-ն նպատակ է դրել շարունակել զարգացնել համալսարանի գիտահետազոտական գործունեությունը՝ նպաստելով գիտական նոր ինստիտուտների, լաբորատորիաների ձևավորմանը, գիտահետազոտական գործունեության միջազգայնացմանը՝ հետազոտական համալսարանի կարգավիճակին հասնելու համար: Նշված նպատակին հասնելու համար ՄՈՒՀ-ը նախատեսել է իրականացնել հետևյալ գործընթացները՝ լավարկել համալսարանում գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության ցուցանիշները, նպաստել համալսարանում գիտական հրատարակչական գործունեության արդյունավետության բարձրացմանը և գիտահետազոտական աշխատանքների միջազգայնացմանը, նպաստել համալսարանում գիտական կադրերի պատրաստմանը և շարունակական վերապատրաստմանը, աջակցել մտավոր գործունեության արդյունքների փոխանցմանը և առաջանցիկ փորձի տարածմանը: Միևնույն ժամանակ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ համապարփակ հետազոտական քաղաքականություն և հետազոտական համալսարանի կարգավիճակին անցնելու մեխանիզմներ չեն մշակվել:

Նախորդ հավատարմագրման գործընթացից հետո բուհը ԶՌԾ-ում սահմանել է առաքելությունից բխող գիտական ուղղությունները՝ մանկավարժություն, հոգեբանություն, դասավանդման մեթոդիկաներ, հայագիտություն: Ամբիոններում նույնպես սահմանված են գիտահետազոտական ուղղությունները: Կուրսային, ավարտական, մագիստրոսական թեմաները, ինչպես նաև կազմակերպվող գիտաժողովների ու գիտական սեմինարների

խնդրադրությունները բխում են այդ ուղղություններից: Հաստատվել են ՄՈՒՀ-ի հետազոտության ոլորտի ԳԱՑ-երը: Մինևույն ժամանակ, հարկ է նշել, որ որոշ ԳԱՑ-եր բավականին հավակնոտ են, օրինակ միջազգային և ազգային մատենագիտական շտեմարաններում ինդեքսավորված առնվազն 300 գիտական հոդվածներ հրապարակելը՝ հաշվի առնելով մինչ այժմ գիտական ձեռքբերումները և ֆինանսական սահմանափակումները:

Թեև ՄՈՒՀ-ը դեռևս չի մշակել հետազոտությունների իրականացմանը և դրանց զարգացմանը միտված հստակ քաղաքականություն, այնուամենայնիվ քայլեր է ձեռնարկել ոլորտի զարգացման համար: Մասնավորապես՝ ՄՈՒՀ-ը, հաշվի առնելով նախորդ փորձագիտական զեկույցի խորհրդատվությունը, ընդլայնել է հանրակրթական դպրոցի խնդիրներին վերաբերող հետազոտությունների շրջանակը: Փորձագիտական այցից պարզվեց, որ այդ շրջանակը ներառում է մագիստրոսական թեմաներում իրականացրած հետազոտական աշխատանքները, ՄԿԾ-ում ավելացված դասընթացները, ինչպես նաև ամբիոնների և դասախոսների կողմից իրականացրած հետազոտությունները, կազմակերպված գիտաժողովներն ու սեմինարները:

Գիտահետազոտական գործունեության իրականացմանը, զարգացմանն ու կայունությանն ուղղված ֆինանսական հատկացումներն ըստ բյուջեի փոքր են՝ հետազոտական համալսարան դառնալու հավակնությունների տեսակետից: Բյուջեով նախատեսված գիտությանն ու հետազոտության ծախսերը կազմել են 3.26%: Այն աճ չի գրանցել նախորդ տարիների համեմատ:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

ՀՊՄՀ-ի հետազոտական հետաքրքրություններն ու հավակնությունները հետազոտական ոլորտում արտահայտող երկարաժամկետ ռազմավարությունն արտացոլված է ԶՌԾ-ում: ԶՌԾ-ի գործողությունների կատարման պլանում ներկայացված են հետազոտական ոլորտում ՄՈՒՀ-ի նախանշած նպատակներին հասնելու ռազմավարական խնդիրները, գործողությունները, ակնկալվող վերջնարդյունքները, պատասխանատու ստորաբաժանումները, ժամկետները, թիրախային խմբերը, ռիսկային գործոնները:

ՄՈՒՀ-ն ունի գիտահետազոտական միջնաժամկետ դրամաշնորհային ծրագրեր, որոնք իրականացնում է համապատասխան կենտրոնների միջոցով ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (ԲԿԳԿ) կողմից բազային և թեմատիկ ֆինանսավորմամբ: 2022թ. բուհում ԲԿԳԿ-ի կողմից ֆինանսավորվել են 6 թեմատիկ ծրագրեր, որոնք գործելու են մինչև 2024 և 2025 թվականները:

Մինևույն ժամանակ, փորձագիտական խումբը նշում է, որ բուհի կողմից չի իրականացվում միջնաժամկետ և կարճաժամկետ հետազոտական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկում, ինչի անհրաժեշտությունը տեսել էր նաև նախորդ հավատարմագրման փորձագիտական խումբը:

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

ՀՊՄՀ-ի հետազոտական գործունեության համակարգումն իրականացնում է Գիտահետազոտական կենտրոնը: Գիտահետազոտական կենտրոնի գործառույթներն են

նորմատիվային փաստաթղթերի ու հայեցակարգերի մշակումը, խորհրդատվությունների, վերապատրաստումների ու որակավորման բարձրացման գործընթացների ապահովումը, մագիստրոսական թեմաների ու աշխատանքների մշտադիտարկումը, հետբուհական կրթության համակարգումը, տեղեկատվական-վերլուծական աշխատանքների իրականացումը և այլն:

Գիտահետազոտական կենտրոնի գործունեության հիմքում ԶՌԾ-ում նախանշված գիտահետազոտական ոլորտի խնդիրներն են: Ինքնավերծրությունում ներկայացված են կենտրոնի տարեկան հաշվետվությունները, որոնցում վերջին տարիների համար առկա են որակական և քանակական վերլուծություններ:

Փորձագիտական այցից և վերլուծություններից պարզ դարձավ, որ վերջին տարիներին ակտիվացել են գիտահետազոտական աշխատանքները բուհում: Մասնավորապես՝ 2022թ. ՀՊՄՀ-ում ԲԿԳԿ-ի կողմից ֆինանսավորվել են 6 թեմատիկ ծրագրեր, մշակվել և ներդրվել են «Ցիտոման նորմերի և գրագողության մասին կանոնակարգը», «Սկսնակ աշխատակազմի հետազոտական գործունեությունը և միջազգային հետազոտությունների իրականացումը խրախուսելու քաղաքականությունը» փաստաթղթերը:

Ըստ ինքնավերծրության մեջ բերված տվյալների և այցի արդյունքների՝ բացի բազային և թեմատիկ ծրագրերից, ՀՊՄՀ-ն կարևորություն է տալիս նաև նպատակային գիտական ծրագրերին: Հայտեր են ներկայացվել հետևյալ թեմաներով.

- հիմնական դպրոցի սովորողների կարողունակությունների գնահատման և զարգացման հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները,
- պատմամշակութային գործընթացները Սևանի ավազանում մ.թ.ա. 3-1 հազարամյակներում,
- Հայաստանում և Սփյուռքում պատմության ուսուցման հիմնախնդիրները:

2021 թվականին ընդունվել է ՄՈՒՀ-ի գիտական աշխատողների աստեսավորման ներքին կանոնակարգ, ըստ որի՝ գիտական աշխատողները կարող են ստանալ համապատասխան գիտական պաշտոններ՝ ա) գլխավոր գիտական աշխատող, բ) առաջատար գիտական աշխատող, գ) ավագ գիտական աշխատող, դ) գիտական աշխատող, ե) կրտսեր գիտական աշխատող:

Փորձագիտական հանդիպումներից պարզվեց, որ ՄՈՒՀ-ը հետազոտության զարգացումն ու նորարարության խթանումը տեսնում է նաև նոր լաբորատորիաների ստեղծմամբ, որոնց ռեսուրսային համալրումը ընթացքի մեջ էր փորձագիտական այցի ժամանակահատվածում:

ՀՊՄՀ-ում գործում է Ուսանողական գիտական ընկերությունը (ՈՒԳԸ), որը վերակազմավորվել է 2022թ.-ին և ակտիվ գործունեություն է ծավալում: ՈՒԳԸ-ն իրականացնում է իրազեկման աշխատանքներ ուսանողների շրջանում, կազմակերպում է ուսանողական գիտական կոնֆերանսներ, գիտական սեմինարներ: Ինչպես պարզվեց ամբիոնային հաշվետվությունների ուսումնասիրությունից և դասախոսների ու ուսանողների հետ հանդիպումներից, բավական ընդլայնվել են ուսանող-դասախոս համատեղ հետազոտական աշխատանքները: Ուսանող-դասախոս համատեղ հետազոտության լավ փորձեր կան Տարբական մանկավարժություն և մեթոդիկա, Հոգեբանություն մասնագիտությունների շրջանակներում: 2022թ. մայրենի լեզվի մեթոդիկայից ավարտական աշխատանք և մագիստրոսական թեզ գրող 3 ուսանող իրենց հետազոտությունների

շրջանակներում հողվածներ են տպագրել ԲՈԿ-ի կողմից հաստատված «Մանկավարժական միտք» գիտամանկավարժական ամսագրում:

Այսուհանդերձ, հարկ է նշել, որ համալսարանը դեռևս չունի ուսանողներին հետազոտական գործունեության մեջ ներգրավելու խրախուսման մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ի ֆինանսավորմամբ հրատարակվում է 8 պարբերական: Դրանցից 3-ը ներառված է ԲՈԿ-ի կողմից ընդունելի հանդեսների ցանկում: ՀՊՄՀ-ն որպես ՊԴ կազմի գիտահետազոտական գործունեության խրախուսման մեխանիզմ դիտարկում է ՊԴ կազմի գիտական աշխատանքների անվճար տպագրությունը: Մինևս ժամանակ ՄՈՒՀ-ը կարևորում է ՊԴ կազմի կողմից միջազգային վարկանիշային գիտական շտեմարաններում տպագրվելը, օրինակ РИНЦ-ում (Российский индекс научного цитирования, գիտական մեջբերումների ռուսական ինդեքս՝ գիտական հրապարակումների մատենագիտական բազա) և SCOPUS-ում (Աբստրակտների և մեջբերումների միջգիտակարգային շտեմարան) տպագրվելու փաստը: ՄՈՒՀ-ն այս առումով աջակցում է դասախոսներին տպագրվել միջազգային շտեմարաններում ընդգրկված ամսագրերում՝ փոխհատուցելով տպագրման համար անհրաժեշտ ծախսերը:

Հարկ է նշել, որ համալսարանի կողմից վերահրատարակվում է «Մաթեմատիկական դպրոցում» ամսագիրը: ՄՈՒՀ-ի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի կողմից նախաձեռնվել է «Հոգեբանական հիմնախնդիրների պարբերականի» հրատարակումը, որի առաջին համարն արդեն հրապարակվել էր, ինչպես նաև նախատեսվում է հրատարակել «Ռուսաց լեզուն Համալսարանում» պարբերականը: Աձել է նաև ՄՈՒՀ-ի կողմից կազմակերպվող գիտաժողովների, գիտական սեմինարների ցուցանիշը: Այսպես, եթե 2020թ.-ին կազմակերպվել է 7, ապա 2021թ.-ին կազմակերպվել է 17, իսկ 2022թ.-ին՝ 19 գիտաժողով: Միջազգային գիտաժողովներ կազմակերպվել են 2020թ.-ին՝ 4, 2021թ.-ին՝ 7, իսկ 2022թ.-ին՝ 5 գիտաժողով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՀՊՄՀ-ն նախատեսում է ներդնել ներքին դրամաշնորհների ինստիտուտը: Սակայն հարկ է նշել, որ համալսարանը դեռևս չունի հետազոտական արդյունքների գնահատման քաղաքականություն:

Փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ, որ գիտահետազոտական համագործակցությունը տարբեր ուղղությունների ամբիոնների, կենտրոնների միջև դեռևս լիարժեք զարգացած չէ:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Գիտահետազոտական աշխատանքների միջազգայնացման գործընթացների խթանումը համալսարանի ռազմավարական առաջնահերթություններից է: Հետազոտական գործունեության միջազգայնացումը սահմանվել է որպես յուրաքանչյուր ֆակուլտետի, ամբիոնի գիտակրթական գործունեության գերակայություն: ՀՊՄՀ-ում գործում է միջազգայնացման գծով պատասխանատուների ինստիտուտ ֆակուլտետների մակարդակում, առկա է պաշտոնի անձնագիր: Փաստաթղթերի ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ֆակուլտետների հաշվետվություններում ներկայացված են կոնկրետ օրինակներ, թե ինչ ձեռքբերումներ է գրանցել այս կամ այն ֆակուլտետը՝ գիտահետազոտական գործունեության միջազգայնացված առումով:

ՀՊՄՀ-ն իր կարևոր ձեռքբերումն է համարում անգլերենով տպագրվող WINDSOM պարբերականի Scopus և Web of Science գիտաչափական շտեմարաններում գրանցումը:

ՀՊՄՀ-ի հետազոտական գործունեության միջազգայնացմանը նպաստող քայլերից են միջազգային գիտաժողովների, գիտական սեմինարների կազմակերպումը, ՊԴ կազմի գործադրումները և մասնակցությունները միջազգային գիտաժողովներին, ձեռքբերված պայմանագրերը արտասահմանյան համալսարանների և գիտական կառույցների հետ: Ըստ ներկայացված տվյալների՝ ՊԴ կազմի տպագրված աշխատանքները միջազգային գիտաչափական շտեմարաններում 2021 թվականին եղել է 75 հոդված, 2022 թվականին՝ 75 հոդված, իսկ 2023 թվականին՝ 82 հոդված:

Գիտահետազոտական գործունեությամբ առավել ակտիվ զբաղվող դասախոսները պարբերաբար մասնակցում են համալսարանում և հանրապետության այլ գիտական կառույցներում կազմակերպվող ազգային և միջազգային գիտաժողովներին: Սակայն, ինչպես պարզ դարձավ, առկա է ՊԴ կազմի օտար լեզվի՝ անգլերենի տիրապետման ոչ բավարար մակարդակ: Այս առումով կարևոր է նշել, որ բուհը աջակցում է դասախոսներին՝ կազմակերպելով հոդվածների թարգմանություններ:

Կարևոր է ընդգծել, որ գիտահետազոտական գործունեության խթանման և միջազգայնացման տեսանկյունից կարևոր դերակատարություն ունի նաև ՄՈՒՀ-ի գիտահետազոտական կենտրոնը, գիտական լաբորատորիաները, Շախմատ գիտահետազոտական ինստիտուտը (2021-ից կազմակերպում է միջազգային գիտաժողովներ որին մասնակցել են շուրջ 90-երկրից 500 մասնակիցներ), Սփյուռք գիտաուսումնական կենտրոնը: Այս համատեքստում ՄՈՒՀ-ը գործում է որպես միասնական համակարգ, այդուհանդերձ գործընթացները հատվածական են և ընդգրկում են համեմատաբար փոքր թվով մասնակիցների, ակտիվ հետազոտական միջազգային ծրագրեր դեռևս չեն իրականացվում:

Ըստ Գիտահետազոտական կենտրոնի ներկայացրած տվյալների՝ համալսարանի երկու ամսագրեր՝ MAIN ISSUES OF PEDAGOGY and PSYCHOLOGY և ARMENIAN JOURNAL OF SPECIAL EDUCATION ընդգրկվել են EriHplus միջազգային գիտաչափական շտեմարանում, որը հերթական աստիճանն է Scopus և Web of Science հեղինակավոր գիտաչափական շտեմարաններում ներկայացվելու համար: Երկու ամսագրերն արդեն իսկ ընդգրկված էին միջազգային DOAJ Crossref, WorldCat Google scholar, EriHplus, Road համակարգերում:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Համալսարանում իրականացրվել են ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների փոխկապակցմանը միտված մի շարք միջոցառումներ: Մասնավորապես՝ կրթական վերջնարդյունքներում ավելացել է հետազոտական բաղադրիչը՝ դրան համապատասխան դասընթացների հստակ վերանայման տրամաբանությամբ: Մասնավորապես, մանկավարժական բոլոր մասնագիտությունների համար մագիստրոսի կրթական ծրագրերում ներդրված է «Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն» դասընթացը, իսկ «Հոգեբանություն» մասնագիտության մագիստրոսական կրթական ծրագրում՝ «Հոգեբանական հետազոտությունների մեթոդաբանություն» դասընթացը, տարրական մանկավարժություն և մեթոդիկա մագիստրոսի կրթական ծրագրում՝ «Գիտական գրավոր խոսք» դասընթացը: Համալսարանի բակալավրի կրթական ծրագրում հետազոտական աշխատանք նախատեսված է «Մասնագիտական պրակտիկա», «Ավարտական աշխատանք» կրթամասերում:

Ավելացվել է նախագծային աշխատանքների իրականացումը դպրոցներում: Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ուսումնասիրությունը ցույց

տվեց, որ դրանց թեմաները բխում են ամբիոնի ուղղվածությունից: Մագիստրոսական թեզերի հետազոտությունների արդյունքները որոշ մասնագիտությունների (Հոգեբանություն, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա) պարագայում զեկուցվել են ուսանող-դասախոս համատեղ գիտաժողովում, որոնց նյութերը հրապարակվել են գիտական խորհրդի երաշխավորությամբ:

Հետազոտության արդյունքները շատ հաճախ որպես դասագիրք կամ ձեռնարկ ներդրվում են կրթական գործընթացներում: Այսպես՝ 2022թ. ՀՊՄՀ-ի Կիրառական հոգեբանության ամբիոնի դասավանդողի հեղինակած «Ընդհանուր հոգեբանություն» ուսումնական ձեռնարկում զետեղված ուսումնական նյութը փորձարկվել է Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետում:

ՄՈՒՀ-ի գիտահետազոտական կենտրոնի կողմից 2023թ. իրականացվել են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցումից բավարարվածության հարցումներ՝ ուսանողների և դասավանդողների շրջանում, որոնց արդյունքները փաստում են, որ ուսանողների մեծամասնությունը իրականացրել է հետազոտական աշխատանք իր ուսումնառության ընթացքում: Դասավանդողների մոտ 79% իր գործունեության ընթացքում իրականացրել է 10-ից ավել հետազոտական աշխատանքներ, նրանց 30 տոկոսը կարծում է, որ ՄՈՒՀ-ն ունի բավարար պայմաններ հետազոտության համար, նույնքան տոկոսը գտնում է, որ ոչ լիարժեք են այդ պայմանները, իսկ մոտ 35%-ը գտնում է, որ այն կարելի է իրականացնել նաև գործընկեր գիտահետազոտական ինստիտուտների բազայի վրա: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հաճախ դասախոսները ներգրավում են ուսանողներին հետազոտական աշխատանքների իրականացման տարբեր փուլերում՝ հետազոտական տվյալների հավաքագրում, արդյունքների ամփոփում և մշակում և այլն, օգտվում են գործընկեր գիտահետազոտական ինստիտուտների բազաներից, ինչպես օրինակ՝ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի բազայից:

ՀՊՄՀ-ն ուսումնական և հետազոտական գործունեության փոխկապակցմանն ուղղված աշխատանքներում ընդգծում է ՄՈՒՀ-ում գործող «Շախմատ» գիտահետազոտական լաբորատորիայի գործունեությունը: Լաբորատորիայում ամկա ծրագրերը հնարավորություն են տալիս լաբորատոր և գործնական պարապմունքների շրջանակներում հոգեբանական պրակտիկ հետազոտություններ (հոգեբանական անձնային թեստեր) իրականացնել լաբորատոր պայմաններում, ըստ էության ուսանողները ծանոթանում են ծրագրերի ղեկավարմանը և արդյունքների վերլուծության մեթոդաբանությանը: Լաբորատորիայի կարևոր ձեռքբերումներից է նաև հանրակրթական դպրոցում «Շախմատ» առարկայի դասավանդմանը վերաբերվող դպրոցականների շրջանում հոգեբանամանկավարժական ուսումնասիրությունների իրականացումը դասախոսների և ուսանողների կողմից:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՀՊՄՀ-ն նախորդ հավատարմագրումից հետո իրականացրել է բարելավումներ գիտահետազոտական ոլորտի զարգացման համար: Մասնավորապես դրական է, որ հստակեցվել են գիտահետազոտական ուղղությունները, ՌԾ-ում ամրագրվել են զարգացման ուղղությունները, պլանավորվել են գործողություններ՝ ըստ ուղղությունների, ինչպես նաև մշակվել են առաջընթացի գնահատման ցուցիչներ: Փորձագիտական խումբը գտնում է, որ հետազոտական հստակ ուղղությունները կարող են գրավել բարձրակարգ դասախոսներին, հետազոտողներին և ուսանողներին, ովքեր հետաքրքրված են այդ ոլորտներով: Շահակիցների ակտիվ

ներգրավվածությունը կարող է ավելի ամրապնդել համալսարանի հետազոտական կարողությունները և կրթական ծրագրերը: Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ ուղղությունները հստակեցնելուց զատ, ՀՊՄՀ-ն քայլեր ձեռնարկի հստակեցված հետազոտական ուղղություններով համագործակցությունների խթանման ուղղությամբ բուհի ներսում և արտաքին գործընկերների հետ: Այս համագործակցությունները կարող են հանգեցնել նորարարական նախագծերի իրականացմանը և լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրների ներգրավմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում նաև, որ բուհը հստակեցրել է գնահատման առանցքային ցուցիչները, միննույն ժամանակ կարևոր է, որ գնահատման առանցքային ցուցիչները լինեն իրատեսական: Կարևոր է, որ բուհը հաշվի առնի առկա մարդկային և ֆինանսական ռեսուրսները ցուցիչները պլանավորելիս:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ բուհը որդեգրել է հետազոտական համալսարան դառնալու ուղին, և նշում, որ այս ուղին նախանշելու համար անհրաժեշտ կլինի մշակել և ներդնել ճանապարհային քարտեզ, որտեղ արտացոլված կլինեն այն արդյունքները, որոնց սպասում է բուհը:

Փորձագիտական խումբը դրական է համարում բուհում գործող միջնաժամկետ և կարճաժամկետ գիտահետազոտական ծրագրերը, որոնք բխում են ռազմավարական առանահերթություններից: Դրական է, որ վերջին տարիներին աճել է ԲԿԳԿ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի թիվը, որը հնարավորություն է տալիս մեծաթիվ դասախոսների ներգրավել գիտահետազոտական աշխատանքներում, ինչպես նաև ստեղծել նոր լաբորատորիաներ:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում բուհի այն նպատակադրումը, որը կապված է ներքին դրամաշնորհներ ներդնելու հետ: Կարևոր է, որ բուհը նույնպես ռեսուրսներ ներդնի գիտահետազոտական ոլորտի ռազմավարական ուղղությունների զարգացման համար, ինչը կայունության հիմքեր կստեղծի ոլորտի համաչափ զարգացման համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրման խորհրդատվություններից ելնելով, բուհը քայլեր է ձեռնարկել հետազոտության միջազգայնացման ուղղությամբ՝ մեծ աջակցություն ցույց տալով դասախոսական կազմի ներկայացուցիչներին տպագրվելու բարձր վարկանիշ ունեցող գիտաչափական ամսագրերում: Ներդրված ջանքերի արդյունքում շատացել է տպագրվող հոդվածների քանակը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ վերջին տարիներին բավականին մեծացել են ուսանող-դասախոս համատեղ տպագրվող հոդվածները, բուհը ջանքեր է գործադրում հետազոտական արդյունքները ուսումնական գործընթացում ներդնելու համար, ներդրվել են հետազոտական հմտությունների ձևավորման համար դասընթացներ ինչպես բակալավրի, այնպես էլ մագիստրոսի կրթական մակարդակներում, որոնք նախադրյալներ են ստեղծում ոլորտի զարգացման համար: Միննույն ժամանակ, փորձագիտական խումբը կարևորում է, որ բուհը դիտարկի իրականացվող բոլոր ծրագրերի, տպագրվող հոդվածների և կատարվող հետազոտական աշխատանքների արդյունքների և որակի գնահատումը, ինչը հնարավորություն կտա նախանշելու խնդիրները և զարգացման ուղիները, իսկ հոդվածների որակի գնահատումը չափազանց կարևոր են ակադեմիական գերազանցության բարձր չափանիշները պահպանելու և հետազոտական գործունեության դրական ազդեցությունը հասարակության վրա ապահովելու համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՀՊՄՀ-ն կարևորել ու հաշվի է առել նախորդ հավատարմագրման խորհրդատվությունները, ըստ այդմ հստակեցրել է գիտահետազոտական ոլորտում իր առաջնահերթություններն ու նպատակները, հետազոտական գործունեության խթանման արդյունքում ավելացել են դասախոս-ուսանող համատեղ հոդվածները, բուհը ջանքեր է գործադրում հետազոտական գործընթացների միջազգայնացման համար, ընդլայնվել է հանրակրթական դպրոցին առնչվող խնդիրներին վերաբերող հետազոտությունների շրջանակը, տեսանելի են ՄՈՒՀ-ի ջանքերն ուսումնական գործընթացի և գիտահետազոտության միջև կապը սերտացելու ուղղությամբ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը բավարարում է չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն: ՀՊՄՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

ՀՊՄՀ-ն իր գործունեությունն իրականացնում է 6 գործող ուսումնական մասնաշենքերում՝ շուրջ 44156.5 քառ.մ ընդհանուր տարածքով, ներառյալ Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնքի հարևանությամբ գտնվող ուսումնական բազայի մասնաշենքը: Կախված մասնագիտական կրթական ծրագրերի առանձնահատկություններից (Կերպարվեստ, Երաժշտական կրթություն, Դեկորատիվ-կիրառական արվեստ, Հագուստի մոդելավորում, Պարարվեստի մանկավարժություն և այլն) համալսարանում բացի լսարաններից առկա են գեղանկարչության, քանդակագործության արվեստանոցներ, հագուստի մոդելավորման լաբորատորիաներ, ցուցասրահներ, դահլիճներ և այլն:

ՄՈՒՀ-ը ունի 16 ուսումնական և 1 գիտական լաբորատորիա (Կենսաբանական ակտիվ միացությունների և կենսաանվտանգության գիտական լաբորատորիա):

ՀՊՄՀ-ի գիտական գրադարանն ունի 4 մասնաշենքերում գործող 8 ընթերցասրահներ, որոնց զգալի մասը հազեցած է ժամանակակից համակարգչային տեխնիկայով: Գրադարանի գրապաշարը 2023 թվականի օգոստոս ամսվա դրությամբ կազմում է 509.838 օրինակ գիրք: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ համալսարանի գրադարանը չի ապահովում միջազգային մատենագիտական շտեմարանների հասանելիություն ուսանողների և դասավանդողների համար:

Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի (2022-2025թթ.) գործողությունների կատարման պլանում 7-րդ ռազմավարական ուղղության մեջ, որը վերաբերվում է ենթակառուցվածքներին և նյութատեխնիկական բազային, սահմանված են առաջընթացի գնահատման ցուցիչները, որոնք հստակ քանակական տեսք ունեն, օրինակ՝ համալսարանի տեխնիկայի թարմացում առնվազն՝ տասը տոկոս, տարեկան առնվազն՝ երկու լսարանի, լաբորատորիայի վերանորոգում, տարեկան առնվազն՝ մեկ մասնաշենքի սանիտարահիգիենիկ պայմանների վերանորոգում, գիտական գրադարանի ֆոնդի թվայնացում տարեկան առնվազն՝ երեսուն տոկոսով և այլն:

Վերջին երեք տարիների ընթացքում ՀՊՄՀ-ն իրականացրել է ենթակառուցվածքի և ռեսուրսների բարելավման որոշ կարևոր միջոցառումներ. լսարանների վերանորոգում, ժամանակակից սարքավորումներով լաբորատորիաների ստեղծում, ներքին ցանցի, ինտերնետի կապի արդյունավետության բարձրացում, ծրագրային ապահովման փաթեթների և սերվերների ձեռք բերում, որը անհրաժեշտ է ՈւԳԱԿՀ-ի լիարժեք գործարկման համար: ԲՏՃՄ մասնագիտությունների լաբորատորիաների վերանորոգումը և սարքավորումներով ապահովումը կատարվել է դրամաշնորհային ծրագրով: Բուհում գործող Google Classroom էլեկտրոնային հարթակը ծառայում է որպես ուսումնական գործընթացի կազմակերպման ռեսուրս (2016-ից գործող հարթակը, ինստիտուցիոնալ հիմքերով կիրառություն է ստացել համավարակի պայմաններում), վերջինիս ակտիվ կիրառությունը նախապայման է հանդիսացել լսարանների տեխնիկական վերազինման համար: Համալսարանում գործում են 5 էլեկտրոնային (համակարգչային) ընթերցասրահներ: Համալսարանում առկա են արդիական համակարգչային տեխնիկայով համալրված և համացանցի հասանելիությամբ 12 ինֆորմատիկայի և այլ մասնագիտական համակարգչային լսարաններ, մոտ 64 հեռուստացույց և սմարթ դիսպլեյ ունեն լսարաններում:

2020-2023 համալսարանը ձեռք է բերել 74 համակարգիչներ, տեխնիկապես վերազինել է 215-ը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ընդհանուր թվով առկա են 750 համակարգիչներ, սակայն դրանցից շատերի տեխնիկական հնարավորությունները թույլ չեն տալիս ներբեռնել ժամանակակից ծրագրային ապահովում, այս տեսանկյունից առկա է շարունակական բարելավման խնդիր:

Համալսարանի տարածքում գործում են թանգարան, մարզադահլիճ, մարզադաշտ, նիստերի դահլիճներ, երկու բուժկետ, 4 մասնաշենքերում սննդի կետեր:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհը նաև կիրառում է իր գործընկեր հաստատությունների ռեսուրսները: Օրինակ՝ Կենսաբանություն ՄԿԾ-ում:

Ըստ կատարված հարցումների՝ ուսումնառողների 74%-ը, իսկ դասավանդողների՝ 76%-ը բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Ըստ ինքնավերլուծության և կից ներկայացված փաստաթղթերի՝ ՀՊՄՀ-ի ֆինանսական ռեսուրսները գոյանում են բյուջետային և արտաբյուջետային մուտքերից, որոնցից 2023թ.-ի եկամուտների և ծախսերի նախահաշվով մուտքերի շուրջ 26%-ը պետական ֆինանսավորումից են, 64%՝ ուսման վճարներից, 10 %-ը՝ այլ մուտքերից: Համալսարանի դրամական միջոցների ծախսերը կատարվում են ըստ հետևյալ ոլորտների. աշխատավարձ՝ մոտ 76%, որից 48%-ը դասախոսական կազմի աշխատավարձ, կրթաթոշակ՝ մոտ 1,31%, ուսման վարձերի զեղչեր՝ 5,32%, գիտության ծախսեր՝ մոտ 3,26% և այլն:

Ֆինանսների հատկացումը տարեկան կտրվածքով է, սակայն բուհը նաև իրականացրել է 2022 թ. երկարաժամկետ պլանավորում՝ ըստ ՌԾ գերակա ուղղությունների:

Վերջին երեք տարիների համեմատությամբ պետական բյուջեից եկամուտները ավելացել են: Բյուջեի նախահաշվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին 3 տարիներին նվազել են արտաբյուջեի եկամուտները՝ մեծամասամբ վճարովի ծառայությունների և դրամաշնորհների նվազման արդյունքում, սակայն ընդհանուր թվի նվազում տեղի չի ունեցել:

2024թ. եկամուտների նախահաշիվը նույնական է նախորդ տարվա նախահաշվին, իսկ ծախսերում ավելացել է գույքի պահպանման ծառայության տողը՝ 6 մլն. դրամով, գործուղման ծախսերը 5 մլն. դրամից դարձել է 18,852 մլն դրամ, կապիտալ հիմնանորոգման և ընթացիկ նորոգման ծախսերը 12 մլն. դրամից դարձել է 1 մլն դրամ, վերջինս պայմանավորված է ակադեմիական քաղաքի կառուցման հետ:

Հաստատությունը պահպանում է բյուջեում 400 միլիոնից ոչ պակաս մնացորդ, որը, ինչպես պարզվեց փորձագիտական հանդիպումներից, իրենից ներկայացնում է համալսարանի երկու ամսվա աշխատավարձի ընդհանուր գումարը:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

ՀՊՄՀ-ի ֆինանսական գործունեության իրավական հիմքն են կազմում «Հաշվապահական հաշվառման մասին», «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքները, «Գնումների մասին» օրենքը, բուհի կանոնադրությունը, համալսարանի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, հաշվապահության կանոնադրությունը, ֆինանսների ծրագրավորման և վիճակագրության վարչության կանոնադրությունը:

Մասնագիտական կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող ֆինանսական ռեսուրսների բաշխումը կատարվում է մասնակցային ձևով՝ համալսարանի բոլոր ստորաբաժանումների և ենթակառուցվածքների հայտերի հիման ձեռք են բերվում կրթական ծրագրերի իրականացման և ուսումնական միջավայրի ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսները: Անհրաժեշտության դեպքում կարող է իրականացվել ֆինանսական ռեսուրսների վերաբաշխում, որը ըստ էության իրականացվել է միայն 2023 թ.-ին:

Ֆինանսական միջոցների պլանավորման և բաշխման գործող քաղաքականության արդյունավետությունը գնահատվում է համալսարանի Հոգաբարձուների խորհրդի նիստերին տարեկան իրականացրած ֆինանսական գործունեության մասին ռեկտորի հաշվետվության քննարկման ժամանակ:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Լսարանային ֆոնդի բաշխումն ու պլանավորումն իրականացվում է ֆակուլտետներում ուսումնական բաժնի համակարգմամբ ուսումնական տարվա սկզբին՝ ելնելով կրթական ծրագրերի թվից, յուրաքանչյուր մասնագիտությամբ սովորող ուսանողների թվից և ուսումնառության ձևից: Ինչպես պարզվեց փորձագիտական այցից, համալսարանում դասընթացները կազմակերպվում են մեկ հերթով, բացառությամբ՝ մեկ ֆակուլտետի:

Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ բուհի առջև ծառայած հրատապ խնդիրներից է աշխատակիցների աշխատավարձերի բարձրացումը: Մյուս կողմից 2024թ. նախահաշվում ծախսերի տողում այն 2023թ. համեմատ մնացել է նույնը՝ կազմելով ընդհանուր ծախսերի 85,8%-ը:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Համալսարանի արտաքին և ներքին փաստաթղթաշրջանառության ապահովման ընթացակարգը, ինչպես նաև այդ գործընթացներում պատասխանատու ստորաբաժանումների գործառույթների սահմանումը կանոնակարգվում են «Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի փաստաթղթաշրջանառության կարգ»-ով: Ըստ ինքնավերլուծության՝ համալսարանն առայժմ նպատակահարմար չի գտնում ստեղծված ֆինանսական ոչ այդքան բարվոք վիճակում ներդնել միասնական էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն ապահովող համակարգ (օրինակ՝ Mulberry):

Վերջին երկու տարում համալսարանում իրականացվել են աշխատանքներ փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության առանձին էլեկտրոնային համակարգերի զարգացման ու կիրառման արդյունավետության բարձրացման ուղղությամբ (12 լիցենզիա և 1 սպասարկում «ՀԾ-Ձեռնարկություն» հաշվապահական ծրագրի մեծ փաթեթով, էլեկտրոնային տեղեկատվական հարթակը (ՌԻԳԱԿՀ) և այլն): Ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգը էլեկտրոնային տեղեկատվական համակարգը ներառում է 7 մոդուլ, որոնք ապահովում են ուսումնական և որոշ վարչական ստորաբաժանումների գործունեությունը: Համակարգը վերջին տարիներին կրել է մի շարք փոփոխություններ՝ հիմնականում ընդլայնվել է գործիքակազմի հասանելությունը, (մասնավորապես դասախոսների տվյալների ամրագրման համար անհրաժեշտ գործիքներ, հաստիքակազմի տեղեկագրի էլեկտրոնային տարբերակների ստեղծում՝ ուսումնական մասի և ամբիոնների համար, դասաբաշխման գործիքակազմի կատարելագործում, ուսանողների տվյալների դիտելիության և մեկնաբանման հնարավորություններ, էլ. տեղեկագրերի ստեղծման հնարավորություն և դրանց ժամկետների վերահսկում և այլ փոփոխություններ): Իրականացված փոփոխությունները բխել են աշխատանքային խնդիրների հրնթացս լուծման և համակարգման տրամաբնությամբ և համակարգից օգտվող շահակիցների կողմից բարձրաձայնված կարիքների հիման վրա:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

ՀՊՄՀ-ում գործում են անվտանգության ենթակառուցվածքները և համապատասխան ծառայությունը: Բոլոր մասնաշենքերի անցակետերում տեղադրված են աշխատակիցների մուտքը և ելքը հաշվառող սարքեր, ինչպես նաև առանձին մասնաշենքերի ներքին և բակային տարածքներում տեղադրված են տեսահսկման և ահազանգման համակարգեր: Համալսարանում առկա է հակահրդեհային միջոցառումների պլանը, բոլոր մասնաշենքերում տեղադրված են կրակմարիչներ, փակցված են «Տարհանման պլան-սխեմա» ցուցանակներ:

2018թ. սկսած համալսարանն իրականացնում է աշխատակիցների բժշկական ապահովագրություն, իսկ 2023թ. փոխվել է ապահովագրության ձեռքբերման գործընթացը, և այն իրականացվել է ՀՀ գնումների գործընթացի համապատասխան: Կնքվել է պայմանագիր համալսարանի 955 հիմնական աշխատակիցների համար:

Համալսարանում գործում են առաջին օգնության երկու կենտրոններ, որոնք ապահովված են անհրաժեշտ դեղորայքով և սարքավորումներով:

Հաստատության ոչ բոլոր մասնաշենքերն են հարմարեցված հատուկ կարիք ունեցող ուսանողների և աշխատակիցների համար, չկան համապատասխան սանհանգույցներ: Ըստ ենթակառուցվածքների և ռեսուրսների վերաբերյալ 2023թ. կատարված հարցման

արդյունքների՝ «Մասնաշենքերում նախատեսված են արդյո՞ք հատուկ կարիք ունեցող մարդկանց տեղաշարժման համար նպաստավոր պայմաններ» հարցին դասախոսական անձնակազմի մոտ 40 %-ը պատասխանել է՝ չի բավարարում:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիությունը, հասանելիությունը և արդյունավետությունը գնահատելու նպատակով համալսարանը պարբերաբար հարցումներ է անցկացնում շահակիցների շրջանում:

Ըստ ինքնավերլուծության՝ ֆակուլտետները, ամբիոնները ոչ միշտ են հարցումների արդյունքները քննարկում և կիրառում: Ֆակուլտետների և ամբիոնների կողմից իրականացվող գնահատման արդյունքների հիման վրա բացահայտված թերացումների բարելավմանն ուղղված քայլերի պլան առկա չէ:

Ըստ 2023թ. կատարված հարցումների՝ ուսանողները խնդիրներ են տեսնում սննդի, սանհանգույցների և ջեռուցման հետ կապված:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՀՊՄՀ-ի ջանքերն ուղղված ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների ապահովմանը կրթական միջավայրի, առաքելության ու ռազմավարական նպատակների իրականացման համար: Դրական է, որ վերջին տարիներին բարելավվել են բուհի ուսումնագիտական ռեսուրսները, մասնավորապես ԲՏ&Մ մասնագիտությունների առումով, որը նպաստատում է անհրաժեշտ միջավայրի ձևավորման համար:

Փորձագիտական խումբը նաև կարևորոր է համարում, որ բուհի ջանքերի շնորհիվ միջազգային ծրագրերի ներգրավվածության արդյունքում բուհում պարբերաբար համալրվում են ՄԿԾ-ների համար անհրաժեշտ լաբորատորիաներն ու ռեսուրսները: ՀՊՄՀ գրադարանը բավականին հարուստ ռեսուրսներ ունի, առկա է նաև էլեկտրոնային գրականություն, բուհը քայլեր է իրականացնում գրադարանային ռեսուրսների աստիճանական բարելավման համար, ինչը հնարավորություն է տալիս զարգացնելու կրթական և հետազոտական գործունեությունը: Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ բուհը ջանքեր գործադրի գրադարանի միջազգային հանրահայտ ամսագրերին բաժանորդագրվելու համար, ինչը կնպաստի մշտապես իրազեկ լինելուն վերջին գիտական զարգացումներին:

Դեռևս խնդիր է մնում բուհի ֆինանսական կայունությունը, բուհի բյուջեի մուտքերի գերակշիռ մասը կազմում են ուսման վճարները և պետական ֆինանսավորումը, իսկ ելքերի ամենամեծ բաժինը աշխատավարձերն են, ինչը դանդաղեցնում է հաստատության զարգացման տեմպերը, և ՀՊՄՀ-ն չի կարողանում սեփական միջոցներով ֆինանսավորել հետազոտական նախագծեր: Կարևոր է, որ բուհը քայլեր ձեռնարկի ֆինանսական մուտքերի դիվերսիֆիկացիայի համար, ինչը կնպաստի բուհի զարգացմանը և կայունությանը: Բուհը, ունենալով մեծ մարդկային պոտենցիալ, կարող է դիտարկել կարճաժամկետ վճարովի ծառայությունների մատուցումը, ինչը լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ կապահովի բուհին և կնպաստի առանձին ֆակուլտետների զարգացմանը: Բուհը կարող է ակտիվացնել շրջանավարտների հետ կապը՝ նպաստելու նրանց կողմից ներդրումների իրականացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՀՊՄՀ-ի վերջին տարիների կատարած աշխատանքները տեղեկատվության շրջանառման և փաստաթղթավորման

գործընթացները զարգացնելու և թվայնացնելու առումով: Կարևոր է ընդգծել Google Classroom հարթակի կիրառումը կրթական գործընթացների կառավարման համար:

Համալսարանում առկա են առողջության և անվտանգության պահպանման ծառայությունները, սակայն բարելավման անհրաժեշտություն կա հատուկ կարիքներ ունեցող ուսանողների և դասավանդողների համար նպաստավոր կրթական միջավայրի ստեղծման համար:

Դրական է, որ բուհը ուշադրություն է դարձնում ռեսուրսների կիրառելիության և հասանելիության գնահատմանը, մինչև ժամանակ կարևոր է, որ արդյունքները պարբերաբար քննարկվեն բուհում և կազմվեն խնդիրների բարելավման պլաններ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ հաստատության ռեսուրսային բազան բավարար է սահմանված առաքելության և նպատակների իրականացման համար, կրթական ծրագրերի նպատակների իրականացման և ուսումնառության սահմանված վերջնարդյունքների ձեռքբերման համար բուհն ապահովված է համապատասխան ենթակառուցվածքներով, շարունակաբար զարգացնում է դրանք, առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու թվայնացված համակարգ, առկա են կրթական միջավայրի ապահովության, առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններ, ռեսուրսների արդիականացմանն ուղղված գործընթացներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՀՊՄՀ-ն բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: ՀՊՄՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱԲԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

ՀՊՄՀ-ում հաշվետվողականության կարգը սահմանվում է համալսարանի կանոնադրությամբ, ռազմավարական ծրագրով: Հաշվետվողականության մեխանիզմը ենթադրում է ներքևից վերև հաշվետվողականության համակարգ: Ֆակուլտետները լսում են իրենց կազմում ընդգրկված ամբիոնների տարեկան հաշվետվությունները ֆակուլտետի խորհրդի նիստերում, այնուհետև դրանք ներկայացվում են համակարգող պրոռեկտորներին: Համալսարանի բոլոր ստորաբաժանումների հաշվետվությունները ներառվում են ռեկտորի տարեկան մեծածավալ (2023 թվականին՝ 1533 էջ) հաշվետվության մեջ, որը լսում և հաստատվում է ՀՊՄՀ Հոգաբարձուների խորհուրդը, այնուհետև հաշվետվությունը տեղադրվում է համալսարանի պաշտոնական կայքում:

Հաշվետվությունների մեջ միասնական ձևաչափով ներկայացված են.

- ֆակուլտետների հաշվետվությունները,
- ամբիոնների հաշվետվությունները (ըստ ուսումնական գործունեություն, ուսումնամեթոդական գործունեություն, գիտահետազոտական աշխատանք, արտաքին կապեր և միջազգային գործունեություն, մասնագիտական կողմնորոշման և մարքեթինգային գործունեություն կետերի),
- ստորաբաժանումների հաշվետվությունները (ըստ ռազմավարական ծրագրի հիմնական ուղղությունների և գործողությունների):

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տարեկան հաշվետվությունը չի ընդհանրացնում բուհի հիմնական ձեռքբերումները, այն չափազանց ծավալուն է շահակիցների ուսումնասիրության համար և պահանջում է լրացուցիչ վերլուծություններ ընդհանրական պատկերի ձևավորման համար:

Արձագանքելով նախորդ փորձագիտական խմբի խորհրդատվությանը՝ հաշվետվությունների վերլուծական բաղադրիչի ներդրման հետ կապված՝ ՀՊՄՀ-ը ներդրել է SWOT վերլուծությունը յուրաքանչյուր ստորաբաժանման հաշվետվության ավարտին: Հարկ է նաև նշել, որ որոշ ստորաբաժանումների (օրինակ՝ Միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոն) հաշվետվություններում ցույց է տրված ստորաբաժանման կողմից ՌԾ կատարման ընթացքը: Սակայն համեմատական չի ներկայացնում նախորդ տարվա արդյունքների հետ, չի վերլուծվում արդյունքների ձեռքբերման դինամիկան, պլանավորված, բայց չկատարված գործընթացների պատճառները:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

Համալսարանի ընթացակարգերի, գործընթացների թափանցիկության և հասարակությանը հասանելիության ապահովման համար հիմնական պատասխանատու կառույցը լրատվության և հանրային կապերի կենտրոնն է: Կենտրոնի գործառույթներն ամրագրված են «Լրատվության և հանրության հետ կապերի կենտրոնի» կանոնադրությամբ (ընդունված 2023 թվականին), ըստ որի՝ կենտրոնը զբաղվում է համալսարանի տեղեկատվական քաղաքականության իրականացմամբ: Այն իրականացնում և կազմակերպում է բուհի տեղեկատվական քաղաքականությունը, իրագրելով հանրությանը հաստատության գործունեության վերաբերյալ <http://www.aspu.am> պաշտոնական կայքէջի, սոցիալական էջերի, «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի, համալսարանական ռադիո «Ֆամա»-ի, և «Հաջողության բանաձև» հաղորդման միջոցով: ՀՊՄՀ Յուրօրոյան ալիքն ապահովում է բարձր դիտողականություն: Ըստ ինքնավերլուծության՝ կայքի դիտելիությունը վերջին տարիներին նվազել է (հիմնավորվում է դիմորդների և ուսանողների թվաքանակի նվազմամբ):

Համալսարանի պաշտոնական կայքէջը ծառայում է որպես տեղեկատվության փոխանցման հիմնական մեխանիզմ. կայքէջում նորություններից և լուսաբանողական նյութերից գատ հրապարակված են համալսարանի և ստորաբաժանումների կանոնադրությունները, գործող ռազմավարական ծրագիրը, ընթացակարգերը, հաշվետվությունները, համագործակցության պայմանագրերն ու հուշագրերը, համալսարանի դիմելու գործընթացի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը: Լրատվության և հանրության հետ կապերի կենտրոնը հաշվետու է աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորին: Հանձնարարականները կենտրոնին տրվում են պրոռեկտորի կողմից, օրինակ՝ ընդունելությունից առաջ գովազդների ստեղծում և տարածում, արշավների կազմակերպում:

Համալսարանական կյանքի լուսաբանման գործընթացում ակտիվորեն ներգրավված են նաև ուսանողները և համալսարանի ավագ դպրոցի աշակերտները, որոնք հողվածներ են գրում պաշտոնաթերթի և կայքի համար, մասնակցում ռադիո ՖԱՄԱ-ի հաղորդումների ցանկի ընդլայնման և թարմացման աշխատանքներին: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ի համեմատություն կայքի հայերեն տարբերակի տեղեկատվության, բավականին քիչ հազեցած են կայքի անգլալեզու և ռուսալեզու բաժինները: Փորձագիտական այցի ուսումնասիրությունից պարզ դարձավ նաև, որ կայքի

«Կանոնակարգեր» բաժնում կարելի է տեսնել նույն փաստաթղթի և հին տարբերակը և վերանայվածը, որտեղ նշում չունի հին փաստաթղթի ուժը կորցրած լինելու փաստը:

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Որպես հասարակության հետ կապերի ձևավորման հիմնական մեխանիզմներ՝ համալսարանի կողմից կիրառվում են համալսարանի պաշտոնական կայքէջը, սոցիալական հարթակներից ֆեյսբուքյան էջը, պաշտոնաթերթը, համալսարանի յուրօրյան ալիքը և ռադիո Ֆամայի սոցիալական էջը: Ըստ ինքնավերլուծության՝ վերոնշյալների միջոցով համալսարանը ստանում է օրական 20-30 նամակներ (հիմնականում՝ ուսանողներից, դիմորդներից, շրջանավարտներից): Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դրանք վերաբերվում են ընդունելությանը, քննություններին և այլն:

Վերջիններից՝ որպես ամենաարդյունավետ գործիք համալսարանը դիտարկում է կայքում գործող «Կապ» բաժինը: Հաշվի առնելով նախորդ փորձագիտական խմբի կողմից տրված խորհրդատվությունը՝ ՀՊՄՀ-ի Լրատվության և հանրության հետ կապերի կենտրոնն իրականացրել է ուսանողների շրջանում հարցում՝ ուսումնասիրելու բուհ-ուսանող-դիմորդ հետադարձ կապի ամրապնդման մեխանիզմների արդյունավետությունը (մասնակցել են 123 ուսանողներ): Ներկայացված փաստաթղթի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առկա չեն էական հետևություններ այն մասին, թե որ գործիքներն են առավել արդյունավետ, ինչ քայլեր է հնարավոր իրականացնել յուրաքանչյուր գործիքի արդյունավետությունը բարձրացնելու համար: Մյուս հաճախ կիրառելի գործիքը հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող համալսարանի ֆեյսբուքյան էջն է: Ֆեյսբուքյան էջը օպերատիվ կերպով թարմացվում է, տեղադրվում են նորություններ (հոդվածներ, տեսանյութեր):

Հասարակության հետ հետադարձ կապի մեխանիզմներ են դիտարկվում այցելություններ դպրոցները, գործատուների հետ մշտական կապը և նրանց ֆակուլտետների խորհուրդներում ներգրավվածությունը, ինչպես նաև որակավորման հանձնաժողովներում տրվող հաշվետվությունները: Հարկ է նկատել, որ տարբեր ՄԿԾ-ների ավարտական հանձնաժողովների բակալավրիատի և մագիստրատուրայի հաշվետվությունները կրկնվում են, երբեմն կրկնվում են իրենց դիտարկումներով (մաթեմատիկա, տեխնոլոգիա և ձեռնարկչություն, կերպարվեստ, հոգեբանություն, սոցիալական մանկավարժություն և այլն):

Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ շրջանավարտների հետ հետադարձ կապի համար ինստիտուցիոնալ մեխանիզմները բացակայում են:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Համալսարանի ինքնավերլուծության մեջ որպես բուհի կողմից հասարակությանը փոխանցվող արժեքներ ներկայացվում են ուսանողների կողմից մասնագիտական կամավորական աշխատանքների իրականացումը դպրոցներում:

Հասարակությանը գիտելիքի փոխանցման գործում կարևոր դեր ունի նաև «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնը, որը զբաղվում է սփյուռքի ուսուցիչների վերապատրաստման, սփյուռքի մշակութային դաշտին վերաբերող գեղարվեստական, ինչպես նաև մասնագիտական գրքերի, դասագրքերի, ձեռնարկների, ծրագրերի մշակմամբ: Վերջին խոշոր ձեռնարկը շուրջ երեսուն հատոր կազմող Յակոբ Օշականի «Ամբողջական երկեր»-ի ակադեմիական առաջին հատորն է եղել, որը հրատարակվել է 2020 թվականին:

Հասարակությանը գիտելիքի փոխանցման մեխանիզմներ են նաև ռադիո և հեռուստահաղորդումները, որոնք մշակվում են համալսարանի կողմից և ունեն կրթական-դաստիարակչական բնույթ, մասնավորապես՝ «Հաջողության բանաձև» հաղորդումը օգնում է հանրակրթական դպրոցի աշակերտների և դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը, «Աշխարհագրական թոհուբոհ»-ում հենց աշակերտները իրենց տարեկիցների համար հետաքրքիր և թարմ ձևաչափով ներկայացնում են տարբեր երկրներ, դրանց մասին հետաքրքիր փաստեր:

Համալսարանը վերջին տարիներին ընդգրկված է եղել մանկավարժների պարտադիր ատեստավորման վերապատրաստումները կազմակերպող կառույցների ցանկում և իրականացրել է ավելի քան 354 կամավոր ատեստավորում չանցած ուսուցիչների վերապատրաստում: Փորձագիտական այցի ընթացքում նշվեց նաև, որ համալսարանի կողմից դպրոցի տնօրենների վերապատրաստման իրականացում է նախատեսված:

Հասարակությանը արժեքների և գիտելիքների փոխանցման միջոցառումներ են իրականացվել նաև ամբիոնների կամ դասախոսների նախաձեռնությամբ, օրինակ՝ 2019թ.-ին ՄՈՒՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դասախոսները, համագործակցելով Մինեսոտայի համալսարանի հաշմանդամություն ունեցող անձանց ռեսուրս կենտրոնի հետ՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի Հայաստանյան գրասենյակի միջնորդությամբ ստեղծել և մշակել է ՀՀ-ում առաջին դասագիրքը ներառական կրթության վերաբերյալ՝ «Ներառական կրթության ռազմավարություն», որը տպագրվել է 1500 օրինակով և բաժանվել ՀՀ բազմաթիվ դպրոցներին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ Գեղարվեստական կրթության ֆակուլտետը յուրաքանչյուր շաբաթ հանրակրթական դպրոցների աշակերտների համար կազմակերպում նկարների ցուցահանդես, որը կազմակերպվում է բուհի շրջանավարտների կողմից (դասավանդում են հանրակրթական դպրոցներում՝ շարունակելով իրենց համագործակցությունը ֆակուլտետի հետ): Իսկ ֆակուլտետին կից «Իմ արվեստ ստուդիան» հասանելի է բոլոր տարիքային խմբերի անձանց համար, ովքեր ցանկություն ունեն ձեռք բերելու նկարչական հմտություններ: Ֆակուլտետի դասախոսները հեղինակում են հանրակրթական դպրոցի դասագրքեր (օրինակ՝ Լ. ներսիսյան Կերպարվեստ 1-4-րդ դասարանների դասագրքեր) նաև ներգրավված են հանրակրթական դպրոցի դասագրքերի, ինչպես նաև այլ գրքերի գեղարվեստական ձևավորման աշխատանքներում:

Դասողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում հաշվետվողականության քաղաքականության կատարելագործման հարցում բուհի կողմից իրականացված քայլերը: Դրական է նաև այն հանգամանքը, որ որոշ ստորաբաժանումների հաշվետվություններում հստակ երևում է կապը բուհի ռազմավարական ծրագրի և իրականացվող գործողությունների միջև: Մինևույն ժամանակ, փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ հաշվետվություններում կատարվեն նաև համեմատական վերլուծություններ, որը ցույց կտա բուհի առաջընթացը նախորդ տարիների համեմատ: Մյուս կողմից, ռեկտորի տարեկան հաշվետվությունը ստորաբաժանումների հաշվետվությունների զուտ մեխանիկական միավորումն է, այն չի ընդհանրացնում համալսարանի գործունեությունը: Տարեկան հաշվետվության ընդհանրացումը, որը կներառի բուհի հիմնական ձեռքբերումները և առաջընթացն՝ ըստ ռազմավարական առաջնահերթությունների, կբարձրացնի հաշվետվողականության արդյունավետությունը և բուհի հեղինակությունը՝ բուհի առաքելությանը հասնելու կարևոր արդյունքները մատնանշելու միջոցով:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում նաև բուհի կայքէջի և այլ սոցիալական ցանցերի հազեցվածությունը և պարբերաբար թարմացումները, ինչն ապահովում է անհրաժեշտ տեղեկատվության տարածումը հասարակության տարբեր շերտերին: Միննույն ժամանակ, կարևոր է, որ բուհը դիտարկի կայքի անզլալեզու և ռուսալեզու բաժինների հազեցվածության ապահովումը, ինչը կնպաստի և միջազգային մակարդակում բուհի մասին տեղեկատվության տարածմանը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՀՊՄՀ-ում հասարակության հետ հետադարձ կապի մեխանիզմների առկայությունը, ինչը հնարավորություն է տալիս տեղեկանալու խնդիրների վերաբերյալ: Միննույն ժամանակ, կարևոր է, որ բուհը դիտարկի կարևոր շահակիցների՝ շրջանավարտներից հետադարձ կապի ապահովման ինստիտուցիանալ մեխանիզմների ներդրումը, ինչը հնարավորություն կտա վեր հանել կրթական ծրագրերի բարելավման ուղղությունները շրջանավարտների մասնագիտական հետազոծի ուսումնասիրման միջոցով:

Խիստ կարևորելով ՀՊՄՀ-ի տեղն ու դերը հասարակությանն արժեքներ և գիտելիքներ փոխանցելու հարցում՝ փորձագիտական խումբը դրական է գնահատում բուհի պատրաստակամությունը տարաբնույթ նախաձեռնություններով գիտելիքի տարածման և փորձի փոխանակման ուղղությամբ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՀՊՄՀ-ում գործում է ներքին ու արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության համակարգ, հիմնականում ապահովում է իր ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, ստանձնում է հասարակության տարբեր շերտերին մանկավարժահոգեբանական գիտելիքներ փոխանցելու պատասխանատվությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Հայաստանի պետական մանկավարժական համալսարանը բավարարում է չափանիշ 8-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՊՄՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է բավարար:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ԶԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

Արտաքին կապերի զարգացումն ու միջազգայնացումը ՀՊՄՀ-ի նպատակներից են և սահմանված են 2020-2025թթ.-ի ռազմավարական ծրագրում: Գործող ՌԾ-ի 9-րդ ուղղությունով ՄՈՒՀ-ը նպատակ է դրել խթանել ՀՊՄՀ գործունեության միջազգայնացումը, նպաստել համալսարանի ներգրավվածությանը համաշխարհային կրթական գործընթացներում՝ զարգացնելով միջազգային գործընկերների հետ փոխգործակցությունը:

Միջազգայնացման հիմնական խնդիրներն են ՄՈՒՀ-ի միջազգային համագործակցության շրջանակի ընդլայնումը, եվրոպական և եվրասիական հետազոտական տարածքին ինտեգրումը, ուսանողական և ՊԴ կազմի միջազգային շարժունության ծրագրերի խթանումը, օտարալեզու կրթական ծրագրերի մշակումը, միջազգային դրամաշնորհային

ծրագրերին մասնակցության ապահովումը: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՄՈՒՀ-ի միջազգայնացման գործընթացները ընդգրկում են կրթությունը՝ ակադեմիական շարժունություն (փոխադարձ) և համագործակցության լայն շրջանակ տարբեր կրթական տարածքների բուհերի հետ (Ռուսաստան, Եվրոպական երկրներ, ԱՄՆ, Չինաստան), հետազոտությունը և գիտությունը՝ գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրեր, հոդվածների հրատարակում, միջազգային շտեմարանում ընդգրկված պարբերական(ներ), փորձի փոխանակում՝ համատեղ կոնֆերանսներ գիտաժողովներ, դասախոսություններ և այլն:

ՄՈՒՀ-ը կարևորում է փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայրի ստեղծումը: Այս առումով, հաշվի առնելով նախորդ փորձագիտական խմբի դիտարկումները, ՄՈՒՀ-ը մշակել է մի շարք իրավանորմատիվային փաստաթղթեր: Այսպես՝ 2020թ.-ին մշակվել են՝ «ՀՊՄՀ-ի դասախոսների և վարչական աշխատակիցների շարժունության իրականացման», «ՀՊՄՀ-ում սովորող ուսանողների և համալսարան ժամանող օտարերկրյա սովորողների ակադեմիական շարժունության իրականացման», «Դասախոսների և վարչական աշխատակիցների միջազգային դրամաշնորհային ծրագրերին մասնակցության կարգերը»:

Պետք է փաստել, որ ՀՊՄՀ-ն շոշափելի աշխատանքներ է իրականացնում միջազգայնացման ուղղությամբ, սակայն դեռևս չունի միջազգայնացման հստակեցված քաղաքականություն: Առկա չէ մինչ օրս իրականացված միջազգայնացման գործընթացների ազդեցության գնահատում:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

ՄՈՒՀ-ի աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորը համակարգում է «Միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոնի» աշխատանքները, որը ստեղծվել է 2023թ.-ին՝ ՄՈՒՀ-ի միջազգային համագործակցության բաժինը վերանվանման արդյունքում: ՀՊՄՀ-ն, վերանվանումը հիմնավորում է այն հանգամանքով, որ բաժինը իրականացնում և համակարգում էր ոչ միայն միջազգային, այլ նաև ազգային ծրագրեր (ԲԿԳԿ դրամաշնորհային ծրագրեր): Մինչ 2022թ. բաժինն ունեցել է 5 հաստիք, 2023թ.-ից սկսած հաստիքացուցակը փոխվել է, կենտրոնն ունի 6 հաստիք՝ կենտրոնի 1 ղեկավար, 1 ղեկավարի տեղակալ, 2 գլխավոր մասնագետ և 2 մասնագետ: Կենտրոնը գործում է համապատասխան կանոնադրությամբ, առկա են աշխատողների պաշտոնների անձնագրերը: Կենտրոնի հիմնական առաքելությունն է խթանել համալսարանի միջազգային համագործակցությունը և գործունեությունը, համակարգել և խթանել ՄՈՒՀ-ի մասնակցությունը միջազգային ծրագրերին և համագործակցությունը համապատասխան բնագավառում ճանաչված և առաջադեմ հաստատությունների հետ:

Փորձագիտական խմբի հանդիպումներից պարզ դարձավ, որ կենտրոնի աշխատակազմն աջակցում է ՄՈՒՀ-ի դասավանդողներին միջազգային պարբերականներում տպագրության հարցերում. տալիս է անհրաժեշտ խորհրդատվություն, աջակցում է օտար լեզվով հաղորդակցությանը, գիտական հոդվածների ներկայացման կանոնների պահպանմանը: Պարբերաբար իրականացնում է նաև ուսումնասիրություն՝ արտաքին աղբյուրների ֆինանսավորմամբ միջազգային ծրագրերի հնարավորությունների վերաբերյալ, տրամադրում համապատասխան տեղեկատվությունը ՄՈՒՀ-ի կառուցվածքային

ստորաբաժանումներին, աջակցում է ծրագրերին հայտերի ներկայացմանը և վերջնարդյուքնում նաև վերահսկում է իրականացման ընթացքը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոնի աշխատակազմը տիրապետում է միջազգային մակարդակում համագործակցություն իրականացնելու անհրաժեշտ գիտելքների և հաղորդակցման կարևոր հմտությունների, որի արդյունքում ապահովում է ՄՈՒՀ-ի հաղորդակցությունը օտարերկրյա գործընկերների հետ, կազմակերպում են համալսարանի միջազգայնացմանն ուղղված ծրագրերը, ինչպես նաև ընդլայնվում են համալսարանի համագործակցության սահմաններն ու աշխարհագրությունը:

2019թ.-ից սկսած կենտրոնը կազմակերպում է Էրազմուս+ և միջազգայնացման իրազեկման շաբաթ, որին հնարավորություն ունեն մասնակցելու և տեղեկատվություն ստանալու ՄՈՒՀ-ի բոլոր ֆակուլտետների առաջին և երկրորդ կուրսի ուսանողները, ինչպես նաև ՊԴ կազմը:

ՄՈՒՀ-ի միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոնը փաստում է իր գործունեության ընթացքում բացահայտած արտաքին և ներքին մարտահրավերներ: Որպես ներքին մարտահրավերներ են նշվում՝ ՊԴ կազմի ծրագրերի մշակման հմտությունների, մոտիվացիայի և փափուկ հմտությունների պակասը, ինչպես նաև սոցիալ-մշակութային մարտահրավերները:

Բացի այդ, հարկ է նշել, որ ՄՈՒՀ-ն իրականացնում է ապակենտրոնացված միջազգայնացման քաղաքականություն. ըստ այդմ՝ ՄՈՒՀ-ի տարբեր ֆակուլտետներում միջազգային գործունեության ակտիվացման նպատակով ներդրված է գիտության և միջազգային համագործակցության գծով դեկանի տեղակալի պաշտոնը: Սակայն, այդ ինստիտուտի գործունեության արդյունավետությունը գնահատված չէ:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

ՀՊՄՀ-ն համագործակցում է միջազգային հաստատությունների և կառույցների հետ: ՄՈՒՀ-ը հանդիսանում է Համալսարանների Եվրասիական Ասոցիացիայի, Եվրոպայի մանկավարժական համալսարանների ռեկտորների Ասոցիացիայի և Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության լիիրավ անդամ: Բացի այդ ՄՈՒՀ-ը համագործակցում է տարբեր միջազգային համալսարանների հետ՝ ներգրավված է մի շարք Էրազմուս+ ծրագրերում (ARMDOCT, KPI4HEI, DESIRE և այլն):

Նախորդ հավատարմագրումից հետո հաստատությունն ակտիվացրել է իր կապերը ինչպես տեղական, այնպես էլ միջազգային գործընկերների հետ: ՄՈՒՀ-ը թեև իր ինքնավերլուծության մեջ որպես թույլ կողմ է նշում անբավարար ֆինանսական միջոցները նոր արտաքին գործընկեր ներգրավելու համար, այնուամենայնիվ վերջին տարիներին ընդլայնել է համագործակցության եզրերը Ռուսաստանի, Շվեյցարիայի, Շվեդիայի, ԱՄՆ-ի, Սլովակիայի, Լեհաստանի, Իսպանիայի, Հունաստանի, Նիդեռլանդների, Ճապոնիայի, Վրաստանի բուհերի հետ:

ՄՈՒՀ-ը մեծ ջանքեր է գործադրում համագործակցային պայմանագրերի դրույթները իրականացնելու գործում: Աշխատանքներում հատուկ տեղ է հատկացվում օտարերկրյա մասնագետների կողմից դասախոսությունների անցկացման կարևորությանը:

ՄՈՒՀ-ի ինքնավերլուծության մեջ ներկայացված են մի շարք համագործակցությունների օրինակներ, որոնցում ներկայացված են ՀՊՄՀ ուսանողների և

դասախոսների մասնակցությամբ իրականացված աշխատանքները: 2021թ.-ին գեղարվեստական կրթության ֆակուլտետի թվով 9 ուսանող պրակտիկա են անցել Յուրիխի արվեստների համալսարանում: Նույն համագործակցության շրջանակներում Գեղարվեստական կրթության ֆակուլտետում իրենց երկշաբաթյա պրակտիկա են ացկացրել Շվեյցարիայի՝ Լյուցերնի, Բազելի և Յուրիխի արվեստի համալսարանների 7 ուսանող: Ծրագրին մասնակցել են նաև նույն համալսարանների 3 դասախոսներ:

2022 և 2023թ.-ին իրականացվել է «Հայկական դպրոցներում «Տեխնոլոգիա» և «Կերպարվեստ» առարկաների ուսուցիչների կարողությունների ամրապնդում» վերապատրաստման ծրագիրը՝ երկու փուլով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Կերպարվեստ» ՄԿԾ-ի ուսանողների շարժունության ծրագրին մասնակցության համար խոչընդոտ է հանդիսանում անգլերենին չտիրապետելը, քանի որ համալսարանում ընտրում են մեկ լեզու (առաջարկվող տարբերակներից մեկը), իսկ ուսանողներից շատերը նախընտրում են ուսուցանել ռուսերեն:

Համագործակցությունների արդյունքում ՄՈՒՀ-ի երկու դասախոս հնարավորություն են ստացել Իտալիայի Մաչերատայի համալսարանում 2 ամիս դասավանդել: ԱՄՆ դեսպանատան հետ համագործակցության շրջանակներում՝ «Ֆուլբրայթ» դրամաշնորհային ծրագրով ԱՄՆ համալսարանների 2 դասախոսներ դասավանդելու են համալսարանում մեկ տարի ժամկետով: Նիդեռլանդների Մաստրիխտի համալսարանի Հոգեբանության ֆակուլտետի ուսանողները և ՄՈՒՀ-ի կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանողները միասին իրականացրել են նախագծային աշխատանք, որի արդյունքները ամփոփվել են՝ կազմակերպելով միջոցառում Մաստրիխտի համալսարանի դասախոսների և ուսանողների մասնակցությամբ:

Չինական երկու բուհերի հետ համագործակցության արդյունքում ՄՈՒՀ-ում մեկնարկել է չինարենը՝ որպես երկրորդ օտար լեզու ներդնելու ծրագիրը:

2022թ.-ի հունիս ամսից ՄՈՒՀ-ը մեկնարկել է համագործակցություն ամերիկյան SRAS կազմակերպության հետ: Համագործակցության շրջանակներում՝ 2023թ. մայիսի 29-ից օգոստոսի 4-ը, շուրջ 22 ամերիկացի ուսանողներ ՄՈՒՀ-ի օտար լեզուների ֆակուլտետում մասնակցել են ռուսաց լեզվի դասընթացների:

«Ամառային դպրոց» ծրագիրը համավարակի սահմանափակումներով պայմանավորված դադարեցվել է, ՄՈՒՀ-ն այն վերսկսվել է 2023թ.-ին, որին մասնակցել են Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական և Ստավրոպոլի հյուսիսկովկասյան դաշնային համալսարաններից 13 մասնակիցներ, իսկ ՄՈՒՀ-ից 20 ուսանող փոխադարձ այցով մեկնել են համապատասխան համալսարաններ:

ՀՊՄՀ-ում ուսանողների և դասախոսների շարժունությունը հիմնականում ապահովում է Էրազմուս Պրոյուս ծրագրի շրջանակում: ՄՈՒՀ-ը փաստում է, որ վերջին չորս տարիների (2019-2023թթ.) ընթացքում շարժունության մեջ է ներգրավվել 242 ուսանող և 204 պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմ:

ՄՈՒՀ-ում սովորում են 164 օտարերկրյա ուսանող՝ այդ թվում կարճաժամկետ ծրագրով, լեզվի ուուցման դասընթացներում: ՄՈՒՀ-ը մշակել է անգլերենով մագիստրոսական ծրագիր, Բուդապեշտի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի հետ համատեղ: Հարկ է նշել, որ ՄՈՒՀ-ն ակտիվ համագործակցության մեջ է նաև տեղական հաստատությունների և կառույցների հետ: Համագործակցությունը սերտ է հատկապես պրակտիկաների իրականացման տեսանկյունից: Փորձագիտական այցից պարզ

դարձավ, որ բացի պրակտիկաներից նաև ընթացիկ գործնական պարապմունքների շրջանակներում, օրինակ հոգեբանության, կենսաբանության և այլ մասնագիտությունների հետազոտություններն իրականացվում են տեղական ինստիտուտներում և կենտրոններում:

ՄՈՒՀ-ի միջազգայնացման տեսանկյունից կարևոր դերկատարություն ունի նաև «Միյուոք» գիտատնտեսական կենտրոնը, որը զբաղվում է արևմտահայերենի պահպանմամբ, սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման աշխատանքներով:

Փորձագիտական ուսումնասիրությունների ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը մեծապես կարևորում է միջազգայնացումը՝ թե՛ շարժունության ապահովման, թե՛ փորձի փոխանակման և թե՛ հետազոտության միջազգայնացման առումով: Արտաքին կապերը և համագործակցությունը նպաստում են նաև ֆինանսական միջոցների դիվերսիֆիկացիային՝ մասնավորապես դրամաշնորհներ, օտարերկրացի ուսանողների համար նախապատրաստական դասընթացներ և այլն, որը ներկա փուլում որոշակի մասնաբաժին է կազմում ՄՈՒՀ-ի բյուջեում:

Պետք է նկատել, որ թեև իրականացվող բազմաթիվ աշխատանքներին՝ չի գնահատվում համագործակցությունների արդյունավետությունը և ազդեցությունը ՄՈՒՀ-ի գործունեության զարգացման վրա:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

ՄՈՒՀ-ը կարևորում է օտար լեզվի իմացության մակարդակի շարունակական բարձրացումը ներքին շահակիցների շրջանում: Ըստ այդմ՝ բոլոր ՄԿԾ-ներում ներառված են օտար լեզվի դասընթացներ՝ ռուսաց լեզու, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները ընտրում են առաջարկվող լեզուներից մեկը: Հարկ է փաստել, որ ուսանողներին ներկայացվում են ակադեմիական շարժունության հնարավորությունները և այդ տեսանկյունից լեզվաիմացության կարևորությունը: ՄՈՒՀ-ը, 2021թ.-ից օտար լեզվի դասընթացներ է կազմակերպում նաև ՊԴ կազմի և վարչական աշխատակիցների համար՝ նպատակ ունենալով խթանել վերջիններիս մասնակցությունը՝ միջազգային կրթական և հետազոտական ծրագրերում: 2012-2022 ուստարում 35 աշխատակից մասնակցել է անգլերենի Ա2 և Բ1 մակարդակների դասընթացներին:

Այսուհանդերձ, ՄՈՒՀ-ը դեռևս լիովին չի գնահատել ՊԴ կազմի լեզվաիմացության մակարդակը: Միևնույն ժամանակ, ՀՊՄՀ-ն իր SWOT վերլուծության մեջ նշում է, որ ներքին շահակիցների լեզվական գիտելիքների գնահատման հստակ կառուցակարգերի բացակայությունը դժվարացնում է վերջիններիս միջազգայնացման ծրագրերում ներգրավվածությունը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ համալսարանի միջազգայնացման գործընթացներն ամրագրված են ԶՌԾ-ում և հանդիսանում են կրթական և հետազոտական գործունեության իրականացման բաղկացուցիչ մաս: Մասնավորապես, նախորդ հավատարմագրումից հետո ՀՊՄՀ-ն կանոնակարգել է ոլորտի աշխատանքները՝ մշակելով մի շարք ընթացակարգեր, որոնց հաջող իրականացումը կարող է նպաստել առավել թիրախավորված աշխատանքին: Փորձագիտական խումբը նաև արձանագրում է, որ միջազգայնացման աշխատանքներում տարբեր ձևերով ընդգրկված են ՄՈՒՀ-ի գրեթե բոլոր ստորաբաժանումները, ֆակուլտետները և ամբիոնները, ինչը նպաստավոր միջավայր է ստեղծում միջազգայնացման գործընթացների խթանման և զարգացման համար: Հարկ է նշել,

որ այս միտումները խոստումնալից են բուհի համար: Փորձագիտական խումբը կարևոր քայլ է համարում, որ ՄՈՒՀ-ը գնահատի կատարված աշխատանքների արդյունավետությունը և մշակի միջազգայնացման քաղաքականությունը, որը կնպաստի ոլորտի կայուն զարգացմանը և կներառի բոլոր դերակատարներին, հստակ կնախանջի կատարվելիք արդյունքները և դրանց ԳԱՑ-երը:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն հանգամանքը, որ միջազգայնացման գործընթացները ընդգրկում են ՄՈՒՀ-ի գործունեության բոլոր ուղղությունները: Դրական է նաև, որ գործընթացների համակարգման համար բուհը տրամադրում է համապատասխան մարդկային ռեսուրսներ, ինչը նպաստել է միջազգայնացման ուղղությամբ իրականացվող աշխատանքների գործառութային շրջանակի կանոնակարգմանը: Հատկանշական է, որ միևնույն ժամանակ ՄՈՒՀ-ի միջազգայնացման գործընթացները ապակենտրոնացված են. բոլոր ֆակուլտետները ներգրավված են միջազգայնացման գործընթացների իրականացմանը, տարբեր ստորաբաժանումներ իրենց աշխատանքների շրջանակներում նպաստում են միջազգայնացման գործընթացների զարգացմանը: Հստակ տեսանելի է ՄՈՒՀ-ի միջազգայնացման վեկտորը նաև գիտահետազոտական գործունեության մեջ, որի շարունակական զարգացումը ռազմավարական նշանակություն ունի ՄՈՒՀ-ի համար: Արտաքին կապերի ընդլայնումը և համագործակցության շարունակական զարգացումը կարող են դրական ազդեցություն ունենալ նաև այլընտրանքային ֆինանսական միջոցների ներգրավման համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում արտաքին կապերի հաստատմանն ուղղված բազմաբնույթ և բազմավեկտոր աշխատանքների իրականացումը՝ գործընկերային համագործակցությունը, որոնք նպաստում են տարբեր մակարդակներում բուհի վարկանիշի և ճանաչելիության բարձրացմանը: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը ընդգծում է միջազգայնացման տեսանկյունից կարևոր ենթակառուցվածքների առկայությունը, այդ թվում հատկանշական է «Մփյուռք» գիտաուսումնական կենտրոնի, «Շախմատ» ԳՀԻ գործունեությունը: Փորձագիտական խումբը կարևորում է ներքին շահակիցների շրջանում դրական փորձի տարածումը և մասնակիցների շրջանակների ընդլայնումը, հաշվի առնելով արտերկրի գործընկերների հետ լայն կապերի առակայությունը, ՄՈՒՀ-ը պետք է ներդնի գործընթացների համակարգման մեխանիզմներ՝ տարանջատելով և հստակեցնելով պատասխանատվության շրջանակները:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ ՄՈՒՀ-ը գնահատման գործիքակազմ կիրառի արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացների, մասնավորապես գնահատելու ուժեղ և թույլ կողմերը, արդյունավետ և ոչ արդյունավետ համագործակցությունները, ապակենտրոնացված աշխատանքի և համակարգված կառավարման միջև անհրաժեշտ հավասարակշռություն հաստատելու համար: Արտաքին համագործակցության արդյունավետության գնահատումը, թույլ կտա ամրապնդել և խորացնել կապերը հաշվի առնելով դրանց հեռանկարայնությունը:

Փորձագիտական խումբը դրական է համարում ՄՈՒՀ-ի կողմից իրականացվող օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքները: Կարևոր է, որ ՄՈՒՀ-ը ներդնում է համապատասխան ջանքեր ուսանողների անգլերենի լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ ապահովելու համար, աշխատանքներ են իրականացվում նաև ՊԴ կազմի լեզվաիմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ, այնուհանդերձ, պետք է նկատել, որ գործընթացները հատվածական են և ընդգրկում են փոքր թվով մասնակիցների:

Լեզվահամացության խոչընդոտը կարող է նվազեցնել ներքին շահակիցների հետաքրքրվածությունը միջազգայանացմանը նպաստող գործընթացներով, այս տեսանկյունից կարևոր է գործուն մեխանիզմների ներդրումը՝ ընդլայնելով շահակիցների ներգրավվածությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ի արտաքին կապերի ընդլայնումը և միջազգայանացմանն ուղղված գործընթացները հանդիսանում են ռազմավարական պլանավորման բաղակցուցիչ մաս, միջազգայանացման գործընթացները գտնվում են ինստիտուցիոնալ հիմքերի վրա և ապահովում են ՄՈՒՀ-ի զարգացումը, ընդլայնվել են գործընկերային կապերը, ինչպես տեղական, այնպես էլ միջազգային կազմակերպությունների հետ՝ նպաստելով գիտության, հետազոտության և կրթության միջազգայանացմանը, ակադեմիական շարժունությանը, առաջավոր փորձի ուսումնասիրությանը և տեղայնացմանը, ՊԴ կազմի կոմպետենցիաների զարգացմանը, ՄՈՒՀ-ը որոշակիորեն նպաստում է ուսանողների և դասախոսների օտար լեզվի իմացության մակարդակի բարելավմանը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՀՊՄՀ-ն բավարարում է չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՊՄՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է բավարար:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ԶԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՄՈՒՀ-ի կրթության որակի բարձրացմանը նպաստակա ուղղված գործողությունները ներկայացված են Ռազմավարական ծրագրի 2020-2025թթ ուղղություն 10-ում՝ «Կրթության որակի ապահովում» բաժնի ներքո: ՄՈՒՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրում և նրա գործողությունների պլանում որակի ապահովման խնդիրների իրագործման համար սահմանվել են նպատակներ, որոնք նախատեսում են ՈԱ մեխանիզմների և ընթացակարգերի ընդլայնում, ուսանողների գնահատման համակարգի արժանահավատության բարձրացում, ՈԱ գործընթացների թափանցիկության և հրապարակայնության ապահովում, ներքին և արտաքին շահակիցների մասնակցության գործիքակազմի ապահովում և հետադարձ կապի մեխանիզմների սահմանում:

2022 թվականին վերանայվել է որակի ապահովման քաղաքականությունը, նախորդ փաստաթուղթն ընդունվել էր 2012թ.-ին: Տվյալ փաստաթղթում սահմանված են ՀՊՄՀ-ի որակի ապահովման հիմնական տիրույթները, ՈԱ համակարգի կազմակերպական կառուցվածքը, գործող մեխանիզմները և ընթացակարգերը, ներգրավված հիմնական կառույցները և դերակատարները:

Որակի ապահովման քաղաքականությունը և որակի ներքին ապահովման համակարգը ներառում են երեք գործընթաց՝ «կրթություն, հետազոտություն և հանրության ներգրավում»: ՀՊՄՀ-ում որակի ապահովման առավել զարգացած մեխանիզմներից է բոլոր ստորաբաժանումներում իրականացվող ինքնագնահատումը, և այդ գործընթացի արդյունքները ներառված են տարեկան հաշվետվություններում: Որակի մշակույթի

զարգացման խնդիրը փաստացի բացակայում է առկա փաստաթղթերում: Որակի ապահովման քաղաքականության նպատակները, խնդիրները շատ տեղերում հասկանալի չեն: Օրինակ՝ «հիմնել ՈԱ պաշտոնական, թափանցիկ և հուսալի համակարգ»: ՈԱ քաղաքականության կատարման որոշ ցուցանիշների կապը որակի մշակույթի զարգացման հետ նույնպես հասկանալի չէ, մասնավորապես՝ «պաշտպանված դոկտորական թեզերի քանակ, «որակի ապահովման և կառավարման վերանայված գործիքների առկայությունը, հարցաթերթիկներ»:

ՈԱ քաղաքականության իրականացումը հիմնականում կենտրոնանում է կրթական գործընթացի վրա: Չկան հետազոտության որակի ներքին գնահատման ընթացակարգեր, իրականացված միջազգայնացման գործընթացների որակի գնահատում և այլն: Ընդունված ոչ բոլոր ընթացակարգերն են կիրառվում, իսկ մյուսներն օգտագործվում են ժամանակ առ ժամանակ: ՄՈՒՀ-ի Որակի ապահովման համակարգում ներառված մի շարք մեխանիզմներ՝ ՄԿԾ-ների գնահատումը դասախոսների կողմից, ՄԿԾ-ների արտաքին գնահատումը, ուսանողի առաջընթացի ուսումնասիրումը, ուսանողի ծանրաբեռնվածությունը, ուսանողի գիտելիքի գնահատման մշտադիտարկումը, ՊԴ կազմի կատարողականի մշտադիտարկումը, ՊԴ, վարչական ու ուսումնասօժանդակ կազմերի համար կարիքների գնահատումը դեռևս չեն իրականացվում:

ՄՈՒՀ-ի տարբեր ստորաբաժանումների կողմից նույնպես իրականացվում են գործընթացների գնահատման և դրանցից բավարարվածության հարցումներ, սակայն որքանով են այդ գնահատման արդյուքները նպաստում որակի ապահովման ինստիտուցիոնալ գործընթացներին, տեսանելի չէ, նաև ՈԱԲ-ը չի գնահատել կիրառվող հարցաշարերի նպատակայնությունը և արդյունավետությունը, այս տեսանկյունից բացակայում է ՈԱԲ-ի և ստորաբաժանումների միջև համագործակցությունը:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՀՊՄՀ-ում 2012թ.-ից հիմնվել է Կրթության որակի ապահովման և կառավարման բաժին (ՈԱԲ)՝ 3 հաստիքով: ՈԱ բաժնի կանոնադրությունը հաստատվել է 2018թ.-ին: Բաժնի գործունեությունը համակարգում է Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությունը, որը ենթակա է ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտորին: Սահմանված են պաշտոնի անձնագրերը, որտեղ ձևակերպված են բաժնի աշխատակիցների գործառույթները:

Փորձագիտական այցի ընթացքում հաստատվեց այն փաստը, որ ՈԱԲ-ի գործունեությունը միջնորդավորված է, բացակայում է ռեկտոր-ՈԱԲ ուղիղ կապը:

Ինչպես նշված է ինքնավերլուծության մեջ, չնայած ՈԱ գործընթացները կանոնակարգվում են կենտրոնացված եղանակով, այնուամենայնիվ, ստորաբաժանումներում իրականացվում են ապակենտրոնացված ձևով՝ ֆակուլտետներում, ամբիոններում նշանակված են որակի ֆակուլտետային, ամբիոնային պատասխանատուներ: 2023 թ.-ից սկսած ռեկտորի հրամանով որակի ներքին ապահովման ամբիոնային պատասխանատուների աշխատանքային բեռնվածության մեջ ներառվել է տարեկան 30 ժամ, իսկ ֆակուլտետային պատասխանատուներին՝ 60 ժամ: ՈԱ բաժինն իրականացնում է տարեկան պլանավորում: Բաժնի հաշվետվությունը ներկայացնում է Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությունը: Պետք է նշել, որ

ամբիոնային և ֆակուլտետային ՈԱ պատասխանատուների աշխատանքի արդյունավետության գնահատում չի կատարվել:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈԱԲ աշխատակազմը վերջերս է հավաքագրվել, որոշակի վերապատրաստումներ աշխատակազմն անցել է՝ կազմակերպված ՈԱԱԿ-ի կողմից: Սակայն աշխատակիցները չունեն փորձառություն ՈՆԱ կառավարման ոլորտում:

ՄՈՒՀ-ի ՈԱ բաժնին հատկացված է աշխատասենյակ անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներով և գույքով: Նյութական և ֆինանսական ռեսուրսների տրամադրումն իրականացվում է կենտրոնացված ձևով՝ ըստ անհրաժեշտության: Ըստ ՌԾ-ի հնգամյա պլանի՝ առանձին բյուջե է տրամադրվել Որակի գործընթացների իրականացմանը: Սակայն բյուջեի տարեկան նախահաշվում Որակի ապահովման գործընթացների համար ծախսեր նախատեսված չեն:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

2022թ.-ին հաստատվել է ՄՈՒՀ-ի «ՀՊՄՀ-ում արտաքին և ներքին շահակիցների ներգրավում և կարիքների գնահատում» կարգը, ըստ որի, համալսարանի շահակից կողմերը ներգրավված են որակի ապահովման գործընթացներում, մասնավորապես, համալսարանի կառավարման խորհուրդներում որպես պաշտոնական մասնակիցներ (ձայնի իրավունքով), մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման, մշտադիտարկման և վերանայման գործընթացներում, համալսարանի ինքնագնահատման և այլ գնահատման գործընթացներում, հարցումների անցկացման գործընթացում կանոնավոր հիմունքներով: Ինչպես հանդիպումներից պարզվեց, չնայած կարգի առկայությանը՝ թույլ է շահակիցների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում: Հատկապես արտաքին շահակիցները պասիվ են: Որակի ապահովման գործընթացներում ներքին շահակիցների ներգրավվածությունը համալսարանը փորձում է ապահովել հիմնականում հանձնախմբերում ներգրավելով կամ հարցումներ անցկացնելով: Սակայն հանդիպումներից պարզվեց, որ ոչ միշտ են ուսանողներն ու դասախոսները ակտիվ մասնակցություն ունենում: Հարկ է նշել, որ միայն պրակտիկայի վերաբերյալ հետադարձ կապ է ապահովվել պրակտիկայի բաժնի ջանքերի շնորհիվ:

Հարցաշարերի դիտարկումը ցույց տվեց, որ երբեմն հարցերը պահանջում են որակական գնահատականներ, որոնք պահանջում են նախանական գիտելիքներ այդ որակների վերաբերյալ, օրինակ՝ «խնդրում ենք գնահատել դասախոսի կողմից ուսանողների տված հարցերի պատասխանների որակը», ըստ էության ուսանողը չի կարող գնահատել պատասխանի որակը (0-5 բալային սանդղակով), այլ կարող է նշել, որքանով է իրեն բավարարել տրված հարցին դասախոսի պատասխանը: Կան հարցեր, որոնց պատասխանը բավականին ծավալուն է և չի կարող գնահատվել 0-5 բալային սանդղակով, օրինակ՝ «Խնդրում ենք գնահատել, թե դասընթացի վերջնարդյունքն որքանով է ապահովում Ձեր ներգրավվածությանը հետագա գիտահետազոտական գործունեությանը», փաստացի այս հարցադրումը նաև տեղին չէ ընդգրկել բոլոր դասընթացները գնահատելու համար: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը արդեն իսկ դիտարկում է հարցաշարերի արդյունավետության խնդիրը և նախատեսում է հարցաշարերի մշակման փուլում ներգրավել սոցիոլոգի դրանց որակական կողմը բարելավելու համար: Հարկ է նշել, որ ՄՈՒՀ-ում կազմակերպվող հարցման արդյունքները հիմնականում ենթարկվում են

քանակական վերլուծության, սակայն տեսանելի չէ կատարված եզրակացությունները և արդյունքների մեկնաբանությունները:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ արտաքին և ներքին շահակիցների ներգրավման գործող մեխանիզմները արդյունավետության գնահատում չեն անցել:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

ՀՊՄՀ-ի ՈԱ բաժինը կարևորում է որակի շարունակական բարելավումը՝ որպես իր քաղաքականության կարևորագույն սկզբունք: Սակայն ՄՈԻՀ-ում դեռևս չկան որակի ներքին ապահովման համակարգի վերանայման մեխանիզմներ և գործիքներ: Չնայած ՈԱ քաղաքականությունը 2022թ.-ին է վերանայվել՝ ՄՈԻՀ-ը որակի ապահովման քաղաքականության վերանայման անհրաժեշտություն է տեսնում:

ՄՈԻՀ-ը որպես որակի ներքին ապահովման համակարգի վերանայման հիմնական մեխանիզմ նշում է նախորդ հավատարմագրումների փորձագիտական զեկույցների հիման վրա ստեղծված բարելավման պլանները:

Սակայն հարկ է նշել, որ համակարգի վերանայում, կարելի է ասել, դեռևս չի իրականացվել՝ չնայած նրան, որ նախորդ հավատարմագրման խորհրդատվություններում առաջարկվում էր ստեղծել գործընթացների արդյունավետության ներքին գնահատման միասնական համակարգ, որը կամբողջացնի ՈԱ բոլոր մեխանիզմներն ու ընթացակարգերը՝ դրանք դարձնելով ավելի նպատակային:

ՈԱ գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլը որոշ գործընթացներում (ՄԿԾ-ների վերանայում, կանոնակորգող փաստաթղթերի բարելավում) բարելավման փուլում է: Իսկ վերջերս ներդրված փաստաթղթերի և գործընթացների արդյունավետությունը դժվար է գնահատել, քանի որ դրանք ներդրվել են վերջին երկու տարվա ընթացքում:

Արդյունքների վրա հիմնված հիմնավոր վերլուծություններ չկան: Որոշ գործընթացներում նկատելի է, որ իրականացվող գնահատումներին չեն հաջորդում բարելավման գործընթացների պլանավորումն ու իրականացումը:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

ՀՊՄՀ-ի համար ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների ինքնավերլուծության իրականացման 3-րդ փորձն է, որտեղ շեշտադրվում է ֆակուլտետներում և ամբիոններում ներդրված ինքնագնահատման մեխանիզմը որպես ձեռքբերում:

Ինքնավերլուծության իրականացման համար ձևավորվել է աշխատանքային խումբ, որը ներառել է ինչպես վարչական, այնպես էլ դասախոսական և ուսանողական համակազմերը:

Բուհը, ֆակուլտետներում և ամբիոններում կատարված ինքնագնահատումների արդյունքները ներառելով և մասնակցային քննարկումներ իրականացնելով, փորձել է կատարել ինքնավերլուծությունը:

Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ֆակուլտետների, ամբիոնների և ստորաբաժանումների հաշվետվություններում առկա էին որակական և քանակական տվյալներ, որոնք չեն կիրառվել ԻՎ իրականացման ժամանակ:

Ինքնավերլուծությունն ավելի հաճախ պարունակում էր նկարագրական, այլ ոչ արդյունքային տեղեկատվություն, որոշ դեպքերում նաև խզված էր չափորոշիչների և տեղեկատվության կապը:

Տվյալների հավաքագրման համար հիմնականում կիրառվել են իրականացվող հարցումները, որոնք ինչպես պարզվեց փորձագիտական այցի ընթացքում պարբերական չեն, իրականացվում են տարբեր ստորաբաժանումների կողմից և միասնական վերլուծության չեն ենթարկվում: Գործիքակազմերի հուսալիությունն ու արդյունավետությունը դեռևս գնահատված չեն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տվյալների հավաքագրում-վերլուծություն-դրանց հիման վրա որոշումների կայացում և գործընթացների բարելավում շղթան հատվածական է աշխատում:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

ՄՈՒՀ-ն իր ՌԾ-ի ուղղություն 10-ի նպատակ 2-ի քայլերում սահմանում է Ապահովել որակի ապահովման գործընթացների վերաբերյալ թափանցիկություն ու հրապարակայնություն: Ըստ ինքնավերլուծության՝ համալսարանի գործունեության թափանցիկությունը բարձրացնելու նպատակով ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքում հրապարակում են կանոնադրություններ, հայեցակարգեր, ընթացակարգեր, ռեկտորի ամենամյա հաշվետվություններ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ շահակիցները հիմնականում տեղյակ չեն հարցումների վերլուծություններից: Դասախոսներն՝ ուսանողների կողմից դասախոսների գնահատման արդյունքներին տեղեկացված են. դրանք տրամադրվում են ամբիոններին:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրման խորհրդատվությունները հաշվի առնելով՝ ՀՊՄՀ-ն բարելավել է ՈԱ համակարգը կարգավորող փաստաթղթային հենքը՝ ՈԱ քաղաքականությունն ու ընթացակարգերը: Դրական է, որ սահմանված են ՈԱ զարգացման ուղղությունները ՀՊՄՀ ՌԾ-ում: Մինչույն ժամանակ, փորձագիտական խումբը նշում է, որ ոչ ռազմավարության դրույթները, ոչ էլ ՈԱ ուղեցույցները հստակ պատկերացում չեն տալիս՝ որ ուղղությամբ պետք է զարգանա որակի ապահովման համակարգը, ինչ խնդիր պետք է լուծի և ինչպես, և որ ուղղություններով տվյալներ պետք է հավաքագրի:

Հետադարձ կապի համակարգը թույլ է զարգացած: Արդյունքում, սահմանափակ հնարավորություններ է տրվում հիմնական գործընթացների որակի բարելավման համար՝ համաձայն ՊԻԳԲ շրջափուլի: Մյուս թույլ կողմը լավ փորձի տարածման բացակայությունն է, օրինակ՝ ուսուցման ոլորտում: ՈԱ քաղաքականությունը նկարագրական բնույթ ունի, այն մտադրությունների և պաշտոնական հայտարարությունների ամբողջություն է, այլ ոչ թե որակի ներքին ապահովման համակարգի հստակ ներկայացում: Այն ցույց չի տալիս գործընթացների փոխկապակցվածությունը, ինչը կարող է խոչընդոտել բուհի ռազմավարական հանդիսացող ուղղությունների վերաբերյալ տվյալների հավաքագրումն ու տրամադրումը կառավարչական որոշումների կայացման համար:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ բուհը ուշադրություն դարձնի որակի ապահովման փաստաթղթային հենքի բարելավմանը՝ ներառելով որակի մշակույթի զարգացման մեխանիզմների արտացոլումը: Որակի ապահովման համապարփակ

քաղաքականությունը, որն ընդգրկում է կրթությունը, հետազոտությունը, հասարակական պատասխանատվությունը և կառավարումը, բուհին հնարավորություն կտա հասնելու կատարողականի և հաշվետվողականության բարձր մակարդակի՝ ապահովելով ՀՊՄՀ երկարաժամկետ հաջողությունները:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ որակի ապահովման գործընթացների կառավարման և իրականացման համար ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային ռեսուրսներ՝ ունենալով նաև ֆակուլտետային, ամբիոնային պատասխանատուներ: ՀՊՄՀ-ի կրթության որակի ապահովման և կառավարման կենտրոնի կազմակերպական դիրքը, լինելով ռեկտորից երկու աստիճան ցածր, ենթադրում է անկախության սահմանափակ մակարդակ: Որպեսզի հաշվի առնվեն բարելավումների վերաբերյալ ցանկացած առաջարկ, կենտրոնը պետք է դրանք անցնի հիերարխիկ շղթայի միջով՝ սկզբում կրթության կառավարման և բարեփոխումների վարչության ղեկավարին, այնուհետև՝ պրոռեկտորին և ի վերջո՝ ռեկտորին: Ներկայումս կենտրոնը կանգնած է մարտահրավերների առաջ՝ կապված որակի ապահովման ոլորտում փորձառություն ունեցող անձնակազմով համալրման հետ: Կարևոր է, որ կենտրոնը հստակ պլանավորի որակի ապահովման տարեկան միջոցառումները՝ ապահովելով բոլոր ոլորտներում տվյալների հավաքագրումն ու դրանց վերլուծությանը, որն էլ կառավարման բարձր օղակների համար որոշումների կայացման հիմքեր կապահովի:

Դրական է, որ նախորդ հավատարմագրման արդյունքներից ելնելով՝ բուհի բոլոր ֆակուլտետներում և ամբիոններում ներդրվել է ինքնագնահատման մշակույթը, որի շարունակական իրականացումը կնպաստի այս մշակույթի ներդրմանը և տվյալների հավաքագրմանը: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ բուհը դիտարկի տվյալների հավաքագրման և վերլուծության միասնական համակարգի ներդրումը: Տարբեր բաժինների տվյալների ինտեգրումը թույլ կտա առավել արդյունավետ գործողություններ իրականացնել, օրինակ պարզեցնել վարչական գործընթացները կամ ապահովել ռեսուրսների բաշխումը այնտեղ, որտեղ դրանք առավել անհրաժեշտ են և այլն, իսկ ամբիոններն ու ֆակուլտետները բացահայտեն առկա լավ փորձերը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ բացի ՈԱԲ-ը բուհի տարբեր ստորաբաժանումները կազմակերպում են անկախ հարցումներ, որը ամրապնդում է ինքնագնահատման մշակույթը: Մյուս կողմից կարևոր է, ինչպես ստորաբաժանումների այնպես էլ ՈԱԲ հարցարանների շարունակական բարելավման անհրաժեշտությունը և դրանց արդյունավետության գնահատման մեխանիզմների կիրառությունը: Կարևոր է նաև, որ հարցումների համար կիրառվող հարցաշարերը անցնեն համապատասխան փորձաքննություն, իսկ ստորաբաժանումները համագործակցեն ՈԱԲ-ի հետ, վերոնշյալը կնպաստի տվյալների հավաքագրման միասնական համակարգի կայացմանը:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ բուհը դիտարկի տվյալների հավաքագրման մեխանիզմների բազմազանեցումը, որը կներառի ինչպես ներքին շահակիցներին, այնպես էլ արտաքին, մասնավորապես՝ շրջանավարտներին որակի ապահովման գործընթացներում, որը կնպաստի տարբեր գործընթացների շարունակական բարելավմանը և կամրապնդի որակի մշակույթը: Կարևոր է, որ իրականացվող ՈԱ գործընթացների արդյունքները քննարկվեն շահակիցների շրջանում և հիմք հանդիսանան բարելավումների համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ որակի ապահովման գործընթացները մասնատված են և կրում են ոչ համակարգային բնույթ, տվյալների հավաքագրումը չի ներառում բուհում


իրականացվող բոլոր գործընթացները, որակի մշակույթը դեռևս ձևավորման փուլում է, ինչպես նաև ՈԱ բաժնի դիրքը կազմակերպական կառուցվածքում խանգարում է բաժնի ինքնավարությանը, արտաքին շահակիցները դեռևս ակտիվ չեն որակի ապահովման գործընթացներում, ՈԱ քաղաքականությունն ու ընթացակարգերը առավել նկարագրական են, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀՊՄՀ-ն չի բավարարում չափանիշ 10-ի պահանջները:

Եզրակացություն: ՀՊՄՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

<i>ՉԱՓԱՆԻՇ</i>	<i>ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ</i>
<i>1. Առաքելություն և նպատակներ</i>	Բավարարում է
<i>2. Կառավարում ու վարչարարություն</i>	Բավարարում է
<i>3. Մասնագիտության կրթական ծրագրեր</i>	Բավարարում է
<i>4. Ուսանողներ</i>	Բավարարում է
<i>5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ</i>	Բավարարում է
<i>6. Հետազոտություն և զարգացում</i>	Բավարարում է
<i>7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ</i>	Բավարարում է
<i>8. Հասարակական պատասխանատվություն</i>	Բավարարում է
<i>9. Արտաքին կապեր և միջազգայնացում</i>	Բավարարում է
<i>10. Որակի ներքին ապահովման համակարգ</i>	Չի բավարարում

Ամսաթիվ՝ 27.03.2024



Հերմինե Գրիգորյան, փորձագիտական խմբի ղեկավար

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Հերմինե Գրիգորյան` 1992թ.-ին ավարտել է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու է (2008), դոցենտ (2011): 1992 թվականից դասավանդում է Վանաձորի պետական համալսարանում (ՎՊՀ): Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի Բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, «Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, փորձագիտական խմբի դեկավար: Վարում է «Մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումներ», «Դիֆերենցիալ հավասարումներ», «Կոմպլեքս անալիզ», «Մեկ փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ և ինտեգրալ հաշիվ», «Շատ փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ և ինտեգրալ հաշիվ», «Ֆինանսական մաթեմատիկա» դասընթացները: Զբաղվում է փոփոխական հաստության անիզոտրոպ սալերի եզրային խնդիրների հարցերով:

Միսչեսլավ Սոխա` 1969 թ.-ին ավարտել է Լոդզի (Լեհաստանի) համալսարանը՝ ստանալով տնտեսագիտության մագիստրոսի աստիճան: 2000 թ.-ին Վարշավայի համալսարանում ստացել է գիտությունների դոկտորի աստիճան: Ներկայումս դասախոսում է Վարշավայի համալսարանում, Լեռնի Կոզմինսկիի ակադեմիայում, Հյուսիսային պետական համալսարանում, Եվրոպական քոլեջում, Պետական կառավարման դպրոցում: 2014թ.-ից Լեհական հավատարմագրման կոմիտեի խորհրդատվական խորհրդի անդամ է, իսկ 2017թ.-ից՝ Հունգարիայի հավատարմագրման կոմիտեի Միջազգային խորհրդատվական խորհրդի անդամ: 2002 թ.-ից Բարձրագույն կրթության լեհական հավատարմագրման հանձնաժողովի փորձագետ է, իսկ 2014 թ.-ից՝ Բարձրագույն կրթության հավատարմագրման Եվրոպական Կոնսորցիումի ֆինանսական կոմիտեի անդամ: Մասնակցել է բազմաթիվ 90 գիտահետազոտական ծրագրերի, ազգային և միջազգային դասընթացների և գիտաժողովների: Հեղինակ և համահեղինակ է ավելի քան 120 գիտական աշխատանքների և ավելի քան 40 գիտաժողովների զեկույցների, որոնք հրատարակվել են տեղի և արտասահմանյան մի շարք ամսագրերում:

Ասյա Միմոնյան` 2013թ. ավարտել է Գյումրու պետական մանկավարժական համալսարանի (ԳՊՄԻ) «ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մագիստրոսական ծրագիրը: 2013-2017թթ. եղել է ԳՊՄԻ «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (ֆիզիկական կուլտուրա)» մասնագիտությամբ ասպիրանտ: Մանկավարժական գիտությունների թեկնածու է: 2017թ. մինչ օրս Շիրակի պետական համալսարանի Սպորտի և արվեստի ամբիոնի ասիստենտ է: 2007թ.-ից մինչ օրս Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոցում գեղարվեստական մարմնարգության մարզիչ-մանկավարժ է: 2017- 2021թթ., և 2021-2024թթ. Օլիմպիական ցիկլերի գեղարվեստական մարմնամարզության անհատական և խմբակային ձևերի միջազգային կարգի մրցավար է: ՀՀ մարմնամարզության ֆեդերացիայի գեղարվեստական մարմնամարզության մրցավարական խորհրդի անդամ է: ՀՀ գեղարվեստական մարմնամարզության սպորտի վարպետ է: Մասնակցել է մի շարք մասնագիտաան վերապատրաստումների: 11 գիտական հոդվածների հեղինակ է:

Ամալյա Գրիգորյան՝ 2008 թվականին ավարտել է Արցախի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: 2011 թվականին ավարտել է նույն բուհի ասպիրանտուրան: 2015թ. ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, ապա 2019թ.՝ դոցենտի կոչում: 2008թ.-ից աշխատել է Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանում՝ որպես հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս: 2015-2022 թվականներին եղել է նաև ԱԳՄ նախագահի օգնական: 2018-2023թթ. եղել է «Գրիգոր Նարեկացի» համալսարանում գործող Արեւմտահայերէնի, հայագիտութեան գիտահետազոտական Լուսովիկա եւ Յակոբ Այնթապլեան կենտրոնի տնօրէն: 2019 -2023թթ. աշխատել է «Գրիգոր Նարեկացի» համալսարանում՝ որպես Որակի ապահովման կենտրոնի տնօրէն: Հեղինակ է մի շարք գրականագիտական գրքերի ու գիտամեթոդական աշխատությունների:

Շուշան Դավեյան՝ Երևանի պետական համալսարանի Հանրային կառավարում բաժնի 4-րդ կուրսի ուսանող է: 2021թ.-ին մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող փորձագետների պատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

	11.12.2023թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ՀՊՄՀ ռեկտորի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում ֆակուլտետի ղեկանների հետ	10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի հետ	11:50	12:40	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:50	13:50	60 րոպե
5.	Հանդիպում շրջանավարտների հետ	14:00	15:00	60 րոպե
6.	Հանդիպում գործատուների հետ	15:10	16:10	60 րոպե
7.	Հանդիպում ՀՊՄՀ Հոգաբարձուների խորհրդի ներկայացուցիչների հետ	16:20	17:10	50 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:20	18:20	60 րոպե

	12.12.2023թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում պրոռեկտորների հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	10:40	11:40	60 րոպե
3.	Ռեսուրսների դիտարկում	11:50	13:10	80 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե
5.	Հանդիպում պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	14:30	15:30	60 րոպե
6.	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)	15:40	16:30	50 րոպե
7.	Հանդիպում ՈւԽ և ՈւԳԸ ներկայացուցիչների հետ հետ (10-12 հոգի)	16:30	17:10	40 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:20	18:30	70 րոպե

	13.12.2023թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Մասնագիտական զուգահեռ հանդիպում «Կերպարվեստ» ՄԿԾ պատասխանատու /ների հետ	Մասնագիտական զուգահեռ հանդիպում «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» ՄԿԾ պատասխանատու/ ների հետ	Մասնագիտական զուգահեռ հանդիպում «Հոգեբանություն» ՄԿԾ պատասխանատու /ների հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Մասնագիտական հանդիպում «Կերպարվեստ» ՄԿԾ դասախոսական կազմի հետ	Մասնագիտական հանդիպում «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» ՄԿԾ դասախոսական կազմի հետ	Մասնագիտական հանդիպում «Հոգեբանություն» ՄԿԾ դասախոսական կազմի հետ	10:30	11:20	50 րոպե
3.	Մասնագիտական զուգահեռ հանդիպումներ «Կերպարվեստ» ՄԿԾ ուսանողների հետ	Մասնագիտական հանդիպում «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» ՄԿԾ ուսանողների հետ	Մասնագիտական հանդիպում «Հոգեբանություն» ՄԿԾ ուսանողների հետ	11:30	12:20	50 րոպե

4.	<p>Զուգահեռ հանդիպում ստորաբաժանումների /կենտրոնների (Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչություն, Կրթության էլեկտրոնային կառավարման բաժին, Ուսանողական ակադեմիական հետազոծի (շաբժի) կազմակերպման բաժին, ՊԴԱ ուսումնական գործընթացների կառավարման բաժին,) ղեկավարների հետ</p>	<p>Զուգահեռ հանդիպում ստորաբաժանումների /կենտրոնների (Գիտահետազոտական կենտրոն, Սփյուռք գիտաուսումնական կենտրոն, Համալսարան-գործատու համագործակցության կենտրոն, Դիմորդների ներգրավման բաժին, Պրակտիկայի կենտրոն) ղեկավարների հետ</p>	12:30	13:20	50 րոպե
5.	<p>Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ</p>		13:30	14:30	60 րոպե
6.	<p>Զուգահեռ հանդիպում ստորաբաժանումների /կենտրոնների (Միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոն, Լրատվության և հանրության հետ կապերի կենտրոն, SS կենտրոն, Անձնակազմի հաշվառման բաժին) ղեկավարների հետ</p>	<p>Զուգահեռ հանդիպում ստորաբաժանումների /կենտրոնների (Ֆինանսատնտեսական և մատակարարման կենտրոն, Հաշվապահություն, արխիվ, Պրակտիկայի կենտրոն, Գիտական գրադարան) ղեկավարների հետ</p>	14:40	15:30	50 րոպե

7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	15:40	19:00	200 րոպե
----	--	-------	-------	----------

	14.12.2023թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում Կրթության որակի ապահովման կառավարման բաժնի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Բաց հանդիպում	10:40	11:20	40 րոպե
3.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	11:30	12:30	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:40	13:40	60 րոպե
5.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	13:50	17:20	210 րոպե
6.	Հանդիպում ՀՊՄՀ ռեկտորի և ղեկավար անձնակազմի հետ, այցի ամփոփում	17:30	18:00	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ


N		
1.	Ներքին և արտաքին շահակիցների կարիքների գնահատման կարգ, որտեղ ֆիքսված են նաև մեխանիզմների արդյունքներ և վերլուծություններ	2
2.	Գնահատման/կարիքների վերհանման գործընթացի հիմքեր	2
3.	ՄՈՒՀ-ի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ	3
4.	Դասախոսների, դոցենտների ծանրաբեռնվածություն /երեք տարակարգերի/	3
5.	Դասալսուսների վերաբերյալ արձանագրություններ	3
6.	Գնահատման համակարգի վերանայման հիմքեր եթե առկա են / 2014-ից հետո/ - 2018	3
7.	Կրթական ծրագրերի համեմատական վերլուծություններ / Հոգեբանությունից գատ/	3
8.	Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահների հաշվետվություններ	3
9.	Կերպարվեստ բակալավրի կրթական ծրագրի վերանայված առարկայական նկարագրիչները	3
10.	ՄԿԾ-ների մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ	3
11.	անզլերենով թեզ	3
12.	Յուրաքանչյուր ՄԿԾ-ից 5-ական ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզերի օրինակներ	3
13.	Որ կրթական ծրագրերով են հիմնականում շարունակում կրթությունը /վիճակագրություն/	4
14.	Մասնագիտական կողմնորոշման աշխատանքային խմբերի հաշվետվություն	4
15.	Արտահոսքի պատճառների պարզաբանման նպատակով իրականացված վերլուծություն	4
16.	Գիտաժողովի արձանագրություն	4
17.	Համալսարան-գործատու համագործակցության կենտրոնի կողմից աշխատանքի տեղավորված շրջանավարտների մասին հաշվետվություն	4
18.	Այլ բաժիններից տպագրված նյութեր /Հոգեբանական հետազոտություններ-ից գատ/	4
19.	Գիտաժողովներին ելույթ ունեցած ուսանողների ցանկ	4
20.	ՈՒԽ և ՈՒԳԸ վերջին նիստերի արձանագրություններ	4

21.	Սովորողների շրջանում անցկացրած հարցումների վերաբերյալ վերլուծություններ	4
22.	ՄԿԾ-ների, առարկայական նկարագրերի որակի բարձրացմանն ուղղված մանկավարժամեթոդական վերապատրաստմանը մասնակցած դասախոսների տվյալներ	5
23.	Դասախոսների կատարողական	5
24.	ՊԴ կազմի կայունության վիճակագրական տվյալներ	5
25.	Դոցենտների, պրոֆեսորների և դոկտորների թվի վիճակագրական տվյալներ	5
26.	Միջազգային և ներպետական գիտական կառույցների հետ պայմանագրեր	6
27.	Գիտական խորհրդի արձանագրություններ	
28.	Նախորդ 2 տարիներին տպագրված գիտական հոդվածները և թիվը՝ յուրաքանչյուր ուղղությամբ	6
29.	Ուսանող-դասախոս համատեղ գիտաժողովի տպագրված նյութերի ցանկ	6
30.	Օտալեզու գրականության վերաբերյալ տվյալներ	7
31.	Հաստիքացուցակ	7
32.	2024 թվականի նախահաշիվ	7
33.	Օտար լեզվի վերապատրաստում անցած դասախոսների տվյալներ	9
34.	Առցանց ուսուցումից բավարարվածության հարցման արդյունքների վերլուծություն	10
35.	Դասախոսն ուսանողի աչքերով հարցման վերլուծությունը	10
36.	Ստորաբաժանումների որակի պատասխանատուների աշխատանքային պլան	10
37.	Որակի պատասխանատուների ցանկը	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Լսարաններ
- Համակարգչային սրահներ
- Գրադարան
- Ընթերցասրահ
- Թանգարան
- Մարզադահլիճ,
- Մարզադաշտ,
- Նիստերի դահլիճներ,
- Երկու բուժկետ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՂԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՄԿԾ - Մասնագիտական կրթական ծրագրեր

ՄՈՆ - Մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ - Որակի ապահովում

ՈԱՇ - Որակավորումների ազգային շրջանակ

ՈՈՇ - Որակավորումների ոլորտային շրջանակ

ՊԴԿ - Պրոֆեսորադասախոսական կազմ

ՌԾ - Ռազմավարական ծրագիր

ՈւԳԸ - Ուսանողական գիտական ընկերություն

ՈւԽ - Ուսանողական խորհուրդ

ՈւՕ կազմ- Ուսումնաօժանդակ կազմ